Բոթչիլդ ընտանիքը միանում է Մասոնական Կարգին (ԱզատՄասոն կամ Ազատ Որմնադիր) 1700ի վերջերին: Այն ժամանակ թեև փառասեր բայց եւ հարաբերաբար փոքր ընտանիք էր. հաստատվել էին Ֆրանքֆորթ- Գերմանիա: Գործակցելով գաղտնի ընկերությունների հետ Բոթչիլդները ընդարձակում են իրենց դրամատնային գործառնությունը Եվրոպայի տարածքին, օգտվելով ԱզատՄասոնների միջազգային լայնատարած առևտրական եւ քաղաքական կապերից: Միւս կողմից, ԱզատՄասոնները տնտեսվելու կարիքը ունէին կառուցելու Աշխարհի Նոր Օրէնքը. Բոթչիլդները հայթայթում են գումարներ, այնպես որ օգուտը փոխադարձ էր:

1820ին Բոթչիլդները, Եվրոպայի դրամատնային իշխող ընտանիքն էր, հակակշռելով Ֆրանսայի, Անգլիայի, Ավստրիայի, Իտալիայի եւ Գերմանիայի արագորեն ընդարձակվող դրամատոները: Գործառնությունները ղեկավարվում էին հինգ Բոթչիլդ եղբայրների կողմից, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր մի երկրի: Այն դրամատոները որոնք դաշնակցեցին Բոթչիլդների եւ Մասոնական Կարգի հետ հաջողեցան:

1800 թվականների վերջերին Բոթչիլդները սկսեցին տնտեսել ամերիկեան ճարտարարվեստը: Նրանք կատարում էին այդ գործառնքը գերման Կորբուրգների միջոցով, որոնք Նյու Յորքի Քուին, Լեոբի բաժնետերերից էին: Այսպիսով Բոթչիլդ-Մասոնական շահերը հաստատվում էին այս երկրի տնտեսության մեջ: Հետագային Կորբուրգները եւ Քուին-Լեոբը պիտի լինէին Դաշնակցային Պահեստի գլխավոր բաժնետերերից մին, իսկ Փոլ Կորբուրգը Դաշնակցային Պահեստի Խորհուրդի առաջին նախագահը:

Բոթչիլդները Միացեալ Նահանգների եւ Եվրոպական գործակալների միջոցով տնտեսում են Բոքֆելլըր-քարյուղ հարստությունը, Գարնակի երկաթի կայսրությունը, ինչպես նաեւ Մարիման երկաթգիծի համակարգը: Բոքֆելլըրները խնամիանալով Բոթչիլդների հետ միասնաբար կը տնտեսում են մի շարք ամերիկեան գործառնքներ Չեյզ Մանհաթթան եւ Սիթի դրամատների միջոցով, որոնք Բոքֆելլըրների ընտանեկան դրամատներն են: Ժամանակի ընթացքին մի շարք նոր ընտանիքներ եւս խնամիանում են Բոքֆելլըրների հետ եւ 1937ին ազգի ամենից հարուստ 30 ընտանիքները կենսաբանականորեն կապվում էին նրանց հետ:

Շնորհիվ Բոքֆելլըրների կուտակած հարստության, այս ընտանիքները մնում են հավատարիմ դաշնակիցները «ընտանիքին»: Բոքֆելլըրները իրենց կարգին շնորհիվ Բոթչիլդների կուտակած վիթխարի հարստության մնում են հավատարիմ նրանց եւ նրանց Եվրոպական շահերին:

1890ին Օհայոյի Սթանդարդ Օյլը, որ պատկանում էր Ջոն Դ. Բոքֆելլըրին, գտում էր Ամերիկայի նաֆթի 90 տոկոսը: Խորհրդարանի կողմից կատարվող ստուգումները չէին ազդում ընտանիքի հառաջադիմության վրա: Նրանք միշտ մի քայլ առաջ էին դաշնակցային կառավարությունից:

Օրինակի համար 1911ին բարձրագոյն դատարանը որոշում է ընդունում որ Նյու Ջրբսիի Սթանդարդ Օյլը խախտել է երկրի օրէնքը: Ընկերությունը լուծարվում է ունեցվածքը եւ բաժանվում 33 տարբեր ընկերությունների միջեւ: Մակայն շուտով բացահայտվում է, թէ այդ 33 ընկերությունները պատկանում են նոյն անձերին (Ջոն Դ. Բոքֆելլըրը ուներ 25 առ հարիւր յուրաքանչյուրին մեջ):

Սթանդարդ Օյլին են պատկանում Նյու Ջրբսիի Սթանդարդ Օյլը (այսօր Էքսոն), Նյու Յորքի Սթանդարդ Օյլը (այսօր Մոբիլ), Քալիֆորնիայի , Ինտիանայի Սթանդարդ Օյլերը, Մարաթոնը, Ֆիլիփս 66ը եւ Շելլոնը:

1966ին խորհրդարանական ստուգումները, որ ղեկավարվում էր Թեքսասի պատգամավոր Բայթ Փուլմանի կողմից, բացահայտում է թէ երկրագունդի նաֆթի մեծագոյն յոթը ընկերությունները պատկանում են Բոքֆելլըր ընտանիքին: Ըստ «Նյու Յորք Թայմզ»ի Նյու Ջրբսիի Սթանդարդ Օյլը հակակշռում էր 321 տարբեր ընկերություններ:

1975ին Բոքֆելլըրները հակակշռում էին նաեւ Ատլանտյան Բիչֆիլդը (ARCO). Ենթադրվում է թէ հակակշռում են նաեւ Թեքսաքոն:

Դաշնակցային Պահեստի Համակարգը շատեր փորձել են լուծարել: Նրանցից մին է Չարլզ Լինդբերգը, նշանավոր օդաչուին հայրը, որ կարողացավ քննություն կատարել սակայն անօգուտ ու հետագային նրա կեանքը դժվարացնում են:

Լինդբերգի ճիգերը շարունակում է պատգամավոր Լուիզ Սգֆադենը: Երեք անգամ փորձում են վերջ տալ նրա կեանքին: Նախ փորձեցում են սպաննել մայրաքաղաք Ուաշինգթոնի մեջ, նորից փորձում են թունավորել բայց անհաջող, վերջապես թունավորում են Նյու Յորքի մեջ:

1950ականներին Թեննիսի պատգամավոր Գարոլ Բիսը այնպիսի հայտնագործումներ է կատարում, որ նոյնիսկ խորհրդարանը չէր հավատում:

1960 եւ 1970ականներին Թեքսասի պատգամավոր Բայթ Փուլմանը շարունակում է բացահայտումները բայց անօգուտ. նա ամենայնդեպս ասում է. «Դաշնային Պահեստի Համակարգի մասին մեր բացահայտումները ցնցիչ եւ գայթակղեցուցիչ են, բայց միայն արձանագրվում են խորհրդարանի օրակարգերի վրա եւ ժողովուրդը տեղեակ չի դրանց մասին»:

70 եւ 80ականներին պատգամավոր Լարի ՍգԴոնալդը հսկայական աշխատանք է կատարում Աշխարհի Նոր Օրենքի դեմ: Նա գրում է «Բոքֆելլըր Ծրար»ի նախաբանը: Գիրքը, որ բացահայտում էր Բոքֆելլըրների հասարտությունը եւ նպատակները: ՍգԴոնալդը զգուշացրեց ամերիկյան ժողովուրդը ասելով. «Բոքֆելլըր Ծրար»ը երեւակայություն չի, մեր ժամանակի ամենից ցնցիչ եւ սարսափելի պատմությունն է: Բոքֆելլըրների եւ նրանց դաշնակիցների նպատակն է հիմնել Աշխարհի Կառավարությունը, միացնելով գերդրամատիրությունը եւ համայնավարությունը մեկ վրանի տակ իրենց հակակշռին ենթակա»:

«Նրանք անցյալ մի քանի տարիներին օգտագործելով վիթխարի տնտեսական ուժ, փորձում են ստեղծել իրենց ենթակա քաղաքականություն նախ Ամերիկայի, ապա ամբողջ աշխարհի մեջ»:

«Դավադրություն»: Այո, ես համոզված եմ որ կա դավադրություն միջազգային իր ծավալով, ծրագրված սերունդների կողմից եւ անհավատալիորեն չար իր նպատակով»:

ՍգԴոնալդի զգուշացումը գրվել է Խորհրդարանական մակդիրը կրող թուղթի վրա, Նոյեմբեր 1975ին: Նա տարիներ սպասել է, որ մամուլը արձագանգի իր հայտնաբերումներին, բայց անօգուտ, եւ իջնում փողոց ու երկրի տարածքին սկսում խոսել ժողովուրդին: Ամենայնդեպս, ՍգԴոնալդի քաջ կեցվածքը վերջ է գտնում 31 Օգոստոս 1983ին, երբ նա զոհվեց Կորյական 007 թռիչքի ընթացքին, որ «դիպլոմատ» անցել էր սովետական սահմանը եւ «դիպլոմատ» վար առնված:

Լուրերը այս դիպլոմա մասին կարճ էին եւ շուտով մոռացվեցին, հակառակ նրան որ մամուլը եւ մայրաքաղաքը լավ գիտեին նրա կատարած աշխատանքին մասին: ՍգԴոնալդը գլխավորում էր խորհրդարանական հանձնաժողովը, որ աշխատում էր երեւան հանել վտանգավոր միջազգային դավ:

Միացեալ Նահանգների խորհրդարանականի առեւտրական ինքնաթիռի վրա գտնվելու հավանականությունը, որ պիտի վար առնվեր սովետական բանակի կողմից, միլիոնի վրա մեկ է: Հաշվի առած որոշ կետեր միլիարի վրա մեկ է: Հավատանք թէ սա զուգադիպություն է, հավատանք նաեւ որ ծերակուտական Ջոն Հայնզի ու նախկին ծերակուտական Ջոն Թավլըրի ինքնաթիռների խորտակումները նոյնպես զուգադիպություններ են:

Թավլըրը բացահայտորեն քննադատում է Արեւելյան հաստատությունը (այդպես է կոչվում մեկ-աշխարհի հետաքրքրությունները): Նա հարցեր ուներ խորհրդարանի մեկ-աշխարհ ջատագովների հետ: Նա գրեց մի գիրք, բացահայտելով իր կեցվածքը: Նրա ինքնաթիռը խորտակվեց 5 Ապրիլ 1991ին, գրքի տպագրությունից անմիջապես հետո:

Մի օր առաջ, Ապրիլի 4ին ծերակուտական Ջոն Հայնզի ինքնաթիռը խորտակվում է Ֆիլադելֆիայի մոտերը:

Հայնզը եւ Թավըրը անդամներ էին մեկ-աշխարհ միաբանության, որ հայտնի է որպէս Արտաքին Հարաբերությունների Խորհուրդ (Ա. Հ. Խ.): Նրանք շատ բաներ գիտէին: Արկածներ պատահում են, բայց բոլորն էլ զուգադիպությունն են ր են:

Սգոնալդի մահից հետո նրա գործը շարունակում է ծերակուտական Ջեսի Հովզը: Մինչեւ այսօր զարմանալիորեն ոչ մի բան չի պատահել:

Այս նահատակների շնորհակալ աշխատանքը դանդաղորեն հասնում է ժողովուրդին, բայց առանց մամուլի օգնության անկարելի է մի տեղ հասնել: Ժողովուրդը պետք է իմանա իրականությունը, որ ճնշում բանեցնի խորհրդարանի վրա: Բայց ինչպէս ճնշում բանեցնել մի խորհրդարանի վրա, որի անդամները հավատում են մեկ-աշխարհ սկզբունքին:

Երբ շարունակեցի պրպտումներս գտա, որ դրամը ինչպէս են գործածում ազդելու ժողովուրդին վրա:

Ամեն տարի միլիարավոր տոլարներ են «շահում» Դաշնակցային Պահեստի բաժնետերերը: Շահը առաջանում է Միացեալ Նահանգների կառավարության ծախսերից եւ ամերիկացի քաղաքացիին դրամատնային պարտքերի տոկոսներից, որի մի մասը մնում է Դաշնակցային Պահեստի մեջ: Այս դրամին մեծ մասը ինչպէս նաեւ մեծ ընկերություններից եւ դրամատներից շահված ամբողջ գումարները, որ պատկանում է նույն անձերին, ներդրվում է հարկ չվճարող հաստատությունների մեջ ապա վերաներդրվում է ամերիկյան եւ օտար ընկերությունների մեջ. այս խաբէությունից առաջացած ամբողջ գումարները օգտագործվում են ազդելու մեր տնտեսության վրա:

Այսպիսով փոքր մի խումբ առերեսույթ նվիրված մարդկության բարոյության, հիմնելով աշխարհի կառավարությունը, իշխում են աշխարհի տնտեսության վրա:

Չուգադիպություն չի որ այն ուժերը որոնք հիմնել են Դաշնակցային Պահեստը, անցկացրել են օրենքներ որոնք թույլ են տալիս հիմնել հարկից բացառված հաստատություններ: Անհատական հարկից զուրկ հաստատությունների պաշտոնն է պահպանել միջազգային դրամատոներից գոյացած հսկայական շահը: Այդ գումարներով բացահայտորեն ազդում են ամերիկյան կեանքի յուրաքանչյուր երեսույթի վրա:

Բիս Հանձնախումբը բացահայտում է Բոքֆելլըր-Գառնակի-Ֆորդ հսկաների անհավատալի ազդեցությունը ընկերային գիտությունների, կրթության վրա: Նրանք հսկայական գումարներ են տրամադրում երկրորդական եւ միջակ կազմակերպությունների: Երկրորդական հաստատություններն են Միացեալ Ազգերի Կազմակերպությունը եւ Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը:

Բիս Հանձնախումբի նպատակն էր գտնել, թէ այս մեծ ընկերությունների դրամը իրապէս ինչպէ՞ս է ծախսվում: Օրինակի համար, ընկերային գիտությունների պարագային հանձնախումբը գտնում է , որ Բոքֆելլըր հաստատությունը տնտեսում է Տր. Ալֆրետ Քինսի սեռային հարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունները: Քինսին իր ոչ-գիտական ուսումնասիրություններով քաջալերում էր սեռային ազատությունը (խառն սեռ): Եթէ հաճախել ես ուսումնարան կամ համալսարան, մի կիսամեակ անպայման ուսանած կը լինես Քինսիի գտածոները: Ես անցել եմ:

Կրթական դաշտը նույնպէս ենթակա է Բոքֆելլըր եւ դաշնակցություն գումարների: Իրականության մեջ շատ քիչեր կարողացել են փախչել միջազգային ուժերի ճիրաններից: Բիս հանձնախումբը բացահայտել է. «Ազգային Կրթական Միությունը (նաեւ տարբեր կրթական կազմակերպություններ) քաջալերում են աշակերտը ուսումնասիրել ընկերաբանություն եւ աշխարհաբանություն, որպէսզի սովոր լինեն մեկ-աշխարհ գաղափարին»: Այնքան մեծ է այս հաստատությունների հակակշիռը կրթության վրա, որ միայն այս նյութի մասին կարելի է գիրք գրել:

Բայց ամենից ավելի Բոքֆելլըր եւ դաշնակիցներ ազդել են արտաքին քաղաքականության վրա: Ընկերությունը իր գաղափարները տարածում է Միացեալ Ազգերի Կազմակերպության, Խաղաղականի Հարաբերություններ Հաստատության եւ Արտաքին Հարաբերությունների Խորհրդի միջոցով. սա մի քանին է, չթուելու համար բոլորը: Նրանց

ազդեցությունը հասել է կառավարություն, խորհրդարան եւ պետություն: Ընդհանուր հաստատել է, նվազագույն մեկ օտար ընկերություն մասնակցել է ձեռավորելու մեր արտաքին քաղաքականությունը: Նշանավոր ճարտարարվեստական եւ աշխարհական բրիտանացի Մեսիլ Բոդար, որ դաշնակից էր Բոջիլիդների եւ ԱզատՄատնների հետ: Նա իր հարստությունը թիզել էր հարավ Ափրիկեյի ադամանդի հանքերից, սեւ գերիների քրտինքից եւ արյունից: Նրա մահվանից հետո հաստատվում է Բոդար կրթական հիմնադրամը, որի նպատակն է աշխարհացումը:

Մինչեւ 1953, 1372 Բոդարի ամերիկեան աշակերտներից 431ը եղել են դասատու, 113ը՝ կառավարական բարձր պաշտոնյա, 70ը՝ մամուլի աշխատակից, 14ը՝ հաստատությունների պատասխանատու, ինչպես Բոքֆելլըր հաստատութեան նախագահը, Գուգնհայմ հաստատության տնօրէնը եւ Գառնակի հաստատութեան նախկին նախագահը:

Վերջերս նույնն է անում Նուպել մրցանակը, պարգեւատրելով մեկ-աշխարհ քաջալերողները:

Հակառակ այս քննադատություններին, մեկ-աշխարհ քարոզողների ազդեցությունը տիրական է ընկերային գիտությունների, կրթության եւ արտաքին քաղաքականության վրա, քանի լուրջ ընդդիմություն չկա: Եթե նույնիսկ ընդդիմություն գոյանա, բաղդատած նրանց ունեցած միջոցներին, ոչինչ է:

Չարի ուժը միշտ ավելի գորավոր է, որովհետեւ գիտեն դրամ կուտակելու ապա ուրիշներ օգտագործելու ձեւերը:

Գլուխ 2

Քաղաքականություն Աշխարհի

Այն նույն ուժերը, ինչպես տնտեսության, նույնպես քաղաքականության մեջ, առաջ են մղում իրենց ծրագրերը: Առաջին փորձառությունս ունեցա Օայրագույն Արեւելք: Պատահամաբ ծանոթացա կարեւոր առեւտրականի, որ միեւնույն ժամանակ Ասոշիեթըտ փրեսի անդամ էր: Երբ նա տեսավ, որ մենք երկուքս ունենք նույն կարծիքը նույն հարցերի մասին, ցած ձայնով սկսեց բացատրել, թե ի՞նչ է նշանակում մեկ-աշխարհի կառավարություն միջազգային դավադրությունը: Նա պայուսակից մի քանի թուղթեր հանեց եւ երկարեց ինձ: Այդ թղթերի վրա նշված էին Միացեալ Նահանգների քաղաքացիներ, որոնք ընդգրկվել էին դավին մեջ:

Այդ թղթի վրա գրված էր ամերիկացի ղեկավարների, կառավարական բարձրաստիճան անդամների, ճարտարարվեստի, կրթության, մամուլի, բանակի եւ տնտեսության նշանավոր դեմքերի անունները: Նույն անձերն էին որոնց ես հանդիպեցի երբ ուսումնասիրում էի աշխարային տնտեսությունը: Կարծես հասարակ հայտարար գոյություն ունեւր ցանկին վրա գրված անունները Արտաքին Հարաբերությունների Խորհրդի կամ Եռակողմ Հանձնաժողովի անդամներ էին, երբեմն երկուքը միասին:

Այդ զիշեր հանգիստ չկարողացա քննալ: Ես ինձ հարց էի տալիս. ի՞նչ է նշանակում այս բոլորը եւ ինչպե՞ս այն կարող է ազդել ապագայիս վրա: Այս ալ գուգադիպությունն է:

Մ. Նահանգներ վերադարձիս սկսեցի մանրակրկիտ ուսումնասիրել Արտաքին Հարաբերությունների Խորհուրդ եւ Եռակողմ Հանձնաժողովն ու հարակից կազմակերպություններն ու մեկ-աշխարհի շարժումը: Ուսումնասիրությունը սպառիչ էր:

Երկու տարի ետք կարող էի ասել, թե ինչ է Ա. Հ. Խ.ի նպատակն ու առաքելությունը եւ նրա ազդեցությունը Միացեալ Նահանգների վրա:

Այս պատմությունը սկսվում է մի կազմակերպությամբ, որ կոչվում է Լուսավորյալները (Illuminati):

Լուսավորյալները

Լուսավորեալները գաղտնի կարգ էր, հիմնված՝ Ինգլշդաթ, Պավարիա (Գերմանիա) 1 Մային 1776ին, Ադամ Ուեսշաուբի կողմից, որ նշանավոր ԱզատՄասուն էր: Կազմակերպությունը բարձր կամ լուսավորյալ ԱզատՄասունություն է, կարեւոր կարգ է ընդհանուր դասավորման մեջ: Նրա գործունեությունը կապակցված է Ֆրանսական Մեծ Արեւելք Մասունական Օթյակի հետ: Անունը նշանակում է «լուսավորվածները», որոնք սովորում էին Լուսավորիչի գաղտնիքները, լույսի աղբյուրը ըստ լուսավորյալ ԱզատՄասունների վարդապետության:

Ուեսշաուբը գրում է.-

«Մենք պետք է մեր կարելին անենք որպեսզի մեր անդամները հասնեն բարձրագույն պաշտոնների: Այդպիսով միայն մենք կը կարողանանք ղեկավարել մարդկությունը, գրավումը պետք է լինի ծրագրյալ ու գաղտնի»:

Հաջողելու միակ պայմանը գործելակերպն ու անդամների անունները մնալու են գաղտնի: Սկսնակները ծանրորեն երդվում էին եւ երդման մեջ հստակ ասվում էր, թե ինչ կարող է պատահել նրանց եթե թողնեն կարգը կամ բացահայտեն նրա նպատակն ու ծրագիրները: Նամակագրությունը նշաններով եւ ծածկանուններով էր տեղի ունենում: Ուեսշաուբի ծածկանունը Սպարտակուս էր:

Հաջողությամբ պսակվեց 16 Հուլիս 1782ին գումարված Մասոնական համագումարը: Մասնակցում էին բոլոր գաղտնի միաբանությունները ինչպես Մարթինականները, ԱզատՄասոնները եւ Լուսավորյալները, որոնց թիվը աշխարհի մեջ հասնում էր երեք միլիոնի: Այս ժողովը Լուսավորյալներին առիթ ընձեռեց իրենց հակակշիռը տարածել Եվրոպայի բոլոր օթյակների վրա, դառնալով մեկ-աշխարհի շարժումի անառարկելի ղեկավարները: Պատմաբան Նեստա Ուեբսթըրը գրում է.-

«Այդ սուկալի ժողովի որոշումները արտաքին աշխարհին հայտնի չեն, նույնիսկ ներկաները սահմոկել էին իրենց ղեկավարների ծրագրերից, այդպիսի համեստ ԱզատՄասոն էր Վիրեո Գոնտը, որ ժողովից հետո ասաց.- ես ձեզի չպիտի ասեմ այդ որոշումները, բայց նրանք շատ ավելի լուրջ են քան դուք կարծում էք: Հյուսվող դավը այնքան լավ է մտածված, որ ոչ թագավոր եւ ոչ էլ եկեղեցի կարող է փրկվել»: Դրանից հետո Գոնտը սուկումով էր խոսում ԱզատՄասոնների մասին:

Այդ համագումարին որոշվում է լուսավորյալ ԱզատՄասոնների կեդրոնը Պավարիայից փոխադրել Ֆրանկֆորդ, որ Բոթչիլդների ամրոցն էր: Երկուքի համագործակցությունը կատարյալ էր եւ ազդեցությունը համապարփակ Եվրոպայի վրա:

Պավարիո կառավարությունը անմիջապես հակազդում է եւ գրավում կարգի գաղտնի փաստաթղթերը եւ պատճենները ուղարկվում Եվրոպայի ղեկավարներին:

Ամենայնդեպս, այն ղեկավարները որոնք կարգի ազդեցության տակ էին գտնվում, անտեսում են փաստաթղթերը. մնացեալը այնքան անիրական ու անհավատալի են գտնում դրանք, որ կարեւորություն չեն տալիս:

Չհավատալը ԱզատՄասոնների օգտին էր: Համեստ մարդիկ չեն կարող հավատալ, թե կարող է լինեն անհատներ, որ փորձեն հակակշռել աշխարհը սատանայի օգտին: Կարծեք Ճեյմըս Բոնդյան ֆիլմի նյութ է:

Անհավատալի թվացող Մատանայական Աշխարհի նոր կարգը իրականություն է:

Պավարիո կառավարությունը դատապարտում է կարգի անդամների մի մասը:

Ուեյսշաուրթը պատասպարվում է մի իշխանի մոտ ու մնում է այնտեղ մինչեւ իր կեանքի վերջը, 1811:

Մինչ այդ լուսավորյալներից շատեր պատասպարվել էին տարբեր երկիրներ, նրանց շարքին՝ Միացեալ Նահանգներ: Մինչեւ 1776 նվազագույնը Ամերիկայի Միացեալ Նահանգների երեք նախագահներ զգուշացրել էին ժողովուրդը Լուսավորյալների գործունեությունից երկրում: Ջորջ Ուաշինկթըն զգուշացրել է մի քանի անգամ: Երանի ժամանակին լսելիք Ուաշինկթընի ասածները:

Թեւ 1780ականներին Լուսավորյալների ղեկավարությունը դադրում է գոյություն ունենալէ, բայց աշխարհի նոր օրենքը կառուցելու գործը շարունակում է Ֆրանսայի Մեծ Արեւելք Օթյակը:

ԱզատՄասոնությունը իր անվամբ երբեք չի աշխատել: Որպեսզի հաջողացնի իր ծրագիրները, հիմնում է տարբեր կազմակերպություններ, ինչպես Լուսավորյալները, որոնց տալիս է հստակ գործունեություն: Այսպես, եթե նրանց գործունեությունը չհաջողի ԱզատՄասոնությունը կը մնա անվնաս:

Լուսավորյալ ԱզատՄասոնների առաջին գլխավոր «հաջողությունը» Ֆրանսիական հեղափոխությունն էր, ժագաբին Միաբանության եւ Նափոլեոն Բոնապարտի միջոցով: Լուսավորյալ ԱզատՄասոնությունը օգտվել է Վոլթերեն, Բոբես Փիերեն, Դանտոնեն, Մարատեն, որոնք Մասոն էին: Ժագաբին Միաբանության նպատակները եւ կապերը բացահայտվեցին երբ Ուեյսշաուրթին կոչեցին «Մեծ Հայրենասեր»:

Մ. Ն. անկախության հայտարարությունից անմիջապես հետո, Եվրոպական ուժերը սկսեցին միջոցներ գտնել հակակշռելու Ամերիկայի երիտասարդ դրամատոնային համակարգը:

Լուսավորյալ ԱզատՄասոնները մասնակիորեն պատասխանատու են Մ. Նահանգների քաղաքացիական կռիվների սկսելուն 18րդ դարի կեսերին: Չարլոթոն, Հարավային Քարոլայնա, որտեղ սկսվեց անջատողական շարժումը, գտնվում էր Սկոտլանդական

Ծեսի ԱզատՄասունների կեդրոնատեղին: Սկովտիական Ծեսի կեդրոնատեղին հետագային փոխադրվեց մայրաքաղաք Ուաշինգթոն, որտեղ մնում է մինչև այսօր:

Նախագահ Արթուր Լինքոլնը զգուշացնում է ամերիկացի ժողովուրդը ասելով.- «Դրամը կուտակվելու է մի քանի հոգիների մոտ եւ հանրապետությունը քանդվելու է»:

Վերջապես 1913ին հաջողությամբ է պսակվում Լուսավորյալ ԱզատՄասունների ճիգերը. հիմնում են Դաշնակցային Պահեստի Համակարգը, շնորհելով Եվրոպայի Լուսավորյալներին մնայուն դեր այս երկրի տնտեսության մեջ, առիթ տալով որ հասնեն իրենց նպատակներին:

Այդ նպատակներից մին էր Արտաքին Հարաբերությունների Խորհուրդի հիմնադրումը, որի կազմավորման մեջ մեծ դեր ունի Էդուարտ Մանդել Հաուզը: Հաուզի հայրը Բոթչիլտի գործակատար էր. քաղաքացիական պատերազմին մեծ հարստություն է թիզում, հարավին հայթայթելով կարեւոր բաներ Ֆրանսիայից եւ Անգլիայից:

Գնդապետ Հաուզը, այդպես էին կոչում, Բոթչիլդ-Ուորպըրկ-Բոքֆելլըր խմբի գործակատարն էր Սպիտակ Տան մեջ: Հաուզը նախագահ Ուիլսոնի ամենից վստահելի խորհրդականն էր: Հաուզը այն էր ինչ հետագային Հենրի Քիսինջըրը եղավ Բիչըրտ Նիքսոնի համար:

Նրա հաջողությունները շատ են: Նա համոզում է Վուտրո Ուիլսոնը որ Դաշնակցային Պահեստի որոշումը վերածի օրենքի: Հետագային հասկանալով, թե ինչպիսի մեծ սխալ է գործել, ասում է.- «Ես անգիտակցաբար կործանեցի երկիրս»:

Նա շուտով Միացեալ Նահանգները մխրճում է Համաշխարհային Առաջին Պատերազմի մեջ (Ապրիլ 1917): 1918ին, պատերազմի ավարտին հետ, աշխուժորեն աշխատում է կազմակերպել Ազգերի Դաշնությունը: Բոքֆելլըր եւ ընկերություն դրամով տնտեսված Դաշնությունը ծառայելու էր որպես քաղաքական առաջին քայլ դեպի աշխարհի կառավարություն:

Այնուամենայնիվ, հակառակ Ուիլսոնի ջանքերին, երկիրը չի մտնում Դաշնության մեջ: Ամերիկացի ժողովուրդը ճնշում է խորհրդարանի վրա որպեսզի մերժի դեպի աշխարացում տանող շարժումը:

Մ. Ն.-ի Ազգերու Դաշնության չմասնակցիլը գորավոր հարված էր միջազգայնականներին: Աշխարհի կառավարություն չի կարող գոյանալ առանց աշխարհի առաջին ուժին: Բայց այս պարտությունը ժամանակավոր էր: Աշխարհականները հասկանում են, որ պետք չէ անտեսեն ամերիկացի ժողովուրդի կամ խորհրդարանի ուժը: Որպեսզի նման դեպք չկրկնվի կազմակերպում են Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը (Ա. Հ. Խ.):

Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը

29 Յուլիս 1921ին կազմվում է Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը:

Կազմակերպության հիմնադրամը գոյացնում են Ժ. Փ. Մորկանը, Ջոն Տ. Բոքֆելլըրը եւ ընկերություն: Նոյն անձերը որոնք հիմնել էին Դաշնակցային Պահեստը:

Արտաքին Հարաբերությունների Խորհուրդի տնօրեններ եղած են Ադլայ Սթիվընսըն, Սայրըս Վանս, Ջրիկնյու Բրզենինսքի, Ջորջ Բուշ, Հենրի Քիսինջըր, Բիչըրտ Չենի եւ ուրիշներ:

Արտաքին Հարաբերությունների Խորհուրդի ամենից ազդեցիկ դեմքը եղել է Դեյվիդ Բոքֆելլըրը, Ջոն Դ. Բոքֆելլըրի թոռնիկը: Տնօրինել է կազմակերպությունը երեսուն վեց տարի, ապա նախագահել է 1970-85 եւ մնում է կազմակերպության պատվոյ նախագահ, միեւնոյն ժամանակ լինելով Չեյզ Մանհաթանի նախագահը:

Բոքֆելլըրները շարունակում են տնօրինել Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը: Այսօր նոր սերունդը շարունակում է ավանդությունը:

Խորհուրդը այսօր ունի 670 անդամ, որոնք Ամերիկայի ամենից երեւելի մարդիկն են, ինչպես կառավարական, առեւտուրի, կրթության, բանակի, լրատվության եւ դրամատների

բարձր պաշտոնյաներ: Կեղրոնատեղին գտնվում է Նյու Յորք, ունի 38 մասնաճիւղեր տարածված Մ. Ն.-ի գլխավոր քաղաքների մեջ:

«Նրանց նպատակն է ջնջել Մ. Ն.-ի անկախությունն ու ազգային ազատությունը», ասում է 16 տարի կազմակերպության անդամակցած Ադմիրալ Չեսթեր Ուորդը:

Հետաքրքրականը այն է, որ շատ քիչեր գիտեն այս կազմակերպության մասին: Նրանց նպատակն է Մ. Ն.-ի Սահմանադրական Հանրապետությունը վերածել ստրուկ երկրի, Մեկ Աշխարհի բռնատիրության մեջ:

Փետրվար 1950ին Ա. Ն. Ֆ.-ի անդամ Ջեյմս Ուորբերկը հաստատում է. «Մենք, ուզեք կամ ոչ, ձեր հավանությամբ կամ նվաճելով ունենալու ենք Մեկ Աշխարհի կառավարություն»:

Ա. Ն. Ֆ.-ի լրաբերը, «Արտաքին Գործեր» Ապրիլ 1974 համարում գրում է.- «Աշխարհի Նոր Օրենքը կառուցվելու է վարից դեպի վեր եւ ոչ թե վերից դեպի վար»: Տարբեր տեղ.- «Միջազգային Օրենք, որ ընդգրկելու է նաեւ համայնավար կոչված երկիրները»:

Աշխարհի Նոր Օրենքը կամ Միջազգային Նոր Օրենքը դարձվածքը առաջին անգամ բացահայտորեն գործածվել է 1990ի աշնան: Այսօր գործածվում է ամեն րոպե եւ գործածվելու է այնքան, որ մարդկության ականջները լցվեն ու ոչ ոք զարմանա երբ այդ օրը գա:

Աշխարհի Նոր Օրենքը դարձվածքը գործածվել էր ԱզատՄասոնների կողմից, Ուեստհաուսի ժամանակներից եւ նշանակում էր աշխարհի կառավարությունը, որ երբ հաստատվի նրա վրա իշխելու է Հակաքրիստոսը:

Լուսավորչյալ ԱզատՄասոնների գաղտնի խորհրդանշաններից մին, երկմաս բուրգը, տպագրվել է տոլարի վրա Ֆրանքլին Ռուզվելթի օրերին: Ռուզվելթը երեսուն երեք աստիճանի Մասոն էր եւ գործակից Ա. Ն. Ֆ.-ի: Բուրգի վերի մասը՝ անջատված մասի վրա նկարվել է Օզիրիսի կամ Պաալի ամենատես աչքը: Բուրգի տակ լատիներեն գրվել է. «Novus Ordo Seclorum», որ նշանակում է ժամանակների Նոր Օրենքը կամ Աշխարհի Նոր Օրենքը: Այս մասոնական նշանը 1782ին դրոշմվել էր Մ. Ն.ի պաշտօնական կնիքի վրա: Գաղտնի չէր, բայց 150 տարի մնացել է անհայտ մինչեւ որ տպագրվեց մեկ տոլարանոց Դաշնակցային Պահեստի դրամի վրա:

Երբ այս խորհրդանշանը պատկերվել է Աշխարհի Նոր Օրենքը սկզբնական գաղափար էր, այդ է նշանակում բուրգի վերի մասի անջատումը: Երբ Աշխարհի Նոր Օրենքը գործադրվի եւ մեկ կառավարություն լինի բուրգի երկու մասերը միանալու են: Մասոնական նվիրապետությունը եւ այլ գաղտնի ընկերությունների կարգը նման է բուրգի: Երբ շարունակեցի պրպտումներս պարզվեց որ Ա. Ն. Ֆ.-ը մի շարք նմանություններ ունի Լուսավորչյալների հետ:

Ա. Ն. Ֆ.-ի սկզբունքն է գաղտնի պահել անդամների անունները. այդ պատճառով ժողովուրդը շատ քիչ բան գիտի այս կազմակերպության մասին:

Այս գաղտնիության նպատակն է ազդել Մ. Ն.-ի քաղաքականության վրա: Ա. Ն. Ֆ.-ի անդամները նշանակվում են, առայժմ որպես խորհրդատու, մինչեւ լրիվ հակակշռեն կառավարությունը: Այս մարտավարությունը գործադրվում է նաեւ կրթության, լրատվության, բանակի, դրամատների բնագավառներում մինչեւ գա ժամանակն ու հակակշռեն բոլորը:

Գործելակերպը պարզ է, ազդել ընկերության մտածելաձևին վրա մինչեւ մի օր արթնանանք ու տեսնենք, որ մեկ աշխարհի կառավարությունը իրականություն է, ուզենք կամ ոչ, ու փոխանցումը եղել է բնական:

Այս բոլորը ոնց որ սուտ լինի, բայց եթե թափանցես նրանց գաղտնիքների մեջ պարզ կը լինի, թե որքան գործ են կատարել:

Ա. Ն. Ֆ.-ը մեծ ընկերությունների օգնությամբ հաջողեցնում է իր ծրագիրները: Նրանք 1920-30ականներին հակակշռում են ժողովրդավարական կուսակցությունը, իսկ 1940ականներին ոտք են դնում Հանրապետական կուսակցությունից ներս:

Համաշխարհային Երկրորդ Պատերազմի սկզբին Ֆրանքլին Ռուզվելթի օգնությամբ հակակշռում են Պետությունը եւ, հետեւաբար, մեր արտաքին քաղաքականությունը:

Միացեալ Ազգերը

Համաշխարհային Երկրորդ Պատերազմի ավարտին Մ. Ն.-ը միանում է Միացեալ Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ):

1945ին ՄԱԿի հիմնադրման հանդիսության Մ. Ն.-ի կազմում ընգրկվել էին 47 ԱՀԽի անդամներ:

Որպեսզի Մ. Ն. չհրաժարվեր անդամակցել ՄԱԿին, ինչպես եղել էր Ազգերու Դաշնության պարագային, կեղծոնը հիմնում են ամերիկյան հողի վրա:

Հողը, որի վրա հետագային կառուցվելու էր ՄԱԿի շենքը, նվիրում է Ջոն Տ. Րոքֆելլըր կրտսերը:

Մ. Ն.-ը անդամակցելով ՄԱԿին, ԱՀԽը հաջողացնում է իր առաջին նպատակը: Օգտվելով կրթության եւ լրատվության վրա ունեցած ազդեցությունից ԱՀԽը սկսում է ամերիկացի ժողովուրդին լավ ձեռով ներկայացնել ՄԱԿը:

ՄԱԿի ղեկավարները կատարել են մի շարք հանցանքներ: Ալջեր Հիւր խորհրդային լրտես էր, Ու Թանը գովել է Լենինը որպես ազգերի խաղաղ գոյակցության ջատագով, իսկ Քուրտ Ուալդհայմը եղել է Նացի Բանակային Համաշխարհային Երկրորդ Պատերազմին: Հակառակ այս բոլորին ամերիկացի ժողովուրդը ՄԱԿը ընդունում է որպես «լավ կազմակերպություն»: Լրատվությունը ինչէր կարող է իրականացնել:

ԱՀԽը ոչ միայն հովանավորում է ՄԱԿը, այլ ստեղծիչն է մի շարք այլ խմբերի, ինչպես Բիլդերբերգերները, Հոմի ակումբը եւ Եռակողմ Հանձնաժողովը. սրանցից յուրաքանչյուրը ունի հատուկ պաշտոն կերտելու Աշխարհի Նոր Օրենքը:

Հաջողացնելու համար աշխարհի կառավարությունը, նվիրապետությունը երկրագունտը բաժանել է վարչական շրջանների. սա համապատասխանում է ՄԱԿի հրովարտակին, որ քաջալերում է աշխարհի կառավարության հաստատումը շրջանների հիմքի վրա [գլուխ 8, կետ 52(2-3) եւ 53(1)]: Ռազմավարությունը պարզ է. միացնել երկիրները կազմելով շրջաններ: Սա նշանակում է ազգերի ինքնիշխանության վերջը, հեշտացնելով աշխարհի կառավարության կազմությունը:

Այնուամենայնիվ, շուտով պարզվում է, քաղաքականորեն անկարելի է աշխարհի կառավարություն կազմել. հետեւաբար որոշեցին աշխարհը բաժանել տնտեսապես, կազմելով շրջանային առեւտրական միություններ:

Բիլդերբերգըրը խումբի պարտականությունն է Եվրոպան տնտեսապես միացնել:

Բիլդերբերգըրները (Bilderbergers)

1954ին Բիլդերբերգըրը հյուրանոցում -Հոլանդա- հավաքվում են ՆԱՏՕի անդամ երկրների հարյուր ընտրյալ անդամներ եւ հիմնում են այս կազմակերպությունը, որ շաղկապված է ԱՀԽի հետ:

Տնտեսվում է մի շարք մեկ-աշխարհի հաստատությունների կողմից, ինչպես Րոքֆելլըր եւ Ֆորդ ընկերությունները: Բացահայտ նպատակն է Եվրոպան վերածել մի շրջանի: Գաղափարը հղացել է Ֆիատ-ի ղեկավար Ջիովաննի Ակնելին, որ ասել է. «Մեր նպատակն է Եվրոպան միացնել, այնտեղ որ ձախողեցին քաղաքագետները մենք հույսով ենք որ պիտի հաջողենք»:

Եվրոպական Հասարակաց Շուկան (որ քաղաքական միություն ալ է) Բիլդերբերգըրը խմբի արտադրությունն է:

Բիլդերբերգըրների եւ քոյր կազմակերպությունների, ինչպես ԱՀԽի եւ ՄԱԿի, բացարձակ նպատակն է հաստատել աշխարհի կառավարությունը: Բիլդերբերգըրների փիլիսոփայությունը հստակորեն բացատրել է խմբի առաջին նախագահ, Հոլանդացի իշխան

Բերնարը, որի ընտանիքը տերն է Շել քարյուղի ընկերության: Նա ասել է. «Մեր մեծագույն դժվարությունն է հասկացնել հասարակ ժողովուրդին, որ իր ազգայնականությունից մի մաս կորցնելով շահելու է գերազգայնականության... սա է դժբախտությունը»:

Ամերիկյան նշանավոր Բիլդերբերգերներ են Դեյվիդ եւ Նելսոն Բոքֆելդերները, Հենրի Քիսինջըրը, Ջրիկնյու Բրոքհինսքի, Սայրուս Վանս, Ռոբերթ Մքնամարա, Դոնալդ Ռամսֆելդ, նախագահ Ջերալդ Ֆորդ եւ այլն: Ամերիկյան Բիլդերբերգերները ԱՀԽի ներկա կամ նախկին խորհրդականներ են: Եվրոպական անդամները վարչապետներ, արտաքին գործերի նախարարներ եւ տնտեսության ղեկավարներ , ինչպես Հելմուտ Շմիտ, Բարոն Էդմոնտ Բոթչլիդ, Ժիսքար դ'Եսթեն, հիշելու համար մի քանիսը:

Հռոմի Ակումբը(Club of Rome)

Ուրիշ կազմակերպություն , որի անդամների մեծ տոկոսը Ա. Հ. Խորհրդականներ են: Ըստ նրանց այս ակումբը անպաշտոն կազմակերպություն է, անդամները հարյուրի չեն հասնում, որոնք... «գիտնականներ, կրթիչներ, տնտեսագետներ, բանասերներ, ճարտարարվեստականներ եւ ազգային ու միջազգային քաղաքական ծառայության պաշտոնյաներ են»... ներառյալ Բոքֆելդը ընտանիքի անդամները: Հռոմի ակումբին մաս են կազմում 25 ԱՀԽ անդամներ:

1968 Ապրիլին տասը երկիրների ղեկավարներ հավաքվում են Հռոմում: Հանդիպումից հետո հայտարարում են, թե ունեն աշխարհի խաղաղության ու զարգացման լավ լուծումներ: Ամենայնդեպս, նրանց լուծումները ունեն մի ուղղություն՝ հիմնել աշխարհի կառավարությունը, ազգային անկախությունների հաշվին:

Հռոմի ակումբը մեղադրվում է նաեւ աշխարհը շրջանների բաժանելու ապա վերամիացնելու մեջ: Մեկ-աշխարհի կառավարության ծրագրավորումը կատարում է Հռոմի ակումբը:

Ակումբի ուսումնասիրություններն ու հանձնարարականները գաղտնի տեղեկագրություններով ուղարկվում են հատուկների գործադրվելու համար: 17 Մեպտեմբեր 1973ին Ակումբը հրատարակում է այդպիսի տեղեկագրություն, որ կոչվում է «Աշխարհացած Համակարգի Երջանային Ընդունված Ձեւը»: Պատրաստվել են Միհայլս Մեսարովիչը եւ Էդուարդ Փեսթելը:

Տեղեկագիրը հայտնում է, թե Ակումբը բաժանել է աշխարհը տասը քաղաքական-տնտեսական շրջանների, որոնք կոչվում են «թագավորություններ»:

1974ին Մասարովիչը եւ Փեսթելը հրատարակում են իրենց ուսումնասիրությունը, որ կոչվում է «Մարդկությունը Դարձվածքի Վրա»: Գիրքի 161-164 էջերի վրա գծագրել են այդ տասը շրջանները, բայց այս անգամ նրանք ջնջել էին «թագավորություն» բառը: Պարզ է, նրանք չէին ուզում որ մարդկությունը իմանա Ակումբի քաղաքական փառասիրության մասին:

Մտահոգիչը այն է, որ Հռոմի Ակումբը ընտրել է ոգեկան ուղություն, խորհրդապաշտ ոգեկանություն: «Մարդկությանը դարձվածքին վրա» գիրքի 151 եւ 152 էջերի վրա շատ հստակ բացատրված է Համաստվածությունը – նոր ժամանակավորների հավատքը, այսինքն հաղորդակցություն բնության եւ գերազանցին հետ, գործածելով «ԼՕՕՍՖԻԲ» (NOOSERE) եզրը, որ մատնանշում է մարդկային ցեղի հավաքական խելացությունը: Այս արտահայտությունը բառարանում չէք գտնի: Գործածելով Նոսոֆերը ընդունում են Փիեր Թեյլիարդ Դը Շարդենի փիլիսոփայությունը, ֆրանսացի Ջիզուիթ կղերական (մահացած), որի տարրինակ գաղափարներն ու գրությունները մեծ ազդեցություն են գործել նոր ժամանակ շատժումի վրա:

Իրականության մեջ՝ Շարդենն է ուղղություն տալիս:

Գիրքի եզրակացության մեջ նշվում է. «Փիլիսոփաները, հին ժամանակներից, գոյության միությունը եւ բնության տարրերի կապակցությունն են շեշտում, մարդ եւ մտածում:

Այնուամենայնիվ, նրանց սովորեցրածը քիչ է անդրադարձել քաղաքական եւ ընկերային հարցերի վրա: Հռոմի Ակումբը եւ նրա մասնաճյուղերը ուզում են այս բոլորը փոխել»:

Հռոմի Ակումբի նոր ժամանակ շարժումի անդամակցության շարքին են Միացյալ Նահանգների չորս խորհրդականներ, ՄԱԿի պատասխանատուներ եւ մարդիկ, որոնք կապ ունեն Գառնակի ու Բոքֆելլըր հաստատությունների հետ:

Այս մարդիկն են Աշխարհի Լոր Օրենքը հաստատողները: Չսխալվեք, նրանք քաղաքական նպատակներ են հետապնդում:

Եռակողմ Հանձնաժողով

1950 եւ 1960ական թվականներին, նոյն խորհրդարանական ղեկավարները որոնք պայքարում էին Դաշնակցային Պահեստի Համակարգի դեմ, սկսեցին բացահայտել ԱՀԽը: Նրանք իրենց կողքին ունեին հարցին էությունը հասկացող քաղաքացիների օգնությունը: Այս ճիգերի որպես արդյունք 60ականների վերջավորության եւ 70ականների սկիզբներին կատարված խորհրդարանական ստուգումների իրականությունը, հակառակ լրատու միջոցների լռության, սկսում է հասնել ամերիկացի ժողովուրդին: Առաջին անգամ ամերիկացիների մեծամասնությունը իմանում է, թե Միացյալ Նահանգների ճարտարարվեստի մեծամասնությունը ղեկավարվում է մի քանի հաստատությունների կողմից:

Աշխարացումը ծրագրողները անմիջապես հասկանում են, որ պետք է նոր միջոց հնարեն, անցեալ 50 տարիների հաջողությունը պահպանելու համար: Նրանք ամերիկյան եւ եվրոպական գումարներ են հոսեցնում ճափոնական ճարտարարվեստականների եւ արաբ ջոջերի գրպանները, որպեսզի գնեն արեւմտյան ընկերություններ եւ հողեր: Այսպես, եթե ամերիկացի ժողովուրդը պիտի այպանի մեկը իր դժվար ժամանակների համար, դա ճափոնացիներն եւ արաբներն են եւ ոչ թե Բոքֆելլըրներն ու նրանց դաշնակիցները, որոնք իրականության մեջ նրանք են պատասխանատուները:

Թեեւ արաբ ղեկավարները որեւէ ժամանակ իրար հետ չէին համաձայնվել, հանկարծ մի օրվա մեջ միանում են եւ 1973ին աշխարհը ենթարկում քարյուղի տագնապ: Հասարակ հայտարարը իսլամ կրոնն էր: Բայց այդ կրոնը անցեալին երբեք չէր օգնած որ համաձայնէ: Նոյնիսկ այսօր համաձայն չեն: Մյուս միակ հասարակ հայտարարը քարյուղն էր, որ պեղվում, արտահանվում եւ ծախվում էր ամերիկյան եւ եվրոպական ընկերությունների կողմից: Արաբ ղեկավարների միակ գործն էր նստել ու դիտել, թե ինչպես իրենց լռելյան գործակիցները հարստացնում են նրանց: Իրականությունը այն էր եւ է, որ արաբ իշխանները կը պարտին իրենց հասարտությունը Բոքֆելլըրներին եւ նրանց դաշնակիցներին:

Այս հարստության մի մասը անմիջապես վերադարձվեց ամերիկյան եւ եվրոպական գեր-դրամատուներ, ինչպես Չեյզ Մանհաթան ուր մի քանի շեխեր փոխ-նախագահ նշանակվեցին: Մնացյալ դրամի մեծ մասը վերաներդրվեց ամերիկյան ճարտարարվեստի եւ անշարժ կալվածների մեջ:

ՕՓԵՔի ստեղծած քարյուղի տագնապը ճափոնը դարձրեց հսկա: Ճափոնական փոքր ինքնաշարժները պատրաստ էին: Ամերիկացի սպառողները սկսեցին գնել այս աժան եւ խնայողական մեքենաները: Ճափոնական ճարտարարվեստը չէր հասցնում բավարարել պահանջը: Այս ամբողջը կատարվում էր ամերիկյան ազատ-վաճառականության օրենքի տակ: Միեւնույն ժամանակ Միացյալ Նահանգների ինքնաշարժաշինության ճարտարարվեստը ընկերվում է, որից չի կարողացել վերականգնիլ մինչեւ այսօր:

Ճափոնցի ճարտարարվեստականները իրենց դրամը ներդնում են տարբեր արտադրությունների մեջ եւ շուտով Ամերիկյան կը հեղեղում են էժան էլեկտրոնային եւ այլ ապրանքներով: Այս շահույթի մեծ մասը, ինչպես արաբներն էին առել, կը վերաներդրվի ամերիկյան եւ ամբողջ աշխարհի անշարժ կալվածների գնումին մեջ:

Այժմ պարզ է բոլորին, որ քարյուղի տազնապը օգնում է Աշխարհի Նոր Օրենքի արագընթացին, այնքան արագ, որ նույնիսկ իրենք տազնապը ստեղծողները չէին հուսացել:

Արաբ եւ ճափոնցի գործընկերությունը աշխարհականներին առիթ է տալիս, որ առանց որեւէ մտամտութի առաջ մղեն իրենց օրակարգը: Աշխարհի հարստության վերաբաշխումը պիտի որդեգրի նոր ձեւ, որն է «աշխարհի տնտեսական անկախության» միջոց, որ պիտի փաստի, թե անպայման պետք է ստեղծել աշխարհի կառավարությունը:

Այս նոր մտածումները գործադրելու համար, 1973ին, քարյուղի տազնապից եւ ճափոնի հեղեղից առաջ Դեյվիդ Բոքսթեյլը կազմում է Եռակողմ Հանձնաժողովը:

Եռակողմ Հանձնաժողովի նպատակն է պատրաստել աշխարհի կառավարությունը: Եռակողմ Հանձնաժողովն ալ նախընտրած է տարածաշրջանային ձեւը, ինչպես իր քույր կազմակերպությունները՝ Բիլդերբրոքները եւ Հռոմի Ակումբը: Զբիկնիյու Բրզեզինսքին պատրաստում է հանձնաժողովի սկզբունքները եւ ընտրվում է ժողովի առաջին տնօրենը (1973-1976):

Բրզեզինսքին, որ հետագային նշանակվում է Ջիմի Քարթերի Ազգային Ապահովության խորհրդատուն, գրել է մի քանի գրքեր, որտեղ բացատրում է իր մտածումները: «Երկու Աշխարհների Միջեւ» գրքին մեջ, գրված 1970ին, պահանջում է հիմնել միջազգային նոր դրամ ու ընդունիլ աշխարային հարկի նոր համակարգ եւ տալիս իր տեսակետը Քարլ Մարքսի փիլիսոփայության մասին:

Եռակի Հանձնաժողովը Արտաքին Հարաբերությունների Խորհուրդի կրկնորինակն է: Ղեկավարվում է նույն անձերի կողմից, ունի նույն փիլիսոփայությունը եւ տնտեսվում նույն աղբյուրներից, ինչպես Ֆորդ հաստատությունը:

Ինչպես ԱՀԽի նույնպես Ե. Հ. կեդրոնը գտնվում է Նյու Յորք քաղաքում: Սակայն, հակառակ ԱՀԽի, որի անդամները միայն Մ. Ն.-ից են, Ե. Հ.-ի ղեկավարությունը երեք տնտեսապես գեր-հսկա պետություններից է կազմվել –Հիւսիսային Ամերիկա, Արեւմտյան Եվրոպա եւ Ճափոն –եւ ճիշդ այդպես «եռակողմ» [կարծի հիշել որ այս տարածքները առաջին երեք շրջաններն են (թագավորություններ) որ ներկայացվել էր Հռոմի Ակումբի պատրաստած Աշխարհի Նոր Օրենքին մեջ]:

Մի տարբերությունն էւ. Ե.Հ.-ը շատ ավելի փոքր է քան ԱՀԽը, որ ունի 2500 անդամ, իսկ Ե.Հ.-ը միայն 325, որոնցից 98ը Հիւսիսային Ամերիկայից, 146ը՝ Եվրոպայից, 81ը՝ Ճափոնից: Մարդահամարի հաշվով Ճափոնը ունի ամենաշատ թիվը, գրեթե բոլոր մեծ ընկերությունները ներկայացվել են:

Հանձնաժողովի Հյուսիս Ամերիկայի նախագահը հենց նույն Դեյվիդ Բոքսթեյլըն է, Եվրոպայի նախագահը՝ Ջորջ Բերթիին, իսկ Ճափոնինը՝ Իսամու Եամոշիթան: Կարծի հիշել, եթե ոչ բոլորը բայց Ֆրանսայի անդամները պատկանում են ԱզատՄասնական Մեծ Արեւելք Օթյակին:

1970ի վերջերին եւ 1980ի սկզբներին դժվար էր անտեսել Ե.Հ.-ի ազդեցությունը մեր կառավարության վրա: Հետեւաբար, այս կազմակերպություններին ընդդիմացող խորհրդականների թիվը սկսել էր շատանալ: 4 Փետրվար 1981ին պատգամավոր Լարրի ՄքԴոնալդ հարցը դնում է խորհրդարանի առաջ եւ պահանջում, որ ամբողջական ստուգումի ենթարկվի այդ կազմակերպությունների ազդեցությունը Մ.Ն.-ի քաղաքականության վրա:

Հակառակ լրատու միջոցների լռության եւ խորհրդարանի անտարբերության ՄքԴոնալդ մերժում է հանձնվել: Նա կարելին է անում բացահայտելու դավը մինչեւ իր մահը 1983ին, երբ ջախջախվում է կորյակն ինքնաթիռը:

007 «արկածի» հակազդեցությունը հասնում է պետության: Շատեր զայրացած ՄքԴոնալդի մահից եւ լրատու միջոցների լռությունից, որոնք չէին ուզում գրել դավադրության եւ վարագույրի ետեւ ընթացող պայքարի մասին, ստիպում են խորհրդարանը որ հակազդի:

Առաջին նահանգը լինում է Ինդիյանան, որ որդեգրում է 773 որոշումը:

3 Ապրիլ 1985ին Ինդիյանայի ներկայացուցիչների Տունը թիվ 19 որոշումով պահանջում է Ե.Հ. եւ ԱՀԽի ամբողջական ստուգում: Սակայն, ինչպես մյուս խորհրդարանական

ստուգումները, այս ալ մնում է անպատասխան, մեծ մասամբ խորհրդարանին վրա ժողովրդին ճնշման պակասին պատճառով, որ արդյունք է ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՌՈՒԹՅԱՆ:

ՄքԴոնալդի մահը քաջալերում է շատերին շարունակելու պայքարը: ՄքԴոնալդը գլխավորն էր բայց միակը չէր որ ուզում էր բացահայտել աշխարհի կառավարություն ստեղծելու դավը: Կորյական ինքնաթիռի «արկածից» հետո շատեր ընկրկեցին, ուրիշներ ավելի աշխուժ սկսեցին պայքարել, ինչպես ծերակուտական Ջեսի Հեյզը եւայլն:

Քայլեր Դեպի Աշխարհի Կառավարություն

Հիմնադրման թվական	Կազմակերպություն	Կեդրոնատեղին
1913	Դաշնակցային Պահեստի Համակարգ	Ուաշինկթոն
1920	Ազգերի Դաշնություն	ժընեւա
1920-1921	Միջազգային Հարցերի Արքայական Հաստատություն	Լոնտոն
	Արտաքին Հարաբերությունների Խորհուրդ	Նյու Յորք
Մասնաճյուղեր		
	Խաղաղականի Հարաբերությունների Հաստատություն	Նյու Յորք
	Արտաքին Քաղաքականության Ուսումնասիրությունների Կեդրոն	Փարիզ
	Արտաքին Քաղաքականության Հաստատություն	Համբուրկ
1945	Միացյալ Ազգերի Կազմակերպություն	Նյու Յորք
1954	Բիլդերբերգերի Խումբ	Օսթըրքիք – Հոլանդա
1968	Հոմի Ակումբ	Հոմ
1973	Եռակողմ Հանձնաժողով	Նյու Յորք

Գլուխ 3

Ամերիկայի Ստվերային Կառավարությունը

Արտաքին Հարաբերությունների Խորհուրդի եւ Եռակողմ Հանձնախումբի նամակագրական ցանկի վրա լինելով, տարիներ շարունակ ստացա նրանց տարեկան տեղեկագրություններն ու գրականությունը: Պատրաստ էի ուսումնասիրել թե այս հաստատությունները որքան հակակշիռ ունեն ամերիկյան քաղաքականության վրա: Գիտեի, թե ուժեղ են, բայց այսքան:

Վերջապես հասկացա, թե ամերիկացիների մեծամասնությունը ապրում են «կեղծ իրականության» մեջ: Մենք, ժողովուրդը կարծում է քանի իրավունք ունենք քվեարկելու եւ ընտրելու, հակակշռում ենք երկիրը: Իրականությունը այդպես չի:

Տրանքլին Դ. Ռուզվելթի ժամանակներից ԱՀԽի ազդեցությունը կառավարության վրա շարունակում էր աճել: Նիքսոնի վարչակարգի գործադիր իշխանության մեջ գործում էին ԱՀԽի 115 անդամներ: Քարթերի ժամանակ մի երկվեցյակ Եռակողմականներ նշանակվում են վարչակարգի բարձր պաշտոնների վրա: Քարթերը ինք անդամ էր: Ուայթըր Մանտեյը, փոխ նախագահ, անդամ էր երկուքին, ԱՀԽի եւ Ե.Հ.-ի: Զբիկնյու Բրզեզինսքի, ազգային ապահովության խորհրդական (ԱՀԽ եւ Ե.Հ.), Սայրոս Վանս, արտաքին գործերի նախարար (ԱՀԽ եւ Ե.Հ.), Հարոլդ Բրաուն, պաշտպանության նախարար (ԱՀԽ եւ Ե.Հ.), Սթանսֆիլդ Թրերըր, Սի. Այ. Էյ.-ի տնօրեն (ԱՀԽ):

Հասարակ երեւոյթ է, որ երբ Եռակողմականները պետական պաշտոն ստանձնեն հրաժարին Հանձնաժողովից: Նույնը ճիշդ է նաեւ ԱՀԽի անդամների համար: Բայց հրաժարականը երբեք չի նշանակում, որ նրանք այդ նույն կազմակերպությունների ազդեցության տակ չեն:

Ավանդությունը շարունակվում է Բիկլնի տարիներին: Թեեւ Բիկլնը պայքարում է այս երկու կազմակերպությունների դեմ, բայց ընտրվել է ետք 75 ԱՀԽի եւ Ե.Հ.-ի անդամներ է նշանակում բանալի պաշտոնների: Բուշի վարչակարգը կտրել էր բոլոր մրցանիշները, ավելի քան 350 ԱՀԽի եւ Ե.Հ.-ի անդամներ աշխատում էին գործադիր իշխանության մեջ, ինչպես ինք Զորջ Բուշ՝ նախագահ (ԱՀԽ եւ Ե.Հ.), Բիչրդ Չենի՝ պաշտպանության նախարար (ԱՀԽ), Քոլին Փաուրլ՝ սպարապետ (ԱՀԽ):

Կարճ ժամանակ անդամակցելով անկարելի է գիտնալ այս կազմակերպությունների առթած վտանգն ու նպատակը: Ոմանք միանում են համբավի, ուրիշներ ապագայի հաջողության, տակավին հրավիրվում են «ցուցադրության» համար: Մարդ պարզամիտ կամ տկար իմացականության տեր պետք է լինի չհասկնալու, թե անդամակցողների նպատակն է հասնել Միացյալ Նահանգների կառավարության:

Բոլոր գործադիր իշխանությունները ղեկավարվում են այս մարդկանցով: Երկար ժամանակ այդպես է եղել: Արտաքին գործերի նախարարությունը ամենից ավելի ներթափանցվածն է: Արտաքին գործերի նախարարը անդամ չի, բայց տեղակալն ու մի շարք ղեկավարներ են:

Գանձատան բաժանմունքը նույնպես ղեկավարվում է ԱՀԽի եւ Ե.Հ.-ի անդամներով: Դաշնակցային Պահեստի ղեկավարությունը շատ սերտ հարաբերություններ ունի գանձատան հետ:

Գանձատան բաժանմունքի եւ Դաշնակցային Պահեստի Համակարգի միջոցով Բոքսթեյլըրներն ու դաշնակիցները ուղղում են Ամերիկայի ելեւմուտքն ու դրամական քաղաքականությունը, նույնացնելով իրենցին:

Ազգային ապահովության բանալի պաշտոնները զբաղեցնում են այս մարդիկը – Հենրի Քիսինջերը, Զբիկնյու Բրզեզինսքի, Քոլին Փաուրլ:

Մեր ազգային պաշտպանությունը նույնպես:

Նույն խումբերը հակակշռում են պաշտպանության նախարարությունը եւ բանակի բոլոր կարեւոր պաշտոնները:

ՆԱԹՕի մեջ գործող Մ. Ն.-ի բոլոր դեսպանները ԱՀԽ կամ Ե.Հ.-ի անդամ են: Կեդրոնական Գաղտնի Սպասարկությունը (CIA) նույնպես 13 տնօրեններից 9ը եղել են ԱՀԽի անդամ: Շարքը երկար է:

1920ից սկսեալ գանձատան 21 նախարարներից 15ը եղել են ԱՀԽի անդամ: Այսպես, 1944ից սկսեալ 14 արտաքին գործերի նախարարներից 12ը, 12 պաշտպանության նախարարներից 11ը:

Նույն շրջանին, այս կարեւոր պաշտոնները զբաղեցնող 60 անհատներից 48ը եղել են ԱՀԽի անդամներ: Սա արդեն 80% է:

Եթե այս ամբողջը անհանգստացուցիչ չի, նկատի ունեցե՞ք հետեւյալը.-

Համաշխարհային Երկրորդ Պատերազմից հետո ընտրված նախագահները, ի բացառյալ Ջոն Քենեդիից եւ Բոնալտ Բիկընից, եղել են ԱզատՄասոն, ԱՀԽի կամ Ե.Հ.-ի անդամներ: Ջորջ Բուշը ամենից նշանավորն է. նա եղել է ԳԱՆԿ եւ ՈՍԿՈՐՆԵՐ* գաղտնի կազմակերպության անդամ, ԱՀԽի տնօրեն (1977-79) եւ Ե.Հ.-ի ցանկին վրա նշվել է որպես «ժողովուրդի ծառայության նախկին անդամ»:

Հետեւյալը ցանկն է վերջին իննը նախագահների նախկին կամ ներկա պատկանելիության .-

Ֆրանքլին Դ. Ռուզվելթ	-	Մասոնական Օթյակ
Հերրի Դ. Թրումբն	-	ԱՀԽ
Ջոն Ֆ. Քենեդի**	-	ԱՀԽ
Լինդրն Բ. Ջոնսոն	-	Մասոնական Օթյակ
Բիլլորդ Մ. Նիքսոն	-	ԱՀԽ
ժերալտ Բ. Ֆորդ կրտսեր	-	Մասոնական Օթյակ, ԱՀԽ
Ջեյմս Ի. Քարթըր կրտսեր	-	ԱՀԽ /Ե.Հ.
Բոնալդ Վ. Բիկըն	-	Մասոնական Օթյակ
Ջորջ Հ. Վ. Բուշ	-	Գ. Ո./ԱՀԽ/Ե.Հ.

* Գանկ ու Ոսկոր – Մասոնների գաղտնի խորհրդանշաններից մին

** Քենեդիի անունը ԱՀԽի ցանկին վրա չկա, թերեւս մի ժամանակ եղել է ապա հրաժարել

Ոչ միայն նախագահները, այլ նախագահական թեկնածուները առանց բացառության եղել են այս կազմակերպությունների անդամներ:

1980ին նախագահական հինգ թեկնածուներն էլ այս կազմակերպությունների անդամ էին:

Բոնալդ Բիկընը անդամ չի եղել եւ խոստացել էր պայքարել նրանց դեմ, բայց ընտրվել է տք ոչ մի բան չառեց, թերեւս փոխ-նախագահ Բուշի ներկայությունը բավարար էր կազմակերպության համար:

Համաշխարհային Երկրորդ Պատերազմից ետք այս է վիճակը: Սպիտակ Տան ժամանակավոր տերը իրենց ներկայացուցիչն է:

Եթե դու զարմանում էիր, թե անկախ ընտրեալից, ամեն բան ընթանում է նույն ձևով եւ նույն ուղղությամբ, ահա պատճառը: Ուրեմն ԱՀԽը եւ Ե.Հ.-ը ղեկավարում է մեր կառավարությունը: Նախագահական թեկնածու կամ բարձր պաշտոն ստանալու պայմանը այս կազմակերպությունների անդամակցելն է: Այսպես են խորտակում մեր քաղաքականությունը:

Եթե նույնիսկ այս խմբերը աշխատում են ամերիկացի ժողովուրդին օգտին, այդ ամբողջ հզորությունը պետք չի մեկտեղված լինի: Կեդրոնացած քաղաքական համակարգը ժողովուրդին օգտին չի: Անկախ դրանից, թե ո՞վ է ընտրվում, նույն օրակարգն է առաջ մղվում, որովհետեւ երկու կուսակցությունները նույն դպրոցից են եւ ունեն նույն կողմնորոշումը Համայնականության, այսինքն տիեզերական փրկության վարդապետություն: Մեզի

զանազանելու առիթ չեն տալիս: Սա ժողովրդավարություն չի: Սա քաղաքական խարդախություն է:

Եթե ավետարանական եկեղեցին, որ ամենից տիրականն է այս հողին վրա, այս նույն ձեռք որդեգրի որեւէ հարանվանության նկատմամբ, մամուլը պիտի պոռա դավաճանություն, մինչեւ սխալը ճշդվի:

Մեր ղեկավարության 80 տոկոսը նույն հարանվանության պատկանում բայց եկեղեցին չի օգտագործում այդ առավելությունը: Եկեղեցիներ կան, որոնք ունեն հարյուր հազար, նույնիսկ միլիոնավոր հավատացյալներ, իսկ ԱՀԽ եւ Ե.Հ. միասնաբար երեք հազարից քիչ անդամներ: Մեր ղեկավարության մի խմբի պատկանիլը գուգադիպություն չի եւ զարմանալիորեն մտահոգություն չի առթում: Ուրեմն ինչի՞ լրատվությունը մեզի չի տեղեկացնում այսպիսի կարեւոր հարցի մասին: Պատասխանը այս հարցումին հստակացաւ երբ եւ շարունակեցի ստուգել անդամների ցանկը:

Օգնություն Լրատվությունից

Բոքֆելլերներին հիացող մի լրագրող ասում է. «Բոքֆելլերները ազգի մնայուն հաստատությունն են. կառավարությունները փոփոխական են, տնտեսությունը էլեւէջերի մեջ է, արտաքին դաշնակցությունները հաստատուն չեն, Բոքֆելլերները տիրում են:

Ես գիտեի, թե տեղեկատվական ճարտարարվեստի որոշ անհատներ Բոքֆելլերների ազդեցության տակ են, բայց նորից զարմացա այդ ազդեցության ահագնության վրա: Գլխավոր երեք ցանցերից մին ամբողջությամբ ԱՀԽի եւ Ե.Հ.-ի անդամների տիրապետության տակ է: Այս կազմակերպությունների ազդեցության տակ գտնվող լրագրողների ցանկը այնքան երկար է, որ հարց էի տալիս, թե «ո՞վ այդ ցանկի մեջ չի»:

Ոչ միայն լրատվությունը, այլ նաեւ հեռուստացույցը ամբողջությամբ Բոքֆելլերների դրամատան տիրապետության տակ է: 1974ի խորհրդարանական տեղեկագիրը նշում է, թե Բոքֆելլերների պատկանող Ջեյզ Սանհաթան դրամատունը առանձինն 28 հեռուստաընկերությունների մեջ շահաբաժիններ ունի: Սա 70ականների տեղեկագիր է. այսօր այդ հակակշիռը անհամեմատ աճել է: Բոքֆելլերների պատկանող մյուս դրամատների շահաբաժինները հայտնի չի: Բոքֆելլերների դաշնակիցները որքան շահաբաժին ունեն անհայտ է: Միայն մեկ ընտանիքի ազդեցությունը հեռատեսիլի ճարտարարվեստի վրա իրապես սուսկալի է:

Բոքֆելլերների հակակշիռն ենթակա ԱՀԽը, երկրի էլեկտրական ցանցի մեծագույն մասի տերն է, որի միջոցով մեզի հասնում են լուրերը: Օրինակի համար, Ասոշիեյթս փրեսի եւ Ռեյթինգի տնտեսները ԱՀԽի անդամներ են:

Ուրախ եմ հայտնելու, թե Ասոշիեյթս փրեսի մեջ աշխատող մի պատասխանատու ինձ տրամադրեց այս տեղեկությունները: Այս ցույց է տալիս, որ դեռ ունենք մի քանի լավ լրագրող:

Անկախ լրաթերթերը նույնպես ենթակա են այս հաստատության: 1983ին երկրի 1700 օրաթերթերից 531ը պատկանում էին անհատների (մեծ մասը գտնվում են ավանների մեջ եւ անկարող ազդելու ազգի մտածելակերպին վրա): 1945ին 1381 օրաթերթեր պատկանում էին անհատների: Թվեմ մի քանի գլխավոր լրաբեր, որոնք գտնվում են ԱՀԽի ազդեցության տակ. Նյու Յորք Թայմզ, Նյուգուլդ (Ուաշինկթոն), Ուոլ Սթրիթ Ջրնրլ, Պոսթոն Կոլր, Բալթիմոր Սան, Չիքագո Սան Թայմզ, Լոս Անջելոս Թայմզ, Հյուսթոն Փոստ, Մինիափոլիս Սթար/Թրիբյուն, բոլոր մեծ քաղաքների լրաբերերը: ԱՀԽ իր 38 մասնաճյուղերով ազդում է լրատվության վրա:

Թվեմ մի քանի հանդես ու պարբերաթերթ՝ Ֆորթյուն, Թայմ, Լայֆ, Մանի Փիփլը, Նյուգուլդ, Բիզնեսուլիք, Բիդըրգ Դայջեսթ, եւ այլն:

Այս հրատարակությունների վրա մեծ է ազդեցությունը դրամատների, հաստատությունների եւ ընկերությունների, որոնց հայտարարություններից առաջանում են

հսկայական գումարներ. դրանց շարքին են Սիթիքորփ, Չեյզ Մանհաթըն, Քեմիքըլ Բանք, Մորգան Կերենթի, Էքսոն, Մոբայլ, Թեքսաքո, Այ. Բի. Էմ., Աթ. և Թ., Ջեներալ Էլեքթրիք, Ջեներալ Մոթորզ, Ֆորդ Մոթորզ եւ Քրայզլեր: Միայն Բոքսեյլըրների պատկանող կամ ենթակա քարյուղի ընկերությունները չեն որ հայտարարություններ են պատվիրում, այլ նաև գեր-խանութների ցանցը, որոնց վերետում միշտ բազմած է մի ԱՆԽի անդամ: Այս ցանկին պետք է ավելացնել Բոքսեյլըրների պատկանող հարյուրավոր ընկերություններ, որոնք նույնպես հայտարարություններ են պատվիրում: Հեռուստացանցերի, լրագրողների եւ պարբերաթերթերի կողքին Բոքսեյլըր հաստատությունը հակակշռում է նաև հրատարակչատուները, որոնցից շատեր մասնագիտացած են դասագիրքերի հրատարակչության մեջ, որ բերում է մեզի շատ ավելի կարելուր հանգրվանի:

Եթե զանգվածային հաղորդակցության ճարտարարվեստը տիրապետել են անհատներ եւ կազմակերպություններ, որոնց նպատակն է հիմնել պշխարհի կառավարությունը, մեզի մնում է ազգը զգուշացնել կրթարաններում: Բայց ինչպե՞ս, երբ հրատարակչատուներն ալ հակակշռում են:

Այս գաղտնի ազդեցության հայտնաբերումը ինձ քաջալերեց, որ ավելի լրջորեն քննարկեմ ժողովրդական կրթությունը: ինչ որ գտա շատ ավելի հուսահատական է քան լրատվությունը: Ես գիտեի, որ ժողովրդական կրթությունը անցնում է դժվար ժամանակներից, բայց չգիտեի թե այնպես են նպատակադրել որ այն քանդվի: Ես վերջապես հասկացա, թե ինչու մեր դպրոցները գտնվում են այսպիսի թնճուկի մեջ:

Օգտագործում են Ժողովրդային Կրթությունը

1902ին Ջոն Դ. Բոքսեյլըրը առնում է առաջին քայլը եւ կազմում Ընդհանուր Կրթության Վարչությունը (ԸԿՎ): Որպեսզի կարողանա հակակշռել այս հարկից գուրկ հաստատությունը, նախագահ է նշանակում իր օգնականը:

1902ից 1907 Ջոն երեցը ԸԿՎին տալիս է 43 մոլիոն տոլար, իսկ իր զավակը՝ Ջոն կրտսերը 200 միլիոն: 1902ից 1930 Բոքսեյլըրների տված գումարը, որպեսզի հակակշռեն կրթությունը, այս օրվան դրամով 2 միլիար տոլար է: Այս անհավատալի նվիրատվությունը կատարվում է որպեսզի դպրոցների մեջ ուսուցանեն աշխարացումը եւ ընկերվարությունը, այնպիսի ժամանակաշրջան՝ երբ ոչ մի ընդդիմություն գոյություն չունեի: 20րդ դարու առաջին երրորդին Գառնակի-Բոքսեյլըր գույզը նվիրաբերում է ընդհանուր ծախսի 20 տոկոսը եւ դառնում են՝ մի տեսակ Մ. Ն.-ի կրթության նախարարություն:

1930ականներին այս նույն կազմակերպությունները հակագումարներով օգնում են Ջոն Տիուի ընկերվարական փիլիսոփայության հաջողության: Տիուին այսօր ճանաչվում է որպես «հառաջդիմական կրթության հայրը», որ ազդում է ամերիկյան կրթության մտածողության վրա: Այսօր շատ քիչեր անդրադառնում են, որ նա եղել է Ամերիկայի գլխավոր անաստվածը: Նա գրել է.

«Ոչ Աստված եւ ոչ էլ հոգի կա: Հետեւաբար, պետք չկա ավանդական եկեղեցին պահպանել: Հավատքը եւ դավանանքը ընդունելով մեռնում եւ թաղում ենք անսասան ճշմարտությունը: Պետք չկա հաստատուն բնական օրենքի կամ մնայուն բացարձակ բարոյականության»:

Տիուի փիլիսոփայության որպես արդյունք տեսնում ենք այսօր քառսի մեջ տվայտող մեր կրթական համակարգը:

Տիուին եղել է 4 Բոքսեյլըր եղբայրների ուսուցիչը:

Տիուին Քոլումբիայի համալսարանի ուսուցչանոցի բաժնի պատասխանատու պաշտոնը տարիներ վարեց: Այսօր ամերիկյան դպրոցների վերակացուների 20 տոկոսը եւ ուսուցչանոցների տնօրենների 40 տոկոսը շրջանավարտ են Քոլումբիայից:

1934ին ԱԿԸ-ն որդեգրում է Տիուի մարդկայնություն, ընկերվարություն եւ աշխարացում փիլիսոփայությունը եւ ուղարկում է դասարան: Հետաքրքրական է գիտնալ, որ երբ այս բոլորը կատարվում է այստեղ, Տիուին հաջողում է ժամանակ գտնել գնալու Ռուսաստան՝ օգնելու կազմակերպել Մարքսիստական կրթության համակարգը:

Բոքֆելլերներն ոչ միայն հակակշռում են ուսուցչանոցները, այլ ծախսում են միլիոնավոր տոլարներ վերագրելու պատմությունը եւ ստեղծում են գիրքեր, որոնք հիմքից քանդում են հայրենասիրությունն ու նախաձեռնությունը:

Բոքֆելլերների դրամով տպագրված գիրքերի երկար շարքից մեկի անունն է «Կառուցենք Ամերիկան»: Այս գիրքը Մարքսիզմ է քարոզում, այն աստիճանի որ Քալիֆորնիայի օրենսդիր կազմը մերժում է տպագրել:

Հաստատության ազդեցությունը շարունակում է աճել անցյալ մի քանի տասնամյակներին: Այսօր նրանց հակակշիռը ժողովրդական կրթության վրա գրեթե ամբողջական է: Մա պարզ իրականություն է. բոլոր մեծ կրթական հաստատությունների պատասխանատուները ԱՀԽի անդամներ են: Հիշենք մի քանին. Քոլումբիայի, Նյու Յորքի, Նոթրը Դամի, Սթանֆորդի, Յայլի, Չիքակոյի, Ուիսքոնսինի եւ Ուաշինգթոնի համալսարանները:

Այս բոլոր կարեւոր կրթական օճախները աշխարացնողների ազդեցության տակ լինելով, նրանց ճիշդ ուղիի վերադարձրելը անկարելի աշխատանք է այլեւս:

Ամերիկայի Դերը

Մեր քաղաքական համակարգի վրա հաստատության ազդեցությունը բացահայտելով, ջղայնացա: Ուշիմությունս անպատվովել էր: Ամբողջ կյանքիս ընթացքին այս մասին ոչ մի բան չէի լսել: Նույնիսկ մի քանի տարի առաջ չգիտեի անունները ԱՀԽի կամ Ե.Հ.-ի:

Սոսկացի երբ հայտնաբերեցի հաստատության զանգվածային տեղեկատվության վրա ունեցած ազդեցության մասին, բայց հիմա հասկացա թե ինչու ավելի շուտ չէի իմացած այս դավադրության մասին, Բոքֆելլերները տիրապետել են տեղեկատվական ճարտարարվեստի յուրաքանչյուր մասնիկի վրա, հեռուստացույցից մինչեւ կրթություն: Ժողովուրդը պետք է հասկանա ու բացահայտի դավադրությունը: Բայց ինչպե՞ս: Պարզապես մի քանի հոգի պետք է համաձայնվեն եւ յուրաքանչյուրը զբաղի մի հարցով, ինչպես ես անում եմ, որովհետեւ միջոց չկա բոլորը եւ ամեն բան գիտնալու:

Երբ ես շարունակում էի ուսումնասիրել Մեկ Աշխարհի շարժումը, մի հարց անընդհատ տանջում էր ինձ. «Ո՞ւր է Ամերիկան այս նվիրապետության մեջ: Ի՞նչ դեր վստահվել է նրան»:

Խորանալով այդ հարցին մեջ համոզվեցի, որ Ամերիկայի պարտականությունն է աշխարհի կառավարությունը հաջողացնելու միջոցներ գտնել եւ հետո այնտեղ հասնել է ետք մարդկությունը առաջնորդել դեպի Աշխարհի Նոր Օրենքը: Միայն Ամերիկան իր ուղղամտությամբ եւ ղեկավարելու կարողությամբ (որպես Ա. եւ Բ. Պատերազմների հերոս եւ մարդկային իրավունքների պաշտպան) կարող է հաջողացնել այսպիսի գործ:

29 Հունվար 1991ին նախագահ Բուշ շատ հստակ ասաց.

«Երկու դարեր Ամերիկան ծառայեց աշխարհին որպես ազատություն եւ ժողովրդավարություն ներշնչող օրինակ: Մերունդներ պայքարեցան ազատությունը պահելու եւ երկարացնելու: Այսօր արագորեն փոփոխվող աշխարհի մեջ Ամերիկայի առաջնորդությունը անհրաժեշտ է: Ամերիկացիները գիտեն, որ այդ առաջնորդությունը ծանր է եւ պահանջում է զոհողություններ: Բայց մենք գիտենք, թե մարդկությունը ինչու իր հույսը դրել է մեր վրա: Մենք ամերիկացիներ ենք, մենք ունենք հատուկ պատասխանատվություն հաջողեցնելու ազատության դժվար աշխատանքը»:

Բուշը ակնարկելով Ծոցի պատերազմին ասաց.-

«Մենք գիտենք, թե ինչու այնտեղ ենք: Մենք ամերիկացիներս մեզանից մեծ մի բանի մասն ենք: Գրավը այդ փոքր երկիրը չի, այն մեծ գաղափարն է, Աշխարհի Նոր Օրենքը, ուր տարբեր ազգեր պիտի միանան հաջողակաբար համար մարդկության տիեզերական տենչանքը»...

«Հետևաբար, աշխարհ պետք է օգտվի այս առիթից հաջողակաբար համար երկար սպասված Աշխարհի Նոր Օրենքը... Աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգները ունեն բարոյականը եւ միջոցները՝ կատարելու այդ: Մենք այս երկրագունտի միակ ազգն ենք, որ կարող ենք մեկտեղել խաղաղարար ուժերը»...

Աշխարհի Նոր Օրենքը – ազատության եւ ժողովրդավարության անունին տակ- ո՞վ կը հավատար, մի սերունդ առաջ:

Թաքուն ուժերի միակ հույսն է հակակշռել Միացյալ Նահանգները, օգտագործել նրա տնտեսական ազդեցությունը, առաջնորդելու մյուս ազգերը դեպի Նոր Օրենք:

Միայն Ամերիկան իր հսկայական միջոցներով կարող է հաջողակաբար երկրագունտի համակարգը: Նյու Յորքը հաստատված միջազգային դրամատներն ու ամերիկյան համակարգչային ընկերությունները կարող են կեղրոնացնել աշխարհի դրամատները եւ մեր հեռահաղորդակցության ընկերությունները, որոնք շինել են արբանյակներ ստիպելու աշխարհի կառավարության համակարգը:

Միայն Ամերիկան կարող է հառաջացնել տնտեսական ուժը գերդրամատերերու միջոցով գնելու աշխարհը: Մի շարք երկիրներ եւ առեւտրականներ, հաստատության որպես խոնարհ դաշնակիցներ հարստացան: Այս հարստության որպես արդյունք Անգլերենը աշխարհի տնտեսական լեզուն է, իսկ Մ. Ն.-ի տոլարը՝ գրեթե աշխարհի դրամը:

Բռնատիրությամբ կարելի չէ Մեկ-Աշխարհ կառավարությունը հիմնել: Աշխարհի Նոր Օրենքը կը հաջողի միայն հենելով վստահելի ժողովրդավարության վրա: Ամերիկան կը բավարարի այս պայմանները որպես աշխարհի ազատության պատվար-մարդկության վերջին հույսը: Ավելին՝ Ամերիկան տարբեր ազգերի խառնուրդ է – յուրաքանչյուր անհատ ընկեր կամ բարեկամ ունի Մ. Ն.-ի մեջ: Այս բոլորը հուսադրիչ եւ ընդունելի են Աշխարհի Նոր Օրենքի համար:

Ծոցի պատերազմը վերջին ռազմավարությունն էր հասնելու նպատակին:

Պատերազմը ունի մի քանի նպատակ: Բարձրացնել քարյուղի գիները, հատատության քարյուղի ընկերություններին հայթայթելով նոր միլիարներ: Բայց ավելի կարեւորը, նա կարող է ազգերը միացնել մի թշնամիի դեմ – որ հարկավոր է, մարդկությունը հասցնելու մեկ-աշխարհի համակարգին: Հիուսելը խաղաց հոյակապ անպիտանի դերը, ասելի բոլորին համար (ինչպես Հիթլերը):

Պատերազմը կարող է վերահաստատել Ամերիկյան որպես երկրագունտի առաջնորդը եւ աշխարհի նոր օրենքի պաշտպանը, նաեւ բոլորին զգուշացնելով, թե ինչ կարող է պատահել եթե հակառակին գալիք աշխարհի համակարգին: Կարող են իսկական հայրենասերը, նա՝ որ հակառակում է Աշխարհի Նոր Օրենքին, վերածել ոչ-հայրենասերի: Միեւնույն ժամանակ մյուսներին դարձնելով հայրենասեր: Կարող են խառնել ամեն բան:

Ես ոչեւէ հակառակություն չունեմ ամերիկյան դեկավարության հետ եթե հետապնդում է աստվածային սկզբունքներ եւ ազնիվ օրինակ է հանդիսանում մյուս ազգերի համար: Ես ուզում եմ լինել հայրենասեր Աբրահամ Լինգոլնի, Լուիզ ՄզՖատենի, Լարրի ՄզՖոնալդի եւ ուրիշների նման: Բայց նրանք պետք չէ երազեն նյութապաշտ, կաշառակեր, անաստված Ամերիկա որ ապաստարան լինի գաղտնի հավաքականությունների համար եւ մի ազգ՝ որ չպարտադրի աշխարհի կառավարությունը մնացյալի վրա: Ես հավատում եմ, որ ամերիկացիների մեծամասնությունը համաձայն են ինձ հետ այս հարցերի շուրջ:

Աշխարհի Նոր Օրենքի կառուցման մեջ Ամերիկայի դերին մասին բավական լուսաբանվել է ետք, մնում է մի հարցում. «Իր պարտականությունը կատարել է ետք, ի՞նչ է պատահելու Միացյալ Նահանգներին»: Այս հարցումը ուսումնասիրողները տարբեր կարծիքներ ունեն: Ոմանք կարծում են երբ մարդկությունը ընդունի Աշխարհի Նոր Օրենքը, Եվրոպան պիտի լինի Աշխարհի կառավարության կեղրոնատեղին: Ուրիշներ, ընդհակառակը

կարծում են թե աշխարհի կառավարության կեղրոնատեղին լինելու է Մ. Նահանգների, հատկապես Նյու Յորք քաղաքին մեջ:

Բոլոր երևույթները ցույց են տալիս, թե Նյու Յորքը բնական մայրաքաղաքն է, նա աշխարհի ամենեն ուժեղ եւ ազդեցիկ քաղաքն է, այնտեղ է գտնվում Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը եւ Եռակողմ Հանձնաժողովը. բոլորի կեղրոնները այդտեղ են: Այնուամենայնիվ, Եվրոպայի գաղտնի նվիրապետությունը, որ տակավին բացարձակ ղեկավարն է, թերեւս տարբեր ծրագիր է մշակում: Եթե նպատակադրել են աշխարհի մայրաքաղաքը տեղադրել Եվրոպա, միջոցը կը գտնեն: Այդպիսի որոշում կարող է տնտեսապես քայքայել եւ ֆիզիքապես կործանել Նյու Յորք քաղաքը: Այդ կարելի է հաջողացնել զանազան ձեւերով. ինչքերի շուկային մեջ տնտեսապես ծրագրված տկարացումով կամ մեր ազգային պարտքի որպես արդյունք դրամի ծայրահեղ արժեզրկումով կամ ֆիզիքապես, որպես ահաբեկչական արարք, ինչպես հյուլեական «արկած» կամ սահմանափակ աթոմական պատերազմով: Հավատում եմ, ինչ որ եվրոպական նվիրապետությունը որոշել է, կը կատարվի:

Նյու Յորքի ճակատագիրը կործանում է: Այս հարցին պատասխանը չգիտեմ եւ ոչ էլ ուզում եմ որ այդ քաղաքում ապրող ժողովուրդին վատ բան պատահի: Բայց զուգահեռը Նյու Յորքի եւ նշանավոր բայց չար քաղաքի, որ նկարագրված է պատմության մեջ որպես Առեղծված Բաբելոն դժվար է անտեսել: Հուսամ սխալ եմ:

Գլուխ 4

Նոր Ժամանակի Շարժումը

Աշխարհի կառավարությունը ստեղծելու քաղաքական եւ տնտեսական աշխատանքը կատարում են ոգեկան ուղղություն ընդունած կազմակերպություններ, որոնք միասնաբար ճանաչվել են որպես Նոր Ժամանակի Շարժում (ՆՇՇ): Իմ առաջին փորձառությունս ստացա երբ որպես առեւտրական աշխատանքային ճանապարհության գնացի հարեւան քաղաքը: Հանդիպումից հետո ընկերության ներկայացուցիչի հետ գնացինք ճաշելու:

Երբ ճաշը մատուցեցին, հյուրընկալս պարզեց ձեռքերը եւ սկսեց աղոթել: Քրիստոնեա լինելով ուրախ էի ուրիշ հավատացյալի ընկերակցությունից, որ ընդհանրապես քիչ է պատահում առեւտրական հանդիպումներում: Ճաշի ընթացքին զանազան հարցերի կարգին հյուրընկալս պատմեց հետեւյալը.

- Բարեգործ մի կազմակերպություն ամսական ժողովների համար սենյակ է խնդրում ընկերությունից: Խնդրանքը բավարարվում է: Ըստ պայմանավորվածության, ընկերության ներկայացուցիչը միշտ պետք է ներկա լինի ժողովներին:

Կարճ ժամանակում հարցը պարզվում է: Կազմակերպությունը քննարկում էր ձեւեր եւ միջոցներ «Նոր Ժամանակ»ի գաղափարը եւ գործունեությունը փոխանցել համայնքին, խաղաղության եւ միության նշանաբանի տակ, բավարարելով նաեւ համայնքի կարիքները: Առ երեւոյթ՝ մարդկային գործ: Բայց խաբկանքը աներեւոյթ է:

Ընկերությունը հետաքրքրված էր այս ժողովներով, որովհետեւ չէին լսել Նոր Ժամանակ Շարժումի մասին: 1980ականներին քիչեր գիտէին այս ցանցի մասին:

Ընկերության ներկայացուցիչները սեղմ ժողովի են հրավիրվում հասկնալու, թե ինչ է այս շարժումը: Հրավիրում են մի քանի քրիստոնեա, որոնք տեղյակ էին շարժումի գործունեության եւ կարող էին բացատրություններ տալ: Գիտնալով իմ հետաքրքրությունների մասին ինձ էլ են հրավիրում:

Ես չէի լսել Նոր Ժամանակի մասին եւ չէի հասկանում, թե ինչն է այս ահագանգր: Երկու ժամ ինքնաշարժը վարել է ետք ներկա եղա ժողովին:

Պատրաստ չէի այն ժողովի ծանրության: Երբ բացատրությունները վերջ գտան, հարցումներից ուղեղս պայթում էր: Դասախոսը շատ լավ էր ուսումնասիրել Շարժումը: Վերջավորության պարզվեց, որ Նոր Ժամանակ Շարժումը իրական էր եւ մեծ վտանգ էր ներկայացնում մեր հավաքականության: Հետագային մենք գործակցեցինք եւ ուսումնասիրեցինք Շարժումը:

Ձարմանալին այն է, որ իմ ծանոթությունս նոր դրամի, աշխարացնողների եւ Նոր Ժամանակ Շարժումի հետ տեւել էր ութը ամիս: Այս երեքը ինձ իմ հակասակշռությունից դուրս էին հանել: Աստված ինձ ուղղություն էր տալիս: Կյանքս նույնը չէր այլեւս: Սկսեցի շատ լուրջ ուսումնասիրություններ կատարել:

Մի քանի ամսվա ընթացքում մինչեւ ականջներս խրել էի Նոր Ժամանակ ուսումնասիրող նյութերով եւ սկսեցի այցելել մի շարք առողջապահական սնունդի պահեստներ: Դասախոսը ինձ տեղեկացրել էր, թե Նոր Ժամանակ Շարժումը հաճախակի օգտագործում է սնունդի պահեստները՝ բաժանելու իրենց գրականությունը եւ քարոզելու գաղափարախոսությունը:

Առաջին պահեստի մեջ գտա ամեն բան՝ **Նոր Ժամանակ Պարբերականից** մինչեւ **Մայր Երկիր Լուրերը**: Պահեստի տիրուհին այնքան խանդավառվել էր իմ հարցերով, որ մի քանի պարբերական ձրի տվեց:

Հաջորդ այցը ավելի վատ էր: Պահեստը լի էր պռոստոցող նյութերով: Նույնիսկ փակցրել էին մի ազդ, որտեղ գրվել էր թե ինչպես կարելի է միանալ կախարդների ազգային կազմակերպության: Ազդին տակ նշել էին *Լուրջ Ուսանողներ Միայն*: Աչքերիս չէի հավատում:

Մի քանի շաբթվա ընթացքին կազմեցի փոքր գրադարան: Տարբեր անուններ գործածելով գետեղվեցի նամակագրական ցանկի վրա: Այսպիսով հնարավորություն ընձեռնվեց գիտնալ, թե ով ում հետ էր հաղորդակցում եւ որ կազմակերպությունները նույն ցանկին վրա էին:

Վեց ամսվա ընթացքում սկսեցի Նոր ժամանակ գրականությունն ստանալ երկրի տարբեր կողմերից, մի տարի անց նույնիսկ անկարելի էր թերթատել դրկված նյութերը: Նոր ժամանակ գրականությամբ լի քանի արկղ դիզվեց տանս մեջ:

Հատ լավ էի խաղում Նոր ժամանակ դերս եւ երկար գրույցներ էի ունենում Նոր ժամանակ գրախանութների տերերի հետ: Նպատակադրել էի գիտնալ, թե այդ գրականությունը որտեղից էր գալիս եւ ինչի են հավատում: Օգտվում էի դասախոսի եւ նրա ընկերների ուսումնասիրություններից: Մեր բոլորի նպատակն էր հայտնաբերել Սեւ ուժերը:

Գրեթե երկու տարի տքնաջան աշխատելէ ետք զգացի, թե կարողացել եմ թափանցել նրանց ներքին աշխատանքին, հասել էի նպատակիս: Ես ալ չեմ ուզում այս էջերը կարդալ: Այդ գրականությունը այնքան սեւ է եւ ճնշող, որ միշտ ընկճված էի զգում: Ես չեմ հանձնարարի ոչ մեկին որ այսպիսի աշխատանք կատարի եթե Աստուծո կամքը չկա այնտեղ: Որպեսզի կարողանաք վերականգնել դուք ձեզի նույնքան Մր. Գիրք պետք է կարդաք: Պարապի չեն ասել, թե սատանան վարպետ խաբեբա է: Նոր ժամանակ Շարժումի մի մասը այնքան սատանայական է, որ չի վախեցնում, մինչ ուրիշներ գրվել են հաշվենկատ ու խաբկանքով որ կարող են ամենից կատարյալ հավատացյալը գծից դուրս հանել: Կրկնում եմ՝ թեթեւակի չվերաբերվել այսպիսի նյութերի հետ:

Անկարելի է Նոր ժամանակ Շարժումի գործունեությունը պարփակել այս գրքի էջերի մեջ:

Հուկայում կը գտնենք մեծ թվով եւ կարեւոր գրքեր, որոնք շատ լավ են բացատրում Նոր ժամանակ Շարժումի միտումները Բայց ահա թե ես ի՞նչ սովորեցի:

Նոր ժամանակի Խորհրդապաշտությունը

Նոր դարի կրոնը՝ համաստվածությունն է. այսինքն ինչ որ գոյություն ունի, ապրում է աստված է: Ըստ նրանց՝ աստված չկա, փոխարենը ընդունում են աստված-ուժը (կյանք ուժը): Նրանք ուսուցանում են որ կենսաուժը, կամ աստված-ուժը հոսում է բոլոր ապրող էակների միջից – բույսերը, կենդանիները եւ մարդ էակը: Հետեւցնում եմ, քանի աստված-ուժը հոսում է բոլորի միջից, հետեւաբար, մենք աստված ենք կամ աստուծո մի մասը:

Համաստվածության հավատացողների մեծամասնությունը պիտի պաշտպանի մեկ-աշխարհի կառավարությունը, որովհետեւ աշխարացումը կարեւոր է աստված-ուժի բնական հոսքին: Ապա մարդկությունը ենթադրաբար հսկա ցատկ պիտի կատարի դեպի ավելի բարձր գոյություն եւ հանկարծ պիտի ստանա խորհրդապաշտական գորություն կատարելու, այն ինչ որ երբեք չէր կարողացել կատարել: Նոր ժամանակի լուսավորությունը – Աշխարհի Նոր Օրենքը – պիտի ծնի:

Համաստվածները ուսուցանում են, որ մենք երբեք չենք մեռնելու, հետեւաբար, Աստուծո կողմից չենք դատվելու, վերադառնալու ենք կյանքի՝ տարբեր ձեւերով, որովհետեւ մենք «բնություն ենք»:

Ջարմանալի է, թե մարդ ինչպես կարող է այսպիսի գաղափարի հավատալ: Համաստվածության հիմքը սատանայի երկու սուտերն են՝ միեւնույն սուտերը որ խաբեցին Ադամը եւ Եւան: Օձը ասաց եթե ուտեք արգիլված պտուղը 1) պիտի չի մեռնիք եւ 2) պիտի լինեք աստուծո նման:

Մարդը միշտ փորձել է փախչիլ իրանից բարձրին հաշիվ տալ: Համոզումը որ հաշիվ չես տալու աստուծո՛ւ՝ Համաստվածության գլխավոր թերությունն է:

Բացահայտեցի նաև որ Համաստվածության գաղտնի գործունեությունները չատ պարզ երևում են կախարդության մեջ:

Հակառակ ընդունված կարծիքի, կախարդները սատանային չեն հավատում, ոչ էլ կարծում են թե կատարում են սատանայական ծիսակատարություն: Կախարդներն ու վհուկները կարծում են, թե օգտագործում են բնության ուժը, այսինքն՝ աստված-ուժը – Համաստվածությունը:

Համաստվածությունը սատանային կրոնն է: Թեև կան սատանայի հետևորդներ (Սատանայապաշտություն) բայց ընդհանրացած չի, որովհետև շատ չար է. փոխարենը մարդիկ նախընտրում են Համաստվածությունը:

Եթե Համաստվածությունը գաղտնի կիրառություններ է կատարում, հետևցնում ենք որ Արեւելյան Համաստվածության կրոնի ղեկավարները նույնպես գաղտնի կիրառություններ էին կատարում:

Բոլոր նրանք, ովքեր ընդգրկվել են Նոր Ժամանակի գործունեության մեջ, Արեւելյան կրոնի ղեկավարությունը ընդունում են որպես իսկական հեղինակություն. հետեւաբար, Հնդկական Սվամիները եւ Յոկիները մեծ թիվով հետևորդներ ունեն արեւմուտքի մեջ: Նոր Ժամանակի հետևորդների համար, կրոնի ամենից նշանավոր ուսուցիչները Թիպեթյան վանականներն են ու նրանց հոգեւոր առաջնորդ Տալայ Լաման: Աստվածիմաստական ընկերության մի շարք ներկայացուցիչներ ինչպես Ալիս Բեյլի եւ Հելենա Փեթրովա Բալավսքին, որոնց գրությունները մեծ ազդեցություն ունեցած են Նոր Ժամանակ Շարժումի վրա, ուսանել են Ծայրագույն Արեւելքի վարպետների մոտ:

Չհասկնալով **խորհուրդ** եւ **խորհրդապաշտություն** գաղափարների իմաստը, ժողովուրդը չի կարողացել տարբերել Համաստվածությունն ու գաղտնիությունը: Նոր Ժամանակավորների մոտ խորհուրդն ու գաղտնի հոմանիշներ են: Նոր Ժամանակավորների ամենից ընդհանրացած բառարանին մեջ՝ պատրաստված Նեիլ Դրուրիի կողմից, որ կոչվում է **Խորհրդապաշտության եւ Գաղտնիության Բառարան**, այս բառերը նույնացել են, հոմանիշ են:

Խորհրդապաշտությունը գաղտնիությունն ասելու մեղմ ձևն է: Ժողովուրդը շվարեցնողը «Նոր Ժամանակ»ն է, որ թեև ավելի լավ է հնչում բայց հոմանիշ է խորհրդապաշտության եւ գաղտնիության: Արդի լեզվով լինել խորհրդապաշտ թե գաղտնիապաշտ Նոր Ժամանակավոր՝ ունի նույն իմաստը:

Այս շփոթության պատճառով Նոր Ժամանակի միացողներից շատեր չգիտեն, թե ընդունել են գաղտնիության գաղափարը: Ժամանակի ընթացքին ինքնաբերաբար հասկանում են իմաստը, բայց արդեն ուշ է լինում եւ չեն ուզում վերադառնալ: Գաղտնիապաշտը մոլորեցնող է եւ անհավատալիորեն մոլի, ալ ավելի քան թմրեցուցիչները: Ամենից մոլորեցուցիչ եւ վտանգավոր վիճակն են ընդունում երբ նրանք այլափոխվում են: Նոր Ժամանակավորների համար այս վիճակը գլխավոր միացնող ազդակն է:

Մենք ստեղծվել ենք բնական պաշտպանությամբ որպեսզի կարողանանք դիմադրել այս բոլորին: Եթե կորցնեք դիմադրողականությունը կրնկնենք մութ ուժերի (սատանայի) ազդեցության տակ: Կեդրոնացումն ու մտախոհացումը կ'այլափոխի մեզի:

Որոշ այլափոխվողներ (վերացողներ) անմիջապես չեն զգա արարքի ազդեցությունը, ուրիշներ անմիջապես հասկանում են թե ինչ է պատահում: Այս երեւոյթը ընդգրկում է նաև մարմնից դուրս ճամբորդություն (Նոր Ժամանակավորները այս վիճակը կոչում են աստղային ուսում կամ տիեզերական ճամբորդություն): Հիպնոսը ճանապարհորդություն է դեպի «անցյալ կյանքերը», հստակ տեսիլք, մի տեսակ գուշակ, ուղղակի միաձուլում ոգիների հետ (ընդհանրապես կոչվում է առաջնորդ ոգի):

Այլափոխվելը վտանգավոր է: Հնդկաստանի Կուրունները նախագուշակական միջոցներ են որդեգրում երբ շատ են խորանում մտախոհացման մեջ:

Շատեր կարծում են վերանալով առիթ են տալիս սատանային որ ազդի մեր մտածումին վրա: Վերացական վիճակը քայքայում է պաշտպանությունը: Հոգեբաններ փաստել են, որ վերացական վիճակը տկարացնում է տրամաբանությունը: Սատանան խենթ չի: Նա հասկանում է այս բոլորը: Այս վիճակի մեջ ոչ ոք կարողություն ունի լավն ու վատը ընտրելու, անում են այն ինչ հիպնոսացնողը ասում է:

Օրինակի համար, հիպնոսի ընթացքին եթե քեզի ասեն, թե երեք հեծիկ էիր վարում, կը հավատաս: Ուղեղը ընդունում է որպես իրականություն: Այս վտանգավոր ուժը երեւում է հետեւյալ օրինակի մեջ.

Մի քանի տարի առաջ, հիպնոսի մի նշանավոր մասնագետ հրավիրվում է մի որոշ դպրոց ցուցադրելու իր «Արվեստը»: Կամավորներ է հրավիրում հարթակ ու հաջողում վերացնել: Երկու տարի անց նորից է հրավիրվում նույն դպրոցը եւ ցույց է տալիս, որ իր ուժը տակավին ի գործու է նույն տղաների վրա, որ երկու տարի առաջ վերացրել էր: Նա պարզապես ասում է «պահված» բառը եւ իր ձայնի ազդեցության տակ նույն տղաքը նորից են վերանում: Այս դեպքը անշուշտ մեծ ազդեցություն է թողնում ուսանողների վրա:

Հիպնոսողը բարի է տրամադրվել. իրականության մեջ սա խաբէություն է: Լավ խաբկանք կամ ձերմակ կախարհություն չկա: Ոչ ոք թող մտածի, թե օգտագործելով խաբկանքի ուժը կարող է «դրական փոփոխություն» առաջացնել:

Երբ քննում էի այս հարցը մի բան էլ հայտնաբերեցի. ուղեղին ազդող թմրեցուցիչները հազարավոր տարիներ օգտագործվել են վերացնելու համար: Անցյալին հույն փիլիսոփաները թմրեցուցիչ էին օգտագործում վերանալու համար: Այս թմրեցուցիչը աճում էր ցորենի դաշտերի մեջ եւ գործածվում էր հունական մեդիաններում:

Դիպված չի որ թմրեցուցիչի գործածությունը եւ խաբկանքի կիրառումը այս երկրին մեջ սկսվեց 1960ականներին: Երկուքը միասնաբար: Թմրեցուցիչները ծուլերն են գործածում վերանալու: Թմրեցուցիչները մոլորեցնում են: Ես գիտեմ մեկը, որ թմրեցուցիչը փոխարինել է մտախոհությամբ, փորձել է ետք թե կարող է նույն վերացական վիճակը ստանալ: Այս ձեւը ավելի էժան եւ անվնաս է... այդպես է համոզվել:

Բոլոր նրանք որ կանոնավորապես վերանում են, ասում են թե հանդիպում են ոգիների. եթե ճիշդ է, դրանք դեւեր են եւ կարող են որեւէ կերպարանք ստանալ:

Փիլիսոփա եւ հոգեբան անհատներ իրենց վերացման ընթացքին ունեցել են այդ փորձառությունը եւ հանդիպել ոգիների, նրանց կոչում են նախատիպ պատկեր կամ «իտեալական ձեւ»: Խստապահանջ մարդաբանը չի հավատում ոգիների գոյության եւ եթե ճիշդ է նրանց անվանում է արտերկրային էակներ, որոնք եկել են տարբեր աշխարհներից եւ ունեն գարգացման բարձր աստիճան ու կարող են հաղորդակցիլ այնպիսի ձեւերով՝ որ մարդկությունը տակավին չի հայտնաբերել:

Կարճ, սատանաները ասում են մարդուն այն ինչ որ ուզում է լսել ու ընդունիլ: Զարմանալի, շատեր որոնք չեն ընդունում Աստուծո գոյությունը հավատում են այսպիսի սուտերի: Դարերը ոչ մի բան չեն փոխել մարդու մեջ: Տակավին ապրում ենք Հին Կտակարանի շրջանը:

Կարելու է գիտնալ, թե անցյալի բոլոր խորհրդավոր կրոնները եղել են Համաստվածային: Համաստվածությունը ստեղծվել է Միջագետքի Բաբելոն քաղաքին մեջ եւ արագորեն տարածվել աշխարհի չորս ծագերը:

Հինդուիզմը բաբելոնյան համաստվածության տարբերակն է (արիացիներն են տարել): Բուդդայականությունը հինդուականության տարբերակն է: Արեւելյան բոլոր կրոնները ունեն բաբելոնի կնիքը, ուր Աստուծո դեմ հեղափոխությունը սկսվել էր ջրհեղեղից առաջ: Այնտեղ էր այս ամբողջ խառնիճաղանճը: Եղել է եգիպտական կրոնը (ծանոթ որպես Օգիրիսի խորհրդապաշտություն): Արաբական, Բաբելոնյան եւ Պարսկականը (Զրադաշտություն), Ասորեստանյանն ու Փյունիկյանը (նաեւ Բաալ պաշտամունքը), հետագային Հունականն ու Հռովմեականը: Այս բոլորին ակունքը հին Բաբելոնն է, Նիմրուդի օրերից:

Աստված Բաբելոնի աշտարակի պատճառով բաժանեց ժողովուրդը բայց խորհրդապաշտության վերջ չդրավ, այլ դանդաղեցրեց ընթացքը: Հետագային նոր քաղաքակրթություններ ծաղկեցին Եգիպտոսի, Պարսկաստանի, Հնդկաստանի եւ այլ երկիրների մեջ, բայց հին սովորությունները վերագարդեցին: Ժողովուրդը իր հետ էր տարել իր հավատքն ու կիրառությունները:

Թեեւ որոշ փոփոխություններ կատարվեցին այս «նոր» խորհրդապաշտությունների մեջ, զանազան լեզվական խմբերի ստեղծած նոր քաղաքակրթությունների ընթացքին: Բայց հիմնականը մնացել էր նույնը: Անցյալի բոլոր կրոնները ունեցել են խորհրդավոր քրմություն, որոնք իշխում էին երկրի կամ կայսրության վրա, ընտրելով իրենցից մեկը որպես քուրմ-թագավոր: Քուրմը պարտավոր էր սովորել գաղտնի ծեսեր եւ խորհուրդներ: Երբ նորընծան հասնում էր քրմության վերին աստիճաններին, գաղտնի վարդապետությունը բացատրվում էր: Այս կրոնների անբաժանելի մասն էր սատանայի պաշտամունքը. կոչվում էր գերեզմանի կամ ներքնաշխարհի Աստված եւ պատկերվում էր օձի կամ վիշապի ձևով:

Քրմապետերը խորը վերացած վիճակում, առնում էին իրենց հրահանգները սատանայից կամ նրա ներկայացուցիչներից: Խորը վերացման արվեստի գաղտնիքը միայն քրմապետերը գիտեին: Հետագային այս արվեստը փոխադրվեց գաղտնի ընկերություններին: Նույն արվեստը կամ նրա տարբերակը փոխանցվեց արեւմտյան հավաքականություններին ոչ վաղ ժամանակներում, միայն մի քանի սերունդ առաջ:

Քուրմերի հետ հաղորդակցող չար ոգիները, աստվածներ եւ աստվածուհիներ էին: Հավատում էմ, որ կուռքերը իրական պատկերներն են սատանաների: Ուրեմն սատանային էին պաշտում:

Վերացումը կրակի հետ խաղալ է:

Սատանան իր սպասավորների միջոցով պիտի փորձի պարտադրել Աշխարհի Նոր Օրենքը:

Գաղտնի նվիրապետությունը համակարգված ձևով առաջ է տանում իր ծրագիրները, օգտագործելով քրիստոնեաներին:

Անկարելի է գիտնալ, թե Մ. Նահանգներում քանի հոգի են հետեւում գաղտնի խոկումների, բայց հաստատ կարող եմ ասել, որ հազարներով բազմապատկվել են վերջին երեք տասնամյակներին: Այս շարժումը ունի իր ղեկավարությունը, որոնք հետեւորդների համար տպագրում են հսկայական ծավալների գրականություն: Եթե փորձեմ կարող եմ ձեռք ներկայացնել հազար կազմակերպությունների ցանկ, որոնք զբաղում են այս գործերով: Այս խմբերից մի մասը զբաղվում է փոքր համայնքներով: Քաղաքների մեծ հրատարակչությունները ունեն հազարավոր նամակագրական ցանկեր:

Նոր Ժամանակ Ծարժումի ղեկավարությունը գիտի՝ թե ինչ է անում եւ ում հետ է հաղորդակցում (չար ոգի), բայց հետեւորդներից շատեր չգիտեն, թե սատանան են պաշտում:

Նոր Ժամանակավորների մեծ մասը անգիտակցաբար են միացել շարժումին, աշխարհի խաղաղությունն բերելու եւ սուրբ առողջություն՝ յոկա եւ վերացական խոկում կատարելու համար: Ես խղճում եմ այդպիսիներին, որովհետեւ չգիտեն թե ինչ են անում:

Աստվածիմաստակերպ ընկերությունը ավանդաբար առաջնորդում է այս շարժումը, խաղալով կարեւոր դեր՝ համոզելու մարդկությունը, որ ընդունի Աշխարհի Նոր Օրենքը: Կազմակերպությունը հրատարակել է մի շարք գիրքեր. թվենք մի քանի հատը՝ «Ազգերու ճակատագիրը», «Քրիստոսի Վերահայտնությունը», «Նոր Ժամանակի Աշակերտությունը եւ Գաղտնի Վարդապետությունը», հեղինակ՝ ընկերության հիմնադիր Հելենա Փեթրովա Բալավսքի:

Բալավսքին իր գաղտնի վարդապետություն գիրքին մեջ գրում է (էջ 53). «Ավելի լավ է իշխել դժոխքում քան ծառայել դրախտում» կամ «լավ է լինել մարդ (երկրի արտադրությունների թագր) եւ թագավորել, քան թե կորսվիլ սուրբ հոգիների դրախտում»:

Գաղտնի վարդապետություն գրքի մեջ էջ 76ի վրա կարդում ենք. «Ան (սատանան) իտեալների մեծագույնը, զոհաբերության գագաթնակետը – աստվածացումը – մարդկության իմացականության անկախության համար...»:

Գիրքը շատ մեծ ազդեցություն է թողել Հիթլերի վրա: Բալավաքին գիտի թե Աստված գոյ է, բայց ըմբոստանալով անցնում է սատանայի կողմը: Նա կարճ ժամանակի համար հրատարակում է «Սատանա» հանդեսը, բայց ժողովրդի ճնշումին տակ շուտով դադարում է լույս տեսնելուց:

Աստվածիմաստակերպ ընկերության մյուս ղեկավարը՝ Ալիս Բեյլին հիմնում է Սատանայի Մամուլը, տպագրելու եւ բաժանելու ընկերությունը (1920ի մոտ): Կրկին ժողովուրդին ճնշումին տակ փոխում է անունը՝ լինում է Լյուսիի Մամուլը, իսկ այժմ՝ Լյուսիի Ավանդ: Կեդրոնը Նյու Յորք է, Միացյալ Ազգերի հրապարակ: Ունի ավելի քան վեց հազար անդամ հովանավորում է մեկ-աշխարհի շարժումը:

1920-30ական թվականներին Աստվածիմաստակերպ ընկերությունը հիմնադրում է մի քանի սատանայական ընկերություններ, ինչպես Արգան (գաղտնի) դպրոցները (Նյու Յորք, Լոնդոն, ժընևե եւ Բուենոս Այրես), Եռանկյունիները եւ Բարյացակամ Աշխարհ:

Արգան դպրոցները մարգումի հստակ կեդրոններ են, որտեղ պատրաստվում է Նոր Ժամանակի ղեկավարությունը: Եռանկյունիները Աշխարհի Նոր Օրենքը քաջալերող տարբեր կազմակերպություն է: Եռանկյունիները, հարյուրավոր 3 հոգիանոց վերացող խումբեր են, որոնք փոխադարձաբար երեւակայում են լույսի եռանկյունիներ եւ արտասանում Քրիստոսը (հակաքրիստիսը) վերադարձնելու Մեծ Աղերսը:

1933ին հիմնված Բարյացակամ Աշխարհի խումբ, որին կոչում են նաև «Աշխարհի Ծառայության Նոր Խումբ», պարտականությունն է ամբողջ աշխարհին աստվածիմաստապատկերային սատանայական գրականություն ցրվել: 1961ին միանում է Աշխարհի Միություն կազմակերպության հետ եւ այսօր պատրաստում են աշխարհի կառավարություն ծրագրավորումը եւ գործադրությունը:

Նոր Ժամանակ կազմակերպություններ, ինչպես Լյուսիի Ավանդը եւ Աշխարհի Միությունը, լավ կապեր ունեն մեկ-աշխարհի քաղաքական ընկերությունների հետ, որոնք մշակում են Աշխարհի Սահմանադրություն եւ Խորհրդարանական Ընկերակցություն, որի պարտականությունը պիտի լինի կամ է արդեն մեզի ուղղակիորեն տանել՝ ի Աշխարհի Նոր Օրենքը:

Աշխարհի Սահմանադրություն Եւ Խորհրդարանական Ընկերակցություն

Աշխարհի Սահմանադրությունը եւ Խորհրդարանական Ընկերակցությունը (ԱՄԽԸ) հիմնադրվել է 1959ին, Լեյքվուդ – Քոլորադո: Այս կազմակերպության հիմնադրման ու զարգացման մեջ մեծ դեր է խաղացել Ֆիլիփ Այզլին, որ 1966ից եղել է ԱՄԽԸի գլխավոր քարտուղարը: Այզլին 1982ից սկսյալ կանոնավորապես կազմակերպում է Աշխարհի Առժամյա Խորհրդարանի հավաքները, որտեղ ընդունվում են մի շարք Աշխարհի Օրենսդրական Օրենքներ: Չորրորդը տեղի է ունենալու շուտով: Ըստ ծրագրի, հինգ նստաշրջաններից հետո պիտի ընդունվի Աշխարհի Նոր Օրենքը:

1987ին, երրորդ նիստին նշանակել են Աշխարհի Առժամյա նախագահն ու Աշխարհի Դահլիճը, որ համահավասար է գործադիր մարմնի, որի պաշտոնն է կազմավարել աշխարհի կառավարությունը: ԱՄԽԸը տպագրել է աշխարհի սահմանադրությունը եւ բաժանել ազգերի խորհրդարաններին եւ կառավարություններին, որոնց մեծ մասը այս խմբերի անդամների ազդեցության տակ են:

Վերջնական ճշդումներն ու սրբագրությունները կատարել են 1991ի գարնան, Փորթուկալի Աշխարհի Սահմանադրականների հավաքին: Հարցը շատ լուրջ է. կը հաջողի՞ն,

կախյալ է ժողովուրդների գիտակցությունից: Եթե իմանաք թե ովքեր են ընդգրկվել այս դավադրության, լքելությամբ կը մոտենաք սպառնալիքին:

ԱՄԽԸի եւ մասնաճյուղերի ռազմավարությունը լուր աշխատելն է. ոչ ոք գիտի նրանց ծրագիրների մասին: Սրանք Նոր Ժամանակի օգնությամբ արագորեն պիտի գործադրեն ծրագիրը, հիմնելով աշխարհի կառավարությունը, այնքան արագ որ մարդիկ ժամանակ չունենան մտածելու, թե ի՞նչ է կատարվում եւ ընդդիմանան:

ԱՄԽԸն չի սիրում «դավադրություն» բառը, նախընտրում է գործածել «գործակցել» կամ «աշխատել փոփոխության համար» բացատրելու իր գործունեությունը:

Այս ամբողջը, անցյալ 30 տարիներին կատարվում է ժողովրդավարության անունին տակ, բայց ամերիկացի ժողովուրդը տեղյակ չի կատարվածից: Օգտվելով Մ. Ն.-ի սահմանադրության ընձեռած բարիքներից, գրում են աշխարհի սահմանադրությունը:

Մոտիկ անցյալում, այս ձեւի մարդկանց դավադրության հանցանքով դատում էին ու կախում հրապարակի վրա: Անցյալ երեք սերունդների խելացի, ծրագրավորված քարոզչությունը ժողովուրդին ընտելացրել է գաղափարին եւ թվում է, թե ժամանակն է հայտարարելու եւ ընդունվելու մարդկության կողմից:

ԱՄԽԸի նպատակն է երկրագունտը վերածել 10 շրջանների, վերցրել են Հռոմի Ակումբի ձեռատետրից: ԱՄԽԸի ծրագիրներից է առաջարկել միջազգային դրամի համակարգ կոչվում է «Նոր Աշխարհի Տնտեսական Օրենք», Հռոմի Ակումբի գործածած ճիշդ նույն բառերը:

ԱՄԽԸի մասին առաջին անգամ լսել եմ 1987ին, մի ընկերակիցի կողմից, որ թափանցել էր կազմակերպության մեջ՝ որպես Նոր Ժամանակավոր: Ընկերս հրավիրվել էր Աշխարհի Առժամյա Խորհրդարանի 3րդ նիստին, որ տեղի էր ունենալու Յունիսին, Մայամի Բիչի մեջ: Ընկերս ինձ էլ հրավիրեց: Լրացրեցի դիմումագիրը, փորձելով ինքզինքս ներկայացնել աշխարհացող եւ Նոր Ժամանակի կողմնակից: Միջազգային Առեւտուրի Մասնագիտությունս եւ Յուկոլավ-Գերման ծնողքս դյուրացուցին գործը: Ես իրենց փնտռած անձն էի. դիմումագիրս ընդունվեց:

Չկարողացա ժողովին մասնակցել, բայց սկսեցին ԱՄԽԸի գրականություն ուղարկել: Ջարմանում էի. այնտեղ հստակորեն գրվել էր կազմակերպության նպատակը՝ հիմնել աշխարհի կառավարությունը: Նույնիսկ քաջալերում էին պատվիրակների զավակների ներկայությունը ու հստակ պաշտոններ էին տալիս: ԱՄԽԸի պաշտոնական «հոգեկան կապ»ը հնդիկ Յոկա Շանթ Սվարուփը «Երախանների Խաղաղ Օղակ» հավաքներն էր կազմակերպում:

Ելույթ ունեցողների մեծամասնությունը Ծայրագույն Արեւելքի Յոկաներն ու Մուամիներն էին: Սրանց կողքին ցանկի վրա էր նախագահական ընտրությունների թեկնածու՝ վերապատվելի Ջեսի Ջաքսընը, որ Արտաքին Հարաբերությունների Խորհուրդի անդամ է: Նա մի քանի ավրիկյան-ամերիկացիներից էր, որ ընդգրկվել էր այս գործին: Այգլին շատ հանգիստ էր զգում. նա նիստի ավարտին պատգամավորներից պահանջում է որ տարածեն ժողովին որոշումները:

Մայամի Բիչի նիստից հետո շարունակեցին ուղարկել տեղեկություններ, իսկ ես շարունակեցի խաղալ դերս: 1989ին եւ 1990ի սկզբներին ոչ մի տեղեկություն ստացա: Ջարմանալի էր: 14 Մարտ 1991ին, հարաբերությունները շարունակելու եւ վստահեցնելու համար, թե ես «իրենցից եմ», կապվեցի Այգլինին հետ: Երկար խոսեցինք, զգացի, թե նա չի կասկածում իմ վրա:

Այգլին ինձ տալիս էր վերջին նորությունները. նա ասաց, թե տարվա վերջը տեղի է ունենալու մեծ հավաք, որտեղ վերջնականապես ընդունվելու է Աշխարհի Սահմանադրությունը: Այդ հավաքը տեղի էր ունենալու Ադեքսանդրյա – Եգիպտոս:

Այլեւս չէի կարող սպասել, պետք է բացահայտեի գիտցածներս: Գնացի Հանթինկլըն հրատարակչատուն: Հունվարին սկսեցի աշխատել այս գիրքի վրա:

1991 ձմրան որոշել էի մասնակցել Աշխարհի Սահմանադրական հավաքին: Փետրվարի վերջերին ստացա փաթեթ, որտեղ ասում էին, թե ժողովի տեղը փոխվել է, այն տեղի է ունենալու Լիզբոնի մոտ – Փորթուկալ: Ուսումնասիրելով փաթեթը նկատեցի, թե

մասնակցության նոր խիստ պայմաններ է դրվել, մասնավորաբար պահանջվում էր «փաստել» թե քաջալերում եմ հավաքը ու նրա նպատակադրած աշխարհի կառավարությունը:

Դա կարելի էր անել մի քանի ձևերով. 1) հավաքել 7 հարյուր կամ ավելի ստորագրություն, 2) հրատարակել ազդեր 25 հազար օրինակից ավելի տպագրվող թերթերի մեջ, 3) գտնել 5 հազար եւ ավելի անդամ ունեցող կազմակերպություն, որ վավերացնի Աշխարհի Միությունն ու ընդունի սահմանադրությունը: Դժվար էր. չէի կարող հավաքել ստորագրություններ մի քանի համար, որ ես չեմ հավատում, մասնավորաբար այսպիսի սատանայական միջոցառման համար:

Երկար մտածել էոք որոշեցի չմասնակցիլ: Բայց եթե ասէի ճշմարտությունը (այսինքն՝ ես ժողովի չեմ մասնակցելու որովհետեւ խիղճս հանգիստ չի եւ գրում եմ մի գիրք որ պիտի բացահայտի ձեր կազմակերպության գործունեությունը, եւ այլն) թերեւս ողջ չմնայի ձեզի փոխանցելու այս պատգամը (գիրքը): Երկար մտածել էոք, գրեցի նամակ:

Նամակը քննադատական էր: Գրեցի Այզլիին. «ինչ որ անում ես շատ վտանգավոր է, դու վտանգում ես քեզի ենթակա մարդկանց ֆիզիքական եւ հոգեկան գոյությունը, քո աշխատանքը սխալ հիմերի վրա է դրված, դա համաստվածություն է: Նոր ժամանակի Շարժումը միայն քառս եւ կործանում պիտի առաջացնի: Հաճիս վերաքննե արածներդ»:

Բոլոր նրանք ովքեր կարդում են այս գիրքը, թող իրենց կարծիքը նամակով հայտնեն Այզլիին, ստիպեն որ ետ կանգնի իր գեշ նպատակներից: Հասցեն ու հեռախոսի համարները կը գտնեք գրքի վերջում: Եթե վախենում էք ձեր անունը հայտնելէ, մի նշեք ձեր անունն ու հասցեն: Բայց շատ գրեցէք: Թերեւս եթե իմանան հակաճառողների թիվը՝ կանգնեցնեն գործունեությունը:

Ես շատ լավ եմ ուսումնասիրել սրանց գործունեությունը, վստահ կարող եմ ասել աշխարհացողների վերջնական նպատակն է իրագործել մեկ-աշխարհ կառավարությունը եւ գործադրել Աշխարհի Նոր Օրենքը:

Կապերը

ԱՄԽԸ-յան նպատակակետն է Աշխարհի Միությունը: Ըստ 1987ի Փետվար-Ապրիլ տեղեկագրության, Աշխարհի Միության գլխավոր քարտուղարը՝ Արի Ա. Բ. Փաթելը ԱՄԽԸի պատվակալ նախագահն է: Աշխարհի Միության ատենապետը՝ Պրն. Ն. Ա. Բասն երկու փոխ-նախագահներից մեկն է: Ֆիլիփ Այզլին Աշխարհի Միության էլ անդամ է: Աշխարհի Միության նոր գլխավոր քարտուղարն է Սամար Բասն, որ ԱՄԽԸի էլ պաշտոնյա է:

Աշխարհի Միությունը 1961ին միացել է Բարյացակամ Աշխարհին (Լյուսիի Ավանդի հիմնած ընկերությունը): Լյուսիի Ավանդը Աստվածիմաստաբանական ընկերության մասնաճյուղն է որ ԱզատՄասնության բարձրագույն աստիճաններին հասել է: Լյուսիի Ավանդի անցյալ եւ ներկա անդամներ են Ռոբերթ Մզմարա, Ռոնալդ Ռիկլըն, Հենրի Քիսինջոր, Դեյվիդ Բոքսթեյլըր, Փոլ Ուոքըր, Ջորջ Շուլց – նույն մարդիկը որոնք ղեկավարում են Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը եւ Եռակողմ Հանձնաժողովը:

ԱՀԽ/ ԱՄԽԸի, Լյուսիի Ավանդի եւ Աշխարհի Միության միջեւ գոյություն ունեցող կապը շատ հստակ է: Պետք չէ մոռնալ թե ԱՀԽը Միացյալ Ազգերի Կազմակերպության ետեւում կանգնած իսկական ուժն է:

Տարբեր կազմակերպություն, որ աշխատում է Այզլիի ԱՄԽԸի հետ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն է (ԵՀԽ): Մինթյա Ուեդելը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդի նախագահը, 1975ից Աշխարհի Առժամյա Խորհրդարանի պատվակալ նախագահներից է: Այս ԵՀԽի գաղտնի ծրագրի ամենից բացահայտ ապացույցն է: Այս կազմակերպության մաս է կազմում Ամերիկայի Ավետարանական եկեղեցիի ղեկավարությունը, որ փորձում է միանալ Հռոմի եկեղեցիին: ԵՀԽի նպատակն է «միացնել» քրիստոնեությունը որպեսզի կարողանա դուրսբերել հիմնել Աշխարհի Նոր Օրենքը: Այսպես

ավելի հեշտ է հասկնալ, թե ինչի Խորհուրդը քաջալերում է միահավատությունը (աշխարհի բոլոր կրոնները միացնել): Այս միությունը հարկավոր է որպեսզի մարդկությունը ընդունի աշխարհի կառավարությունը:

ԱՄԽԸի մասին կարող էք պարզ գաղափար կազմել, գիտնալէ ետք թե նրա նախագահը քանի տեղ անդամ է: Այգլին անդամ է Աշխարհի Միության, Կրթողների Միջազգային Ընկերության, Միջազգային Ներում, Ամերիկյան Քաղաքային Ազատության Միության, Ամերիկյան Կաճառ Քաղաքական եւ Ընկերային Գիտությունների, Աշխարհը Կրթողների Ընկերություն, Արբանյակային Ընկերություն, Աշխարհի Ապագա Ցանց, հիշելու համար մի քանին: Դժվար է երեսակայել թե նա զբաղած լինելով իր բուն պաշտոնով ինչպես է ժամանակ գտնում ուստելու կամ քնանալու, տակավին 1958ին խորհրդարանի թեկնածու լինելու: Երեւոյթները ցույց են տալիս Աշխարհի Ապագա Ընկերությունը է Հռոմի Ակումբի կողմից մկրտված «Աշխարհի Ասյանը»:

Մեկ-աշխարհի կառավարության քաղաքական, տնտեսական եւ հոգեկան նպատակները միանում են Աշխարհի Ապագա Ընկերության մեջ: Հասարակ հայտարար է բոլոր աշխարացնող ընկերությունների:

Աշխարհի Ապագա Ընկերության հետ պետք է զգուշ լինել:

Նոր ժամանակ/ մեկ-աշխարհի շարժումը իր նիստերին քննարկում է Ամերիկյան Դավադրությունը, Միջազգային Կառավարման Ապագան, Համաշխարհային Մտածողություն, եւայլն: Ամենից նշանավոր նիստը տեղի է ունեցել 1984ին, որտեղ քննարկվել է աշխարհի կառավարության ծրագրավորումը:

Այս ժողովից է ծնել ԱՄԽԸն, որի պարտականությունն է հաջողացնել Աշխարհի Նոր Օրենքը:

Ստեղծեցին ԱՄԽԸն որպեսզի ժողովուրդը չընդվզի եւ տրվի այն երեւոյթը, թե սա ժողովրդական շարժում է, այդ իսկ պատճառով մյուս կազմակերպություններին ժամանակավոր հանգիստ տվեցին: Արտաքին երեւոյթը այս է. «Մենք, ժողովուրդ» ենք, այս պատմական շարժումին «աշխարհի խաղաղության եւ միություն» տերը:

1984ի ժողովին ներկա էին Ամերիկյան Մարդկայնական Ընկերությունը, Հռոմի Ակումբը, ԱՀԽ, Աշխարհ 2000 Ծրագիրը, Աշխարհի Խաղաղություն, Կրթողների Միջազգային Ընկերությունը, Կիների Ազգային Կազմակերպությունը, Անոթի Ծրագիրը, Միջազգային Դրամական Հիմնադրամը, Աշխարհի Դրամատունը, Եռակողմ Հանձնաժողովը, եւ Աշխարհի Ապագա Ընկերությունը:

Ներկաները նախորոք գիտեին թե պիտի քննարկվի աշխարհի կառավարության ծրագիրը: Հետեւաբար, բոլորն ալ պաշտպանում էին Աշխարհի Ապագա Ընկերությունն ու ԱՄԽԸի Աշխարհի Կառավարությունը:

Բազմաթիվ ընկերությունների շարքին ներկա էին ԱԹ. եւ Թ., Ջեներալ Էլեքթրիք, Ջեներալ Մոթորզ, Այ. Պի. Էմ., Քսերոքս:

Ջեներալ Էլեքթրիքը, Ջեներալ Մոթորզը եւ Քսերոքսը Դեյվիդ Րոքֆելլերի Եռակողմ Հանձնաժողովի նեցուկ են:

Գրվածները ԱՄԽԸի գործունեության մի մասն է, սա սառուցալեռի երեւցած մի մասն է: Հարյուրավոր ընկերություններ ընդգրկվել են այս դավադրության մեջ:

Գլուխ 5

Ազատմասնություն Թաքուն Ուժը (Արագացուցիչը)

ԱՄԽԸի գործունեությունը ուսումնասիրելու սկսելուց երկու տարի առաջ գտա որ Աստվածիմաստական ընկերությունը եւ իր քույր կազմակերպությունները կարելուք դեր են ստանձնել հիմնելու Նոր Ժամանակ Շարժումը: Մա պարզ է, նորություն չի, Նոր Ժամանակ Շարժումը ուսումնասիրողներին համար: Բայց 1985ին սկսեցի կասկածել, թե գոյություն ունի ավելի կարելուք տնտրիւնող, որ ղեկավարում է տնտեսական, քաղաքական եւ հոգեկան տարրերը՝ մեկ-աշխարհ կառավարության: Կասկածը սկսեց երբ խոսակցում էի դասընկերներիս մեկի հետ: Նա ուզում էր հայտարարության դնել զանազան լրաբերների, նրանց շարքին **Նոր Ժամանակ** հանդեսի մեջ (այժմ եղել է Սկոտլանդական Ծես հանդես): Իր հարցին պատասխանում են Մասունական վերտարությամբ նամակ: Նամակի վերջում գրվել էր «Աշխարհի Գլխավոր Մայր Խորհուրդ» եւ «Երեսուն Երեքի Գլխավոր Խորհուրդ եւ Վերջին Աստիճան»: Ինչ կապ կար Նոր Ժամանակ Շարժումի եւ Ազատմասնության միջեւ: Ամիսներով սերտեցի հարցը: Նախ ենթադրեցի, թե հանդեսին անունը պատահական նմանություն է եւ ոչ մի կապ գոյություն ունի երկուքին միջեւ, բայց Լյուսի Ավանդի հրատարակած **Երեսուն Տարիների Աշխատանք** Ալիս Բեյլիի երեսուն տարիների աշխատանքի ամփոփումը, գիրքը հակառակն էր փաստում: Ալիս Բեյլին եղել է Աստվածիմաստական ընկերության ղեկավարը, նաեւ Լյուսի Ավանդի ու Արգան (գաղտնի) դպրոցների հիմնադիրը: Ըստ այդ հրատարակության, Ալիս Բեյլին հաճախակի ցուցմունքներ է ստացել իր հոգեկան առաջնորդ Ազատմասուն Չվալ Խուլուից, որին դիմում էին որպես Թիբեթյան Վարպետ:

Ալիս Բեյլին գրել էր. «Նվիրապետության Արտաքնամարմնացումը» գիրքը:

Երբ շարունակեցի ուսումնասիրություններս, բացահայտեցի որ Բեյլիի նախորդները Տիկին Բալավսքին, Աստվածիմաստական ընկերության հիմնադիրը եւ նրա հաջորդը Աննի Բեսանթը նույնպես ընդգրկվել էին Ազատմասնության շարքերում (պատմականորեն միայն տղամարդիկ ընդունվում էին Մասունական շարքերում, 1893ին ֆրանսական օթյակ «Ազատմտածողները» որոշում են ընդունիլ նաեւ իգական սեռը):

Կասկած չարթնցնելու համար, Լուսավորյալ Ազատմասունները որոշում են Նոր Ժամանակ Շարժումի կազմակերպումը հանձնել Մասուն կիներին (Բալավսքի, Բեսանթ, Բեյլի):

Կազմակերպչական Կառույց

Համոզվել է տք, որ Ազատմասնությունը շատ մոտ կապեր ունի Աստվածիմաստականության եւ հետեւաբար Նոր Ժամանակ Շարժումի հետ, որոշեցի շատ ավելի լավ ծանոթանալ Մասունական հաստատության, ուսումնասիրել նրա ծնունդը, նպատակը, հավատքը: Լավ հասկնալու համար այս նյութերը, հարցաքննեցի ներկա եւ նախկին Մասուններ, որոնցից ութն ունեին երեսուն երկու կամ երեսուն երեք աստիճան:

Այս խոսակցություններից եզրակացրի. Մասուն կարգի միանում են օթյակի ճնշումին տակ կամ ընկերակցության սիրոյն: Ուրիշներ միանում են իրենց ընկերային վիճակը բարելավելու: Նշանավոր գործարարներ եւ պետական պաշտոնյաներ Մասուններ են: Տակավին կա ժառանգական ձեւը:

Ընթացիկ Մասունների վկայությունը հիմնականորեն տարբերվում էին Կարգը թողածոներից: Ընթացիկ Մասունները գաղափար չունեին Կարգի կրոնական նպատակներից:

Նրանք հավատարիմ են օթյակին եւ ասում են, թե ԱզատՄասնությունը միջազգային գաղտնի եղբայրակցություն է, հիմնված բարերարության վրա:

Մյուս կողմից նախկին Մասոնները ասում էին, թե կազմակերպությունը հակաքրիստոս է եւ շատ վտանգավոր, մասնավորաբար բարձր մակարդակներում, ավելացնելով՝ նա սատանայական ներշնչում ունի: Չկարողացա հասկանալ թե ինչի այսքան տարբերություն կա նախկին եւ ներկա անդամների համոզմունքներում: Եզրակացրի, ընթացիկ անդամները երդումի տակ են եւ չեն կարող բացահայտել ինչ որ գիտեն մինչեւ հասնեն մի տեղ, ուր նրանց բացահայտվի Կարգի իսկական նպատակները:

Այս երկրին մեջ գտնվող երեք միլիոնից ավելի անդամների մեծամասնությունը կարծում են, թե նա վեհանձն ու առաքինի ընկերակցություն է: Մինչդեռ կուրորեն երդվել է եւ ներթարկվել առաջ լավ կանեն որ իմանան Կարգի թաքուն ծրագիրները:

Մասոն լինելու պայմանն է հովանավորողի միջոցով դիմում ներկայացնել: Նոր անդամը նախ միանում է **կապույտ** օթյակին: Կազմակերպությունը բաղկանում է 3 աստիճաններից. 1) աշակերտ, 2) արվեստակից, 3) Վարպետ Մասոն: Նորեկներին ասում են, թե յուրաքանչյուր աստիճան բարոյական դասեր է սովորեցնում: Աստիճանը անցնելու պայմանն է մասնակցի լուսաբանող ծեսերին:

Երբ անդամը ստանա երրորդ աստիճանը, անցնում է Հառաջացած Մասնության երկու ճյուղերին, դրանք են Սկոպտիական Ծես եւ Յորք Ծես: Սկոպտիական Ծեսը ունի 29 աստիճան, չորսից երեսուն երեք, հավանաբար երկու ճյուղերից գորավորագույնն է:

Սկոպտիական Ծեսի մյուս աստիճանների նման երեսուն երեք աստիճանը չես կարող շահիլ, ընծայվում է գլխավոր խորհուրդի անդամի կողմից: Այսպիսով խորհուրդն է ընտրում թե ով է լինելու ներքին շրջանակի մասնակից: Ըստ հյուսիսային իրավասության գլխավոր խորհուրդի, այս աստիճանը տրվում է անդամի, որ «եղբայրակցության կարեւոր ծառայություն է կատարել կամ այդ ծառայությունը վարք է բերել Կարգին»:

Եթե Մասոնը նախընտրում է առաջանալ Յորք Ծեսի մեջ, պետք է ստանա եւս 10 աստիճաններ, հետեւյալ ձեւով. 4) Արժանի Վարպետ, 5) Անցյալ Վարպետ, 6) Հոյակապ Վարպետ, 7) Թագավորական Կամար, 8) Թագավորական Վարպետ, 9) Ընտրյալ Վարպետ, 10) Գերհոյակապ Վարպետ: Իշխանության աստիճաններն են. 11) Կարմիր Խաչի Ասպետ, 12) Մալթայի Ասպետ, եւ 13) Տաճարական Ասպետ:

Սկոպտիական Ծեսի երեսուն երեք աստիճանի հասնողներն ու Յորք Ծեսի Տաճարական Ասպետները ընտրությունը ունեն միանալու խորանին եւ պաշտոնապես կոչվում են Հին Արաբական Կարգի Խորհրդավոր Խորանի Ազնվականներ:

Տարբեր Մասոնական մասնաճյուղեր ընդունում են նաեւ ԿՐՈԹԹՈՆ եւ Լիբանանի Բարձր Մայրին:

Տիկիների խմբերը ընդգրկվել են հետեւյալ կարգերի մեջ. Արեւելյան Աստղ եւ Անթառամ ու Ճշմարիտ Բարեկամը: Տղաքը կարող են միանալ Դը Մոլայ եւ Շինարարների Կարգերին: Աղջիկները՝ Դուստրերի եւ Ծիածանի Կարգերին:

Աշխարհի գաղտնի ընկերությունների մեծ մասը ԱզատՄասնությունը ընդունում են որպես մայր կազմակերպություն, որտեղից բխում են իրենց արարողությունները, ծեսերը եւ հավատքը:

Նախկին Մասոններ ինձ ասացին, որ կարդամ որոշ Մասոնական գիրքեր, ինչպես **Բարոյականություն եւ Վարդապետություն եւ Մաքիի ԱզատՄասնության Համայնագիտարանը**: Այս գրքերի մեջ կարելի է ԱզատՄասնության մասին ամեն բան գտնել: Հակառակ գործադրած ջանքերիս, այն ժամանակ ես չկարողացա գտնել այս գիրքերը:

Ամենայնդեպս գտա **ԱզատՄասնությունը եւ Հին Աստվածները** գիրքը՝ առաջին անգամ տպագրված 1921ին:

Այս գիրքը Նոր Ժամանակի հանդես է: Շատ հստակ նշումներ կան գալիք մեկ-աշխարհ կրոնի մասին, որ ԱզատՄասնության նպատակն է: Այս եւ այլ Մասոնական գրություններ ցույց

են տալիս, որ ԱզատՄասունները արհամարհում են մարդը (մարդը բարձրացնում են Աստուծո սատիճանին) եւ հավատում աստղաբաշխության:

Սրելով ջանքերս՝ ավելի խորացա ԱզատՄասունության պատմության մեջ:

Մասունականության Ծնունդը

Ամիսներ ապարդյուն աշխատել է տք վերջապես 1986ին բացվեց մի դուռ: Մի Կիրակի գնացել էի եկեղեցի, ինձ մոտեցավ մի ծեր կին եւ հարցրեց թե ոյեւէ բան գիտե՞մ ԱզատՄասունության եւ նրա ազդեցության Նոր Ժամանակի վրա: Պատասխանեցի, թե կապ գոյություն ունի բայց տակավին ինձ համար հասկնալի չի Մասունական Կարգի դերը այդ բոլորին մեջ:

Տիկինը ինձ ասաց, թե անցյալ քսան տարիներին ուսումնասիրել է Մասունական շարժումը եւ ունի նյութերի հավաքածո (մեծ մասը մահացած Մասունների այրիներից): Ան պատրաստ էր ինձ հանձնելու ինչ որ ուներ: Վերցրեցի բոլորը:

Հաջորդող ամիսներին ուսումնասիրեցի Մասունության մասին գրված հայտնի գրեթե բոլոր հրատարակությունները: Անընդհատ հանդիպում էի հետեւյալ անուններին՝ Լուսավորյալներ, Տաճարական Ասպետներ, Վարդախաչյաններ, որոնք նախապես ինձ թվում էին թե առասպելներ են: Բայց շուտով համոզվեցի, որ ոչ միայն նրանք գոյություն ունեն, այլ ԱզատՄասունությունը գնոստիկության եւ հին խորհրդավոր կրոնների շարունակությունն է:

Շատեր ԱզատՄասունության ծնունդը տեղադրում են 1717ին, բայց Մասունական տեղեկագրեր նշում են, թե կազմակերպության պատմությունը շատ ավելի հին է:

Մի շարք սուտ կրոններ եւ ընդհատակյա շարժումներ ալ ազդել են Մասունական կարգի վրա, բայց նշվածներն են գլխավոր աղանդներն ու կրոնները, որոնց վրա հիմնվել է ԱզատՄասունությունը եւ Նոր Ժամանակ Շարժումը: Անունները փոխվում են բայց գաղափարը, ռազմավարությունը եւ նպատակը մնում են նույնը:

ԱզատՄասունության եւ կազմակերպված խորհրդապաշտության պատմությունը նույնն է, մանավանդ արեւմտյան աշխարհի մեջ: Կազմակերպված խորհրդապաշտության համապարփակ պատմությունը տվել է Ալբերթ Փայքը՝ իր 861 էջնոց գիրքին մեջ, որ կոչվում է **ԱզատՄասունության Սկզբնական Ծեսի Հին եւ Ընդունված Բարոյականության Վարդապետությունը**: Փայքը օգտագործելով իր տրամադրության տակ գտնվող աղբյուրները (նա եղել է ԱզատՄասունության երկար տարիների ղեկավարը՝ 1859-1891), կարողացել է Խորհրդավարությունների ժամանակագրությունն ու տարածումը արձանագրել հին Բաբելոնից մինչեւ մեր օրերը: Գրեթե նույնը **ԱզատՄասունների Ազդարարը** գիրքին մեջ:

Այս ամբողջը կարելի է գտնել Մասունական գրադարաններում: Օրինակ՝ Եվրոպա, **ԱզատՄասունների Սրահի** գրադարանը, Մեծ Թագուհի փողոց, Լոնդոնի սրտին վրա: Գրադարաններ կան Մ. Ն.-ի մեջ, մեծագույնը գտնվում է Տաճարի Տան մեջ, մայրաքաղաք Ուաշինգթոն:

Տաճարի Տունը ԱզատՄասունության Աշխարհի Մայր Գերագույն Խորհուրդի (Մասունների կառավարությունը) կեդրոնատեղին է, որտեղ գտնվում է հոյակապորեն կառուցված Մասունական Խորանը եւ հսկա գրադարանը (50-60 հազար գիրք) :

Եթե ԱզատՄասունությունը ընկերային կազմակերպություն է, ինչպես փորձում են փաստել, ապա ինչպես բացատրել անհավատալի թվով գրքերի գոյությունը: Ո՞ր ընկերային կազմակերպությունի ունի երկուբուկետ միլիոն փաստաթուղթ եւ 60 հազար տպագրված գիրք: Մա թելադրում է որ պարզ հասարակության ծառայության համար հիմնված խմբից շատ ավելի մեծ մի բան է ԱզատՄասունությունը:

Այս ամբողջի սկիզբը հին քուրմերն են: Ժամանակի ընթացքին գաղտնի ծեսերը, հավատքը գրանցվել եւ հասել են հին հույն փիլիսոփաներին: Ըստ Մասունական աղբյուրների՝ այս տեղեկությունները սերունդից սերունդ անցել են խորհրդապաշտ քահանաների միջոցով:

Մասնական Կարգը հավակնում է լինել այդ շրթայի վերջին օղակը, որ պահում ու պահպանում է այդ հին գիտելիքները:

Կարգի սատանայական ժառանգության մանրամասնությունները տվել են Մասն պատմաբաններ՝ Փայքը, Մաքայը, Հեյվուտը, Հոլը: Այնուամենայնիվ, հասկնալու համար Մասնական Կարգի ամբողջական դերն ու տեղը, մի քիչ աշխարհի պատմություն է պետք:

Պատմական Ակնարկ

Ջրհեղեղից հետո աշխարհ մաքրվել էր ամեն տեսակ աղտոտություններից: Մնացել էր միայն մեկ ճշմարիտ ընտանիք: Աստված ջրայնացած մարդկանց կատարած մեղքերից պատժել էր նրանց: Բայց մի քանի սերունդ հետո մարդը նորից սկսել էր զեղծել, մեղք գործել:

Այս է փաստում Բաբելոնի Աշտարակի կառույցը, որ առաջին Չիկուրաթն էր (պաշտամունքի աշտարակ, որի գագաթին կառուցվել էր խորանը): Համաստվածության հովանիին տակ թաքունն ու խորհրդավորությունը սկսեց տարածվել: Աբրահամի ժամանակ մարդկությունը խաթարված էր: Սողոմ եւ Գոմորի օրերն էին, ուր անառակությունն ու անբարոյականությունը հասել էր բարձր համեմատությունների:

Աստված Մովսեսի միջոցով մարդկության պարտադրեց զոհ մատուցանել մեղքերը քավելու համար: Մարդկությունը շարունակեց մեղք գործել: Աստված ուղարկեց իր որդին եւ զոհաբերեց՝ մարդկության մեղքը քավելու համար:

Ներելու եւ հավիտենական կյանքի խոստումը Հիսուսի միջոցով փոխանցեց մարդկության: Շատեր չեն ընդունել Հիսուսը, Պարսկաստան եւ Հնդկաստան մերժել են այդ խոստումը: Այսօր, քսան դար ետք, Ծայրագույն Արեւելքը չի ընդունում Քրիստոսը: Հինդուիզմը – հնագույն համաստվածությունը – շարունակում է իշխել հնդկ ժողովուրդին վրա:

Միջերկրականի ժողովուրդները ավելի հեշտ ընդունեցին Աստծուն եւ մի քանի սերունդ անց Հունաստանի, Հռոմի եւ Եգիպտոսի քուրմերը կորցրին իրենց հակակշիռը ժողովուրդների վրա ու անցան ընդհատակ, իրենց հետ տանելով գաղտնիքն ու ավանդությունները:

Այդ գաղտնիքները սերունդից սերունդ փոխանցվելով անցան Արեւմուտք: Այսօր այն ավելի լավ սերտվել է քան քուրմերի օրերին: Մատանայի նպատակն էր գաղտնի վարդապետությունն ու քուրմերը կենդանի պահել մինչեւ նրանց թիվն ու ուժը բավարարի վերատիրանալու կորցրածին: Գնոստիկությունը համաստվածության ամենից ազդու եւ ընդունված ձեւն է: Խելացի է եւ խաբեբա:

Ըստ Ալբերթ Փայքի «Գնոստիկությունը Քաբալաի մեկ ճյուղն է. Քաբալան գաղտնի գիտությունների բանալին է, Գնոստիկը ծնել է Քաբալայից»:

Քաբալան խորհրդավորությունների միակ մեկնությունն է, պարտականությունն է խաբել Աստծո ընտրյալներին: Հրեաները օգտագործում էին Քաբալան մարգարեների հայտնությունը հակաճարելու:

Գնոստիկություն

Մասնական գրականությունում հատուկ տեղ է տրամադրվել Գնոստիկության: **Բարոյականություն եւ Վարդապետություն** գրքի 40 էջերը տրամադրվել են Գնոստիկության եւ ԱզատՄասնության կապը բացատրելու:

Գնոստիկությունը զարգացել է զանազան աղանդներում, ինչպես Յրդ դարու Մանիքեությունը (սովորաբար կապում են Գնոստիկության հետ), 7րդ դարու Բավիլյանները եւ 9րդ դարու Բոզոմիլները: Անկարելի է այս գրքի պարունակում խոսել Գնոստիկության բոլոր

մասնաճյուղերի մասին, բայց Բոզումիլների ուսմունքը կարող է որոշ գաղափար տալ թե ինչի էին հավատում Տաճարի Ասպետները, որ եղել է ԱզատՄասունների ուսուցիչները:

«Աստված, գերագույն հայրը, ուներ երկու որդի. մեծը կոչվում էր Սաթանաել, իսկ փոքրը Հիսուս: Սաթանաելը նստում էր Աստծու աջ կողմը եւ կառավարում էր երկնային աշխարհը, բայց գոռոզ էր եւ ըմբոստանալով Աստծու դեմ վտարվեց դրախտից: Հետո նա ստեղծեց տեսանելի աշխարհը, արեւը, լուսինը, աստղերը, ապա ստեղծեց մարդը եւ օձը, որին նշանակեց իր նախարարը: Հետո եկավ Քրիստոսը, որ ցույց տա դրախտի ճանապարհը, բայց իր մահը ազդեցություն չթողեց սատանայի վրա եւ երբ Ան իջավ դժոխք չկարողացավ Սաթանաելի տեղը գրավել: Ուրեմն, սատանան ոչ միայն «այս աշխարհի իշխանն է» այլ՝ ստեղծիչը: Հետեւաբար, սատանան ամենից ուժեղն է ու սիրելին»:

Գնոստիկությունը սատանայապաշտություն է, միեւնույն ժամանակ հակաքրիստոս: Այս զգացումն ու հավատքը 12րդ դարուն անցավ Տաճարների Ասպետներին:

Տաճարների Ասպետներ

Տաճարների Ասպետները զինվորական եւ կրոնական կարգ էին: Հիմնվում է Երուսաղեմի մեջ 1118ին, իննը Ֆրանսացի Ասպետների կողմից, Հյուկ Դը Փայեն Դը Շանփայնի եւ Կոդֆրուա Դը Սեն-Օմերի ղեկավարությամբ: Նպատակն էր Խաչակիրների օրերին Սուրբ Երկիր ուխտի գնացողները պաշտպանել: Նրանք Խաչակիրների հետ մասնակցեցին ճակատամարտերի եւ նշանավոր էին իրենց կատարած քաջագործություններով: Երուսաղեմի թագավոր Բոլտուին Բ.-ը իր պալատի քառորդը, որ կառուցվել էր Սողոմոնի Տաճարի տեղը, տալիս է Ասպետներին: Այստեղից էլ անվանվում են Տաճարի Ասպետներ:

Սկզբնական շրջանին Տաճարների Ասպետներին կարող էին անդամակցել միայն ազնվականները: Հետագային, կարգը իր շարքերը բացեց բոլոր նրանց առաջ, որոնք կարող էին նրա նպատակները հաջողացնել: Կարգը արագորեն մեծացավ եւ 1128ին մտավ Հռոմի Պապի հատուկ պաշտպանության տակ:

Խաչակիրների ժամանակ Տաճարների Ասպետները յուրաքանչյուր քրիստոնեա երկրի մեջ ունեին գրասենյակ, ուր հավաքագրում էին խաչակիրների բանակներն ու հավաքում էին նյութական օգնություն ուխտագնացների համար: Ուխտագնացները իրենց հերթին նվերներ էին տալիս Կարգին, որպեսզի Երուսաղեմ երթ ու դարձի ճանապարհին պաշտպանվեն:

Տաճարականները, որոնք մեծամասնությամբ ազնվականներից էին բաղկացած, հողային նվերներ էին ստանում եվրոպական երկիրների իշխանություններից: Այս հողային եւ նյութական նվերները Տաճարների Ասպետներին դարձրին հարուստ ու զորավոր:

1187ին Սալահեդդինը գրավում է Երուսաղեմը: Կարգը իր կեղերոնատեղին փոխադրում է Աքրա: 1291ին իսլամները գրավում են Աքրան. փոխադրվում են Կիպրոս: Բայց մինչ այդ Տաճարավորները դարձել էին Եվրոպայի դրամատունը, Կարգը այլեւս զինվորական չէր: Մասնավորաբար ազդեցիկ էին Սպանիո, Ֆրանսայի եւ Անգլիո մեջ, ուր յուրաքանչյուր բաժանմունք ենթակա էր Կարգի Մեծ Վարպետին:

Բարոյականություն եւ Վարդապետություն գրքի մեջ կարդում ենք. «Նրանց նշանաբանն էր այնքան հասարտանալ, որ կարողանան գնել աշխարհը»: Այդպես էլ լինում է: 1312ին միայն Եվրոպայի մեջ նրանք ունեին իննը հազար ավատապետություն, այսինքն ազնվականի կամ իշխանի պատկանող հողատարածք:

Տաճարների Ասպետները Միջին Արեւելյան շրջանին ազդվել էին Գնոստիկներից եւ Սպանողներից (Արաբական զինվորական անգութ խումբ): Իրականություն է, որ Տաճարների Ասպետների հիմնադիրների մի մասը մարգվել էին Սպանողների մոտ: Տաճարականները թեւեւ ընդունել էին Գնոստիկների հավատքը, բայց կազմակերպչական եւ քաղաքական հատկանիշները ընդորինակել էին Սպանողներից: Տաճարականներն են աշխարհը գրավելու առաջի փորձ կատարողները:

1307ին կարգի մի նախկին անդամ ամբաստանում է Տաճարականներին՝ հերետիկոսության եւ անբարոյականության համար:

Ֆրանսացի Ֆիլիպ Դ.-ը քննել է տալիս հարցը: 13 Հոկտեմբեր 1307ին թագավորը բանտարկում է Տաճարականներին, իսկ հավատաքննիչը բանադրում: Ասպետները խոստովանում են մի շարք ոճիրներ եւ ընդունում, որ անդամակցության ժամանակ երդվում էին Քրիստոսի դեմ:

Կլեման Բ. պապը մերժում է նկատի առնել հարցը եւ նույնիսկ նրանց խոստովանությունները: Նա շարունակում է պաշտպանել կարգը: Ապա որոշ կարեւոր անհատների ճնշումին տակ ընդունում է հարցաքննել նեղ շրջանակում: Ասպետը խոստովանում է, որ Եղբայրակցության անդամակցության ընդունման ժամանակ պարտավոր է թքել խաչի վրա եւ կատարել զանազան անորեն եւ անպատշաճ արարքներ:

Կլեման Ե. պապը որոշում է հարցաքննել 72 ֆրանսացի Ասպետներ: Տաճարի Մեծ Վարպետ Ժաք Դը Մուլան եւ կարգի ֆրանսացի ղեկավարներ հարցաքննվում են 3 Գարդինալների, 4 նոթարների եւ ուրիշների ներկայությամբ: Հարցաքննության ընթացքին Տաճարականները նորից խոստովանում են իրենց ոճիրները, թագավորի առաջ ծեծով, իսկ այստեղ առանց ծեծի: Հարցաքննությունը բացահայտում է, որ Տաճարի Ասպետները եղել են խաբեբայության վարպետներ. նրանք առերեւույթ ծառայում էին Քրիստոսի, իսկ ծեսերում՝ պաշտում սատանային:

Պապը մերժում է դատապարտել ամբողջ կարգը մի Վարպետի մի քանի Եղբայրների գործած հանցանքներին համար: Որոշում է Պապական հանձնաժողով կազմել քննելու հարցը Փարիզում, 1309ին: Մինչ այդ լուրը տարածվել էր, բողոքները սկսել էին բազմանալ: Իտալիո եւ Ֆրանսայի նման Անգլիո, Գերմանիո, Սպանիո եւ Փորթուգալի Տաճարականները դատվում են բայց մեծամասնությունը անպարտ արձակվում են:

Ֆրանսացի Ֆիլիպ Ե.-ը միակն էր որ շարունակում է հալածել կարգի անդամները եւ շատերին դեմ մահվան վճիռ է արձակում, մեղադրելով դավաճանության եւ սատանայապաշտության մեջ: 12 Մայիս 1310ին Փարիզում 54 Տաճարականների ողջ այրել է տալիս: 1312ին Կլեման Ե. պապը որոշում է ջնջել կարգը: 18 Մարտ 1314ին Մեծ Վարպետ Ժաք Դը Մուլանին եւ իր երեք պաշտոնակատարներին այրում են: Այդ օրվա որպես հիշատակ անվանել են Դը Մուլա Մասոնական Կարգը պատանիների համար:

Դը Մուլայի մահից հետո մեծ թվով Տաճարականներ ապաստանում են Փորթուգալի Դինիզ Բ. թագավորի մոտ: Կարգը ժամանակավորապես նահանջում է: Հսկայական հողատարածքներ գրավում են: Անցնում են ընդհատակ, գործում են:

Չմահացած, Դը Մուլան հիմնում է չորս Ոստանական օթյակներ, Նափոլին Արեւելքի, Էդինբուրգը Արեւմուտքի, Մթոքհոլմը Հյուսիսի եւ Փարիզը Հարավի համար:

Այս է արդի Ազատ-Մասոնության սկիզբը:

Վարդախաչյաններ

1300ի սկիզբներին Տաճարների Ասպետների մնացորդացը հիմնում է (կամ միավորվում է) նոր գաղտնի կարգ, որին կոչում են Վարդ-Խաչ կարգ (Վարդախաչյաններ): Շատ քիչ բան հայտնի է այս կարգի ծնունդի մասին, քանի՞ կարողացել են թաքուն ու ծածուկ աշխատել:

Բարոյականություն եւ Վարդապետությունը հաստատում է կապը Վարդախաչյանների եւ Տաճարականների միջեւ:

1600ի սկիզբներին, Տաճարականների ջնջումից 300 տարի ետք, գաղտնի կարգը որոշում է նորից փորձել ժողովուրդի տրամադրությունը իր փիլիսոփայության մասին: Շատ պարզ պատճառներից ելնելով նոր կարգը չի ընդունում իր եւ Տաճարականների միջեւ եղած կապը. նա վերագրում է իր ծնունդը խորհրդավոր անվան հետ, որ կոչվում է Քրիստոսի Բողոքները:

Այս պատմությունը հրատարակվում է փաստաթղթի ձևով, որ կոչվում է Հռչակավոր Եղբայրակցությունը (Fama Fraternitatis) եւ տարածվում Եվրոպայի չորս կողմը: Ըստ պատմության, Բոզենբրուրը ճամբորդում է Սուրիա ապա Եգիպտոս, սովորելու խորհուրդը: Միջին Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկեի մեծ վարպետների մոտ ուսանել է ետք վերադառնում է Եվրոպա եւ սկսում է տարածել իր «Լուսավորվածությունը»: Բոզենբրուրին չեն ընդունում: Վերադառնում է հայրենիք – Գերմանիա – եւ փորձում հաստատել մի ընկերություն՝ հիմնված իր ուսուցումների վրա:

Ըստ ԱզատՄասնության Հանրագիտարանի... «շատեր առասպելը ընդունել են որպես իրականություն»: Ամենայնդեպս, կարգը փորձում էր ժողովուրդի հակազդեցությունը: Բոզենբրուրը իսկական Վարդախաչյան կարգը չէր:

Այս լավ մտածված քայլը նոր հետաքրքրություն է ստեղծում ցամաքամասի տարածքին: Բայց մի դար պետք է անցներ որպեսզի կարգը կարողանար բացահայտորեն անդամներ արձանագրել:

Մասնական Շարժումի մի շարք նշանավոր ղեկավարներ մերժում են որեւէ կապակցություն տեսնել Տաճարների Ասպետների եւ Վարդախաչյանների միջեւ: Բայց բավական փաստեր կան ցույց տալու, որ արդի ԱզատՄասնությունը շարունակությունն է անցյալի կարգերի. այդ հստակ է նաեւ **Բարոյականությունն եւ Վարդապետությունն** մասնական գիրքին մեջ: Բացահայտ օրինակ է Յորք Ծեսի երեք վերջին աստիճանների անունները – Կարմիր Խաչի Ասպետ, Մալթայի Ասպետ եւ Տաճարի Ասպետ – եւ Սկոտլանդական Ծեսի 18րդ աստիճանը – Վարդ Խաչի Իշխան – որ 17րդ աստիճանի հետ ծանոթ է որպես Կարմիր Խաչի Խորհուրդ:

Ազատմասնության Ծնունդը

Եթե Վարդախաչյանները ուզում էին հասնել իրենց նպատակին եւ հաստատել Աշխարհի Նոր Օրենքը, պարտավոր էին որ բացահայտվել ժողովրդին եւ հնարավորին չափ շատ անդամ արձանագրել: Տաճարականների ավանդությունը շարունակվում է. արտաքննապես բարեգործական կազմակերպության երեւույթն է առնում, իսկ ներքնապես պահում են թաքուն, գաղտնի խորհրդապաշտությունը: Միանում եւ վերջապես առաջնորդում են Եվրոպայի որմնադիրները, շինարարությունից ընդորինակելով խորհրդանշանների մեծ մասը:

Տաճարականները՝ դարեր առաջ եղել էին նշանավոր շինարարներ եւ այժմ թիրախը նորից շինարար վարպետներն էին, որոնք նախընտրում էին կոչվել «Որմնադիր Եղբայրներ» կամ «Մեծ Շինարարներ»:

Ժամանակի ընթացքում նվազում է կոթողային եկեղեցիների շինարարությունը, վարպետ շինարարների թիվն ալ սկսում է նահանջել: Հավաքագրում են վարպետ շինարարներին եւ 1717ին Լոնդոնում հիմնում աշխարհի առաջին Մեծ Օթյակը: Զահր անցել էր Մասոններին, իսկ Վարդախաչյանները՝ կառույցի նվիրապետերը, կոչվում էին ԱզատՄասնության Իշխաններ կամ Ճարտարներ:

Նոր «կարգը» արագորեն ընդլայնվում է: 18րդ դարի վերջերին հաստատուն հիմերի վրա կանգնած կազմակերպությունն էր: Ժողովուրդի կողմից ճանաչվում էր որպես բարեգործական կազմակերպություն: Հիմնադրումը հաջողությամբ կատարել է ետք, ճարտարները վերադառնում են իրենց հին երազին՝ հատատել Աշխարհի Մատանայական Օրենքը: Վերջապես գեր-գաղտնի Կարգը կազմվել էր:

Այս նոր կարգի մեջ գտնվող կարեւոր կարգը Լուսավորյալներն էին:

Լուսավորյալները

Մասոն պատմաբան Ալբեր Զ. Մաքայը նկարագրում է Լուսավորյալներին. «Գաղտնի կազմակերպություն, հիմնադրվել է 1 Մայիս 1776ին Ինգլիզաթ Համալսարանի դասախոս Ադամ Ուեստաուփթի կողմից», եւ շարունակում է. «Նա Մասոնական պատմության մեջ հռչակավոր է որպէս Պավարիո Լուսավորյալների հիմնադիրը»:

Լուսավորյալների Մասոնությունից ներշնչված լինելու բոլոր կասկածները վերացան երբ կարդացի նշանավոր Մասոն, պատմաբան Հ. Հեյվուդի **Մասոններ եւ Մասոն Նախագահներ** գիրքը, ուր Ուեստաուփթը ներկայացվում է որպէս նշանավոր Մասոն:

Չոն Ռոբինսոնը, 18րդ դարու պատմաբան եւ հռչակավոր Մասոն, իր **Դավադրության Փաստերը** գրքին մեջ, տպագրված 1798ին, գրում է. «Կարգի գլխավոր նպատակն է ջնջել Քրիստոնէությունը եւ տապալել կառավարությունները» եւ շարունակում է. «Աշխարհի Նոր Օրենքը միայն գաղտնի կազմակերպությունները կարող են հաջողացնել աստիճանաբար ներթափանցելով պետությունների մեջ»:

Օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, Ուեստաուփթին եւ իր գործակիցներին հաջողվում է շահել գերմանական Մասոնական Օթյակների վստահությունն ու պաշտպանությունը: Ուեստաուփթը Մյունխիխի, իսկ իր իշխանները մասնաճյուղերի մեջ հյուսում են դավադրությունը:

1782ին գումարված Ուիլիելմշդաթի Մասոնական համաժողովին, Ուեստաուփթի Լուսավորյալները վերջնականապէս դասվում են գաղտնի հավաքականությունների շարքին որպէս մեկ-աշխարհի շարժումի անառարկելի ախոյաններ: Միւսնայն ժամանակաշրջանին Ուեստաուփթին հաջողվում է դարբնել դաշնակցություն, Լուսավորյալ ԱզատՄասոնների եւ Բոթչիլդների աճող դրամատոնային ցանցին միջեւ, որ հնարավորություն է տալիս Կարգին սկսել ծրագիրների իրագործման:

Այսպիսով, Տաճարականների նման ԱզատՄասոնները հակակշռում են միջազգային դրամատոնները եւ սկսում է առաջընթացը: Հեյվուդը գրում է. «Նա արմատներ է գցում, ծաղկում է, շարքերը բազմանում են, նույնիսկ Ջիզուիթներն են միանում»:

Թեւ տասը տարի անց Լուսավորյալները նշանակվում են, բայց նրանց ձեռք բերած հաջողությունը ԱզատՄասոնությունը չէր կարողացել անել անցյալ 50 տարիներին: Նրանք համոզում էին քրիստոնէա ղեկավարությունը միանալ կարգին, ասելով, թէ Լուսավորյալք քրիստոնէա կազմակերպություն է, իսկ նպատակը՝ միավորել քրիստոնէաները, Քրիստոսի սիրույն:

Մի շարք քրիստոնէա ղեկավարներ պետք է դաս առնեն պատմությունից:

Քրիստոնէաները միացնելու դիմակին տակ աշխատում են հասնել նպատակին, իրենց տիրապետության ենթարկել մարդկությունը: Միչ-Հավատային Միությունը, որ այսօր քաջալերվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդի կողմից, ԱզատՄասոնության գործակատարներից է: Այնքան ատեն որ քրիստոնէաները չեն միանա մյուս կրոններին, աշխարհի կառավարություն չի կարող գոյանալ: Քրիստոնէաների անզիջող կեցվածքը գլխավոր արգելքն է:

Ուեստաուփթը ուրախանում էր երբ խաբում էր քրիստոնէաներին: Մի անգամ երբ նրան հաջողվում է համոզել մի ղեկավարի, գրում է. «Ով կարող էր երեւակայել, թէ ես նոր կրոնի հիմնադիրը պիտի լինեմ»:

Թեւ Լուսավորյալի ճիգերը կանգ են առնում 1780ին, բայց շարունակվում է Լուսավորյալ Մասոնական օթյակների միջոցով: Այս բոլորի գլխավոր մղիչ ուժն էր Ֆրանսայի Արեւելքի Մեծ Օթյակը, հետագային Իտալիո Մասոնական օթյակները, իսկ այժմ՝ Միացյալ Նահանգների:

Ամերիկյան Հողի Վրա

Եվրոպայի քաղաքականության տիրապետել է ետք, 18րդ դարու վերջերին Մասոնական Կարգը կարեւոր առաջընթաց է արձանագրում Միացյալ Նահանգներում: Իրականություն է, այս երկրի քաղաքականությունը որոշել են Մասոնները: Մեծամասնությունը, ինչպես Ջորջ Ուաշինգթոնը, եղել են պարկեշտ անձեր եւ չեն հասկացել կարգի հետին նպատակները: Շատեր քննադատել են Լուսավորյալների գործունեությունը: Այնուամենայնիվ, Մասոնական Օթյակները հավաքագրում են անդամներ եւ սկսում են աշխատել հասնելու իրենց նպատակին: 1801ին Չարլսթոնում (Հարավային Քարոլայնա) հիմնում են առաջին ԱզատՄասոնական Սկոպտիական Ծեսի Գերագույն Խորհուրդը:

Ըստ Մասոնական **Սկոպտիական Ծեսի Իրականությունները** հրատարակության, «աշխարհի բոլոր Գերագույն Խորհուրդները սեռել են այս օթյակից»: Աշխարհի Նոր Օրենքը կրնա հաջողիլ եթե հակակշռեն Միացյալ Նահանգների հոյակապ հնարավորությունները: Հետեւաբար, 1800ականներին, երբ հայտնվում է նոր ուժը՝ Լուսավորյալները, Եվրոպայից դանդաղորեն իրենց ուշադրությունը ուղղում են այս կողմ:

ԱզատՄասոնությունը հոյակապ աճ է արձանագրում, մանավանդ 19րդ դարու երկրորդ կեսին: Այդ օրերին բազմանում են Մասոններից ներշնչված կրոնական աղանդները: Համաստվածաբանական ընկերության կողքին ԱզատՄասոնությունը օժանդակում է քրիստոնեական գիտության, Միադավանության, Մասոնական Յուրաքանչյուրի եւ Ռասըլի հիմնած Եհովայի Վկաների ստեղծման եւ տարածման: Իսկ ամենամեծը՝ Մորմոն Կրոնը, հիմնված Ժոզեֆ Սմիթի կողմից, որ նույնպես բարձր աստիճանի Մասոն էր:

Սմիթը 1830ին, կարգին միանալ է 12 տարի առաջ, հրատարակում է Մորմոնի գիրքը: 15 Մարտ 1842ին Սմիթը ստանում է ԱզատՄասոնության առաջին աստիճանը, իսկ հաջորդ օրն իսկ շնորհում են Թագավորական Գաղտնիքի Վսեմ Վարպետ աստիճանը, որ աննախընթաց էր եւ է:

Վեց շաբաթ անց, 2 Մայիս 1842ին սկսում է որպես անձնական հայտնություն, Մորմոն ղեկավարներին ուսուցանել Մասոնական գաղտնիքները: Օգտվելով ԱզատՄասոնության սկզբունքներից հիմնում է իր աղանդը, ասելով թե այդ «հայտնությունը» եկել է վերելից: Մորմոն ղեկավարների մեծամասնությունը եղել են Մասոններ:

Նախկին Մորմոններ մի շարք գիրքեր են հրատարակել, ուր բացահայտվում են Մորմոնության եւ ԱզատՄասոնության կապերը: Այդ գիրքերը փաստում են, որ Մորմոնությունը Մասոնական ժառանգություն է: Մորմոնները գործածում են Մասոնական նշանները, ծեսերը եւ գաղտնի վարդապետությունը:

Մորմոնականությունը ունի ավելի քան չորս միլիոն անդամ եւ աշխարհի ամենից հարուստ «եկեղեցին» է: Ազդեցությունը քաղաքականության եւ այլ ազգային հարցերում՝ անհավոր է:

Միացյալ Նահանգներում 1813ին հիմնում են Հյուսիսային Գերագույն Խորհուրդը (Հյուսիսային Իրավասություն), իշխում է 15 նահանգների, կեդրոնատեղին Բոսթոնն է: Հարավային Իրավասությունը, որ կեդրոնատեղին Չարլոթոնից տեղափոխվել է մայրաքաղաք Ուաշինգթոն, իշխում է 35 նահանգների: Նա այսօր Աշխարհի Մայր Գերագույն Խորհուրդն է:

Նոր Գեր-Ծեսը

Նույն ժամանակներին Մասոնական կարգը թափանցում է ամերիկյան քաղաքականությունից եւ տնտեսությունից ներս: 18րդ դարի վերջերին այնքան է մեծանում, որ դառնում է անարդյունավետ ու դժվար կառավարելի: Մասնաճյուղերը, աղանդներն ու ծեսերը անկարելի էր միատեղել եւ ղեկավարել: 20 Սեպտեմբեր 1870ին հիմնում են Նոր Գեր-գաղտնի

կառավարող խումբ, որ կեդրոնացնում է Տիեզերական ԱզատՄասնությունը: Սա առաջին մեծ վերակառուցումն էր (Փերեսթոյքա): Գլխավոր մղիչ ուժն էր Ալբերթ Փայքը:

Փայքը ծնվել է Բոսթոն 1809ին: 1850ին միանում է Մասնական կարգին: Փաստաբան էր: Քաղաքացիական պատերազմին կոչվում է դաշնակիցների կողքին: Ստանում է գորավարի աստիճան:

Նշանավոր ճարտասան էր: Սովորել է 16 հին լեզուներ: Ուսումնասիրել է **Ջրադաշտականությունն ու Ջեր Ավեստան**: Համարվում է Քաբալայի աշակերտ: Գրել է մի շարք գրքեր, որոնցից շատեր ԱզատՄասնության գրականության դասականներից են: Ամենից նշանավորը 861 էջնոց **Բարոյականությունն եւ Վարդապետությունն** է գրված 1871ին, անվանում են **Սկոպտիական Ծեսի Սուրբ Գիրք**:

1859ին ընտրվում է Հարավային Գերագույն Խորհուրդի Իշխանական Մեծ Հրամանատար: Նա մնում է սկոպտիական Ծեսի ղեկավարը մինչև իր մահը՝ 1891: 1860ականներին Ջիուզեփե Մացինին, իտալական հեղափոխության ղեկավար եւ Լուսավորյալ ԱզատՄասնության Համաշխարհային տնօրեն (1834-1872), կապ է հաստատում Փայքի հետ եւ նրան կարգում Միացյալ Նահանգների Լուսավորյալների ղեկավարը: 20 Սեպտեմբեր 1870ին Նոր Գերագույն Ծեսի սահմանադրությունը ստորագրում են Փայքն ու Մացինին:

Փայքը Կարգը կոչում է Նոր եւ Փոխված Բալլադյան Ծես: Պատմաբաններ կոչում են Գնտատիկություն, որ սովորացնում է թե աստվածությունը երկուք է եւ Լուսիֆերը (սատանան) հավասար է Ադոնային (քրիստոնեաների Աստված): Մասնների Սուրբ մայրաքաղաքը Չարլսթոն էր, իսկ Փայքը Իշխանական Քահանայապետը այսինքն՝ Գերագույն Վարդապետական ուղեցույցի նախագահը, որ կազմվել էր տասը բարձրագույն աստիճան ունեցող եղբայրներից: Մասնության Իշխանական Գործադիր Ուղեցույցը մնում է Հռոմ, Մացինիի ղեկավարության տակ:

Գերագույն կամ Բալլադյան Ծեսի կողքին Փայքը եւ Մացինին հիմնում են չորս Մեծ Կեդրոնական Ուղեցույցներ. նրանք են Հյուսիսային Ամերիկայի Մեծ Կեդրոնական Ուղեցույցը – Ուաշինկթոն, Հարավային Ամերիկա – Մոնթեփոլեյո, Եվրոպա – Նափոլի, Ասիա եւ Ովկիանիա – Քալքաթա: Հետագային հիմնում են Ափրիկեի կեդրոնը – Փորթ Լուիս, Մորիթիուս կղզիներ:

Այս նոր ծեսի անդամները – երեսուն երեք աստիճան – ընտրվում էին Հին եւ Ընդունված Սկոպտիական Ծեսից:

Բալլադյան օթյակներին տրվում է Եռանկյունիներ անվանումը:

14 Յուլիս 1859ին Փայքը հրահանգում է աշխարհի 23 գերագույն խորհրդներին.

«Ասացեք ժողովուրդին, մենք պաշտում ենք մի Աստված, բայց մենք այդ Աստվածը պաշտում ենք առանց նախապաշարումների ... ասացեք, որ Մասնական կրոնը պիտի հիմնվի»:

Այս հաստատումը կատարելիս Փայքը զբաղեցնում էր Ուաշինկթոնի Կեդրոնական Ուղեցույցի Մեծ Վարպետի, Չարլսթոնի Գերագույն Խորհուրդի Մեծ Հրամանատարի եւ Տիեզերական ԱզատՄասնության Իշխանական Քահանայապետի պաշտոնները: Հետեւաբար, խոսելով որպես ԱզատՄասնության ղեկավար, բացահայտում էր Կարգի իսկական նկարագիրը:

Դավադրության հաջողությունը կախյալ է անդամի ճշմարիտը թաքցնելու կարողությունից: Հետեւաբար, հավաքագրել այնքան՝ որքան պետք է հաջողելու համար: Յուրաքանչյուր նոր անդամի հետ բացահայտվելու վտանգը մեծանում է: Նվիրապետությունը շատ զգուշ է թեկնածուների ընտրության մեջ: Վստահելի են միայն երեսուն երեք եւ ավելի աստիճանավորները: Տրամաբանությունը պարզ է. ինչի հավաքագրել հարյուր հազար մարդ երբ նույն գործը կարելի է կատարել տասը հազարով:

Նվիրապետությունը օգտագործում է միլիոնավոր անմեղ ապուշներ որպես վահան իր եւ ժողովուրդի միջև: Այս մարդիկը օրեր են տրամադրում հիվանդանոց կառուցելու, տխեզձների օգնելու եւ այլ բարեգործություններ անելու, բայց պարզ պատվար են: Ժողովուրդին խաբելու հոյակապ հնարք: Ո՞վ կարող է կասկածել, թե այսպիսի բարեգործական

հաստատություն, հսկայական դավադրության հետին է: Քիչեր են հավատում, որովհետև գաղափարն իսկ ընդվզեցուցիչ է:

Քարոզականություն և Վարդապետությունը հաստատում է.

«Հարստանալ, ազդել, մեքենայել և եթե պետք է կռվել... Պապականությունն ու մրցակից թագավորությունները խալիլաժ են ու քայքայում են իրար: Աշխարհը պետք է լինի մերը: Մենք պիտի պահպանենք Տիեզերքի հավասարակշռությունը և պիտի լինենք Աշխարհի Վարդապետները»:

Փայքի աշխատանքը հաջողությամբ է պսակվում, 1880ականներին ղեկավարի դերը Եվրոպայից անցնում է Միացյալ Նահանգներ:

Ըստ Մասոնների և Նոր Ժամանակավորների, Միացյալ Նահանգները «Նոր Աթլանթիս»ն է:

Դժբախտաբար պատմությունը կրկնվում է, վերադառնում ենք նույն օրերին. պարտադրելու են Աշխարհի Նոր Օրենքը, որ բաղկացած պիտի լինի տասը վարչական շրջաններից:

Սովետական Միության Դերը

Այս բոլորից հետո մի հարց տակավին տանջում էր ինձ... ի՞նչ էր Սովետական Միության դերը այս բոլորին մեջ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այն ուժերը որոնք հակակշռում են Ամերիկյան հակակշռում են նաև Սովետական Միությունը, իրենք են հիմնել Սովետական Պետությունը: Կատարենք Համայնավարության և Սովետական Միության համառոտ վերաքաղ:

1847ին պարզ մտավորական Քարլ Հենրիխ Մարքսը միանում է Լուսավորյալների մասնաճյուղերից մեկին, որ կոչվում էր «Ճիշդի Միությունը»: Փաստ է որ որոշ ժամանակ Մացինին (Լուսավորյալ ԱզատՄասոնների Եվրոպայի ղեկավարը) և Մարքսը աշխատակցել են: Մացինին և Միջազգային Մասոնությունը օգտագործել են Մարքսը որպեսզի ներթափանցի և քանդի աճող Ընկերվարական Աշխատավորական շարժումը:

19րդ դարու կեսերին, Ֆրանսայի աշխատավորական շարժումը կազմակերպվում է և աշխատում բարելավել աշխատավորների կենցաղը: Նույնը պատահում է Անգլիա. Արհեստների Միությունները փորձում են փոփոխություններ մտցնել իրենց երկրին մեջ: Լուսավորյալ ԱզատՄասոնությունը որսում է պահը ու դրա մեջ տեսնում իր ծրագիրների հաջողության երաշխիքը:

Քարլ Մարքսը այդ օրերին ապրում էր Լոնդոն և լավ կապեր էր մշակում Աշխատավորական շարժումների հետ: 28 Սեպտեմբեր 1864ին, Մբ. Մարթին սրահի մեջ կայացած ժողովին, որտեղ ընդունվում է Ընկերվարական Միջազգայնականը, ընտրվում է Հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովի մյուս անդամներն էին Մացինիի անձնական քարտուղարը, որ կոչվում էր Վուլֆ Լը Լուբեզ, մի ֆրանսացի ԱզատՄասոն և Քրեմլը՝ անգլիական Մասոնների Միության քարտուղարը:

Վուլֆը Հանձնաժողովի առաջին նիստին ներկայացնում է Մացինիի պատրաստած աշխատավորների Միության հիմունքները: Մարքսն ու Մացինին այնքան մոտ էին իրար, որ Մարքսը անմիջապես ընդունում է առաջարկությունը:

ԱզատՄասոնությունն ու մանավանդ Մեծ Արեւելքի Օթյակները գորակցում են Միջազգայնականին:

Աշխատավորական շարժումները ամբողջությամբ ղեկավարվում են գաղտնի կազմակերպությունների կողմից:

Ռուսական հեղափոխությունը, ռուսական օթյակների միջոցով, Թրոցքիի եւ Լենինի օգնությամբ եւ միջազգային դրամատիրության գորակցությամբ պարտադրվում է ռուս ժողովուրդին:

8 Փետրվար 1920ին Ուինսթըն Չըրչիլը գրում է Լոնդոնի «Մանդեյ» թերթում.

«Մպարտակուս-Ուեսչուովի օրերից մինչեւ Մարքս եւ Թրոցքի...

քաղաքականությունը տապալելու միջազգային դավադրությունը շարունակվում է: 19րդ դարու բոլոր խաթարված շարժումները ստեղծողները եւ այժմ այս՝ արտակարգ անհատականություններ են որոնք պիտի բռնեն ռուս ժողովուրդի կոկորդից եւ տիրանան հսկայական կայսրության»:

Չըրչիլ անպայման մի բան իմացած պետք է լինի այս բոլորի մասին, քանի ինք ալ Մասոն էր:

Տրամաբանական հետեւությունը, եթե ԱզատՄասոնությունն է հիմնել Սովետական Միությունը, ուրեմն ինք է կացության տերը, վարագույրի ետեւից: Բայց ինչ է այսպիսի բռնատիրության հիմնումին դրդապատճառը: Միացյալ Նահանգների դերն է մեզի առաջնորդել դեպի Աշխարհի Նոր Օրենքը, իսկ Ռուսիո դերը՝ մարդկության վրա ճնշելով արագացնել գործողությունը:

Որպեսզի նվիրապետությունը կարողանա հաջողացնել աշխարհի կառավարությունը, մարդկությունը պետք է համոզվի եւ ընդունի այդպիսի կառավարության օգուտը: Պայմաններ պետք է ստեղծվեն: Եթե մարդկությունը համոզվի, որ պատերազմների պատասխանատվությունը ընկնում է ազգերի վրա եւ խաղաղություն կարող է հաստատվել միայն ազգերի ոչնչացումով, ապա կարող է պատահի որ ընդունի Աշխարհի Մեկ Իշխանությունը որպես փոխընտրություն: Ուրեմն, պատերազմներ պետք է հնարվեն, ահաբեկչական գործողություններ եւ նախահարձակումներ ստեղծվեն: Վեճ, բախում, բռնություն աշխարհի չորս կողմը եւ զենք ալ տրամադրվի:

1980ի սկիզբներին աշխարհի ժողովուրդների չորսից մեկը պատերազմում էր:

Սովետական Միությունը միշտ օգնողի դերում էր:

Հյուլեական պատերազմի վերածվելու վախը հոգեբանորեն ազդում է ժողովուրդների վրա: Ամեն բանից առաջ մարդկությունը խաղաղություն է ցանկանում:

Սահմանափակ հյուլեյական քվիրտուքի առթած վնասներն ու մարդկային զոհերը կը համոզի մարդկությունը, որ հանցնի ազգային ինքնիշխանությունն ու ընդունի Աշխարհի Մեկ կառավարությունը, որ խոստանում է արգիլել այսպիսի դժբախտությունների կրկնությունը:

Թաքուն ուժերը օգտագործելով Ամերիկյան, Եվրոպան, Ռուսաստանը ձգտում են հասնել այնտեղ:

Գլուխ 6

Աշխարհի Նոր Օրենքի Գաղտնի Ուսմունքը

Մասունների մեծամասնությունը չգիտեն իրենց կազմակերպության թաքուն ծրագրերի մասին: Իմ խոսակցությունների ընթացքին ես իսկապես համոզվեցի, որ նրանք չգիտեն Մասունության էությունը: Խնդրում եմ, ներողամտաբար վերաբերվեք այս խաբված մարդկանց հետ:

Մենք բոլորս էլ հանցանք ունեցել ենք:

Ամիսներ պետք են ճիշդ եւ լավ հասկանալու կարգը: Եթե անդամ չես, գաղտնի գրքերը չես կարող ունենալ, իսկ անդամներից շատ քիչեր ժամանակ են տրամադրում քննելու վարդապետությունը: Ումանք 30 տարի ամդամակցել են Օթյակին, բայց մի ժամ չեն տրամադրել ուսումնասիրելու գրականությունը: Այդպիսիներին օգնելու համար ես պատրաստեցի հետեւյալ ամփոփ Մասունական սկզբունքները:

Մասունական Աստվածաբանություն

1986ին, հեռատեսիլի խոսակ խնդրում է մի զույգից, որոնք Ազարմաստություն էին ուսումնասիրում, գրել Ամերիկայի 50 մեծ օթյակներին՝ իմանալու համար թե Մասունական ո՞ր գրքերը լավագույն ձեւով են ներկայացնում ԱզատՄասունության հավատալիքները:

Մեծ օթյակների 25ը պատասխանում են: Ըստ Մեծ Վարպետների, հետեւյալ գրքերն են հանձնարարվում: **Քոլի Մասունական Համայնագիտարանը** (Հենրի Ուիլսոն Քոլլ), **Շինարարները** (Ժոզեֆ Ֆորթ Նյուբրն), **ԱզատՄասունության Համայնագիտարանը** (Ալբեր Կ. Մաքայ), **Ծանոթացնել ԱզատՄասունությունը** (Քարլ Հ. Քլոդի), **Նոր Մասունը** (Հ. Լ. Հեյվուտ), **Մասունական Ուղղեգիրք** (Ալֆոնս Գըրգ), **ԱզատՄասունության Պատմությունը** (Ռոբերթ Ֆ. Գուլդ), **Ճարտարությունը եւ Իր Խորհուրդը** (Ալան Ե. Ռոբերթց), **Բարոյականություն եւ Վարդապետություն** (Ալբեր Փայք) եւ մի քանի հարզված Մասուն հեղինակներ, ինչպես Մանլի Փ. Հոլ, Կ. Սթայնմեյ, Թոմաս Սմիթ Ուեբ, Լուիզ Լ. Ուիլյամզ:

Քանի այս գիրքերն են ԱզատՄասուն ղեկավարների կողմից հանձնարարված աղբյուրները, արդար է որ Մասունական աստվածաբանությունը քննենք այս գիրքերից օգտվելով: Գլխավոր փաստաթուղթը պիտի լինի Ալբեր Փայքի **Բարոյականություն եւ Վարդապետությունը**, որովհետեւ գիրքը կարելի է գտնել Մասունական բոլոր գրատունների մեջ: Մասունները կարող են ստուգել այս տեղեկությունները:

Սկսենք հետեւյալով. ԱԶՄՍԱՍՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՆ Է!

«Յուրաքանչյուր Մասունական օթյակ կրոնի տաճար է իսկ ուսուցումները՝ կրոն հրահանգ (Բարոյականություն եւ Վարդապետություն, էջ 213)»:
«Ան (Մասունությունը) տիեզերական, հավիտենական, անհեղի կրոն է, Աստված է սերմանել մարդոց սրտին մեջ: Որեւ հանգանակ չի կարող երկար ապրել եթե չի կառուցված այս հիմքի վրա: (Բ. եւ Վ., էջ 219)»:

Փայքը շարունակում է նկարագրել
ԱզատՄասունությունը այսպես, «Ան փիլիսոփայական
եւ կրոնական ճշմարտությունների
խնամակալն ու ավանդապահը որ թեւ անձանթ է

աշխարհին բայց փոխանցվել է սերունդից սերունդ
միախմբելով խորհրդապատկերը, խորհրդանշանն
ու այլաբանությունները (Բ. եւ Վ., էջ 210)»:

Մասնությունը Հակաքրիստոս է

Մասնական աղոթքներից գեղջված է Հիսուսի անունը:

Աղոթենք Հիսուսի անունով հակառակ է Մասնության տիեզերականության
(Փենսիլվանիո Մեծ Օթյակ):

«Ուսուցիչները, նույնիսկ քրիստոնեական, ընդհանրապես
տգետ են եւ չգիտեն իրենց ուսուցածի ճիշդ իմաստը:

Սուրբ Գիրքը աշխարհի ամենից ընդհանրացած գիրքն է բայց
անհասկնալի շատերի համար:

Սուրբ գիրքը իր ամբողջ այլաբանություններով
ամբողջական չի, նա հրեաների գիտական կրոնն է:

Մովսեսի եւ Մարգարեների վարդապետությունը,

հար ու նման եգիպտականին, շղարշված է:

Հրեական գիրքերը գրվել են ավանդությունը

պահպանելու համար ... նախակրթարանի

գրքերի նման ... իսկական գաղտնիքն ու ավանդական

փիլիսոփայությունը գրվել է հետո եւ

տակավին թափանցիկ չի: Ուստի երկրորդ

Սբ. Գիրքը* ծնվել էր. արտառոց հրեշ, կոչում

են քրիստոնեաները, կոթող՝ կոչում են գիտակները:

Նա ամեն ինչ է, փիլիսոփայի հանճարն ու կրոնը

միացել է այստեղ, ադամանդ՝ կոչոտ, սեւ քարի մեջ (Բ. եւ Վ., էջ 745)»:

«Բոլոր վարդապետությունները ծնվել են Քաբալայից

... Մասնական գաղտնիքներն ու խորհրդանշանները

կը պարտին Քաբալային: Միայն Քաբալան

կարող է միացնել Տիեզերական Դատողությունն

ու Աստծո խոսքը ... Նա միայն կարող է

* Երկրորդ Սբ. գիրքը Քաբալան է

համաձայնեցնել Պատճառն ու Հավատը,

Ուժն ու Ազատությունը, Գիտությունն ու Խորհրդավորը,

Նա ունի բանալին Ներկայի, Անցյալի ու Ապագայի (Բ. եւ Վ., էջ 744)»:

ՆԵՐՇՆՉՈՒՄԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Լուսիֆեր, լոյս-կրողը ... Լուսիֆեր, առավուտի զավակը:

Նա է լոյս բերողը ... Չկասկածեք (Բ. եւ Վ., էջ 321):

ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱզատՄասնության Համաստվածության վարդապետությունը բացատրվում է 14
Հուլիս 1889ին Փայքի՝ աշխարհի 23 Գերագույն Խորհուրդների հղած «Հրահանգներում», նա
գրում է.

«Ինչպես թե Լուսիֆերը աստված չի, հապա Ադոնան

է աստված, որի արաքները փաստում են իր

անգթությունը, նենգությունն ու մարդատեացությունը,

գիտության դեմ վանողականությունը. պարզ է որ սատանան

եւ իր քահանաները պիտի զրպարտեն Լուսիֆերը:
Այո Լուսիֆերը Աստված է եւ դժբախտաբար Ադոնան այլ Աստված է»:
«Քրիստոնեական վարդապետությունը հերետիկոսություն է.
Ճիշդ ու մաքուր փիլիսոփայական կրոնը Լուսիֆերինն է,
Ադոնային հավասարը. բայց Լուսիֆերը, լուսի Աստվածը,
բարության Աստվածը պայքարում է մարդկության համար
Ադոնայի դեմ որ Մթության ու Չարության Աստվածն է:
Այս Վարդապետությունը ամբողջությամբ հերոտիկոսություն է»:

Սովորացնում է Տիեզերականություն

Նոր Ժամանակի եւ ԱզատՄասնության գլխավոր բնաբանը Տիեզերականությունն է, այսինքն միացնել աշխարհի կրոնները: ԱզատՄասնության համար Հիսուս Քրիստոսը Աստուծո որդին չի, այլ պարզ հոգեկան վարպետ ինչպես Բուդդան, Մուհամետը կամ ոյելէ այլ կրոնի ղեկավար:

*«Մասնությունը կրոն է ուր բոլորը միանում են եւ ունեն
նույն հավատքը: Եթե Մասնությունը միայն քրիստոնեական
հաստատություն լիներ Հրեան, Իսլամը, Բրահման եւ
Բուդդիստը պիտի չկարողանային օգտվել նրա լուսավորությունից ...
եւ պարծենալ նրա տիեզերականությամբ»:*
*«Մասնությունը որի խորանին շուրջ հավաքվում են Քրիստոնեան,
Հրեան, Իսլամը եւ Բրահման, նաեւ Կոնֆիսուսի եւ Ջրադաշտի
Հետեւորդը աղոթում են եղբայրաբար մի
Աստուծո, որ բոլոր Բահադներից վեր է»:*
*«Օթյակը, որ բաղկացել է հրեաներից, Հին Կտակարանն են դնում
խորանի վրա, թուրք ԱզատՄասնը Գուրանը կարող է օգտագործել,
իսկ Բրահման իր Վեդան, որ Մասնականորեն պարփակում է
նույն գաղափարը: Աստվածային կամքը պիտի հայտնվի բոլորին
(ԱզատՄասնության Մաքայի Հանրագիտարան, էջ 133)»:*

Մարդի Աստվածացումը

Մասնների մի շարք խորհրդանշաններից մին աստիճանն է, որ օգտագործվում է խորհրդագգայնության համար. կոչվում է առաջդիմության խորհրդանշան, ներկայացնում է Մասնների երրորդությունը՝ հավատք, հույս եւ բարեգործություն, որ միջոց է երկրից դրախտ գնալու:

Մասնությունը պարզապես **Խաբեություն է:**

Պատվական անհատներ Մասնությունն են ընդունել կարծելով, թե քրիստոնեական հաստատություն է, այդ փաստում է հետեւյալը.

«Ճշմարտությունները **Ժամանակավոր ճշմարտություններ են**, հավիտենական ճշմարտություն չկա (Բ. եւ Վ., էջ 39) եւ **հրահանգ՝ կույր հնազանդության** ընդունելու այս «Ժամանակավոր» ճշմարտությունները»:

«Մասնի առաջին պարտականությունն է հնազանդիլ Վարպետի հրահանգներին ... ԱզատՄասնությունը ավելի զինվորական քան քաղաքական կազմակերպություն է» (Մաքայի ԱզատՄասնության Համայնագիտարան, էջ 525):

Մասնը կույրորեն երդվում է հնազանդիլ, բացարձակապես անգիտակ թե ինչի: Առաջին աստիճանի անդամակցելիս, հետեւյալ երդումն են տալիս.

«Ես հասնդիսավորապես եւ անկեղծորեն խոստանում եմ եւ երդվում առանց երկդիմության, մտային վերապահության կամ որեւէ հնարքի: Հնազանդիլ եւ ընդունիլ բոլոր հրահանգներն ու ուսուցումները. եթե սխալվեմ՝ կտրեք կոկորդս ու ինձ թաղեք ծանծաղ ջրի մեջ, ուր օրական մակընթացություն եւ տեղատվություն է տեղի ունենում: Ուստի աստված օգնի ինձ կատարելու խոստումս (Հրամանատար Ուիլյամ Մորգըն ԱզատՄասնության Մեկնությունները, էջ 21)»:

Յուրաքանչյուր աստիճան ունի իր հատուկ երդումը. որքան աստիճանը բարձրանա այնքան երդումը խստանում է:

Երդումները գրվել են 1820ին. այսօր նույնն է, ոչ մի բան չի փոխվել:

Շատ քիչեր կարողացել են խույս տալ կազմակերպությունից ու բացահայտել նրա նպատակները:

Հրամանատար Ուիլյամ Մորգընը (Նյու Յորք) երեսուն տարի եղել է Մասոն, ապա գրել է գիրքը՝ **ԱզատՄասնության Մեկնությունները**, ուր բացահայտում է Մասոնական Կարգի գաղտնի ծեսերն ու երդումները: Այդ բացահայտումները արժել են նրա կյանքը:

Երբ հայտնի է դառնում, որ Մորգընը ուզում է գիրք հրատարակել, Մասոն ղեկավարությունը գործի է անցնում: Մորգընին առեւանգում են եւ Սեպտեմբեր 1826ին մի խումբ Մասոններ խեղդում են Նիյակարա գետի մեջ: Հրատարակիչին ալ առեւանգում են բայց ժողովուրդի ճնշումի տակ ազատ են արձակում: Գիրքը լույս է տեսնում 1827ին:

ԱզատՄասնությունը դիմել է զանազան պատճառաբանությունների եւ ձեւերի ինքզինք ազատ արձակելու այս ոճիրից, բայց Արեւելյան Նահանգները մոլեգնել էին: Հաջորդ տասնամյակին 45 հազար Մասոններ լքում են օթյակները:

Շատեր անգիտակցորեն ընդունել էին Եղբայրությունը, բայց հետո հասկնալէ ետք նրա էությունը ընդվզելով լքել էին կարգը:

Միացյալ Նահանգների մի շարք նահանգներ դատապարտել են ԱզատՄասնությունը:

Սերունդներ եկել են ու անցել. յուրաքանչյուր սերունդ զգուշացրել է Ամերիկյան ու աշխարհը: Այսօր փորձում են փաստել, թե 18րդ դարու կարգը չի նա:

Տեսնենք թե այսօր ինչ են անում:

Մասոնական Հյուսիսային Իրավասության Գերագույն Խորհուրդի օրկան Հյուսիսային Լույսի 1987 Փետրվար համարի մեջ երեսուն երեք աստիճան Մասոն Լուիզ Լ. Ուիլյամ գրում է.

«Տիեզերականություն չի նշանակում քրիստոնեություն, որոշ Մասոններ այդպես են կարծում ... աշխատանք է տարվում Մասնությունից անջատել քրիստոնեական արտահայտությունները»:

Ժամանակին որոշ չափով օգտագործում էին քրիստոնեական ակնարկություններ, այսօր ԱզատՄասոն ղեկավարությունը հակաքրիստոս է:

Պարզ է ուրեմն որ Մասնությունը քրիստոնեություն չի: Հարցումը. ինչի՞ն են հավատում:

Մասնությունը կրոն չի կամ նրանց կրոնը տիեզերականությունն է: Նրանք չեն հավատում Հիսուսի, Մուհամմատի կամ Բուդդայի, հավատում են Տիեզերքի Մեծ Ճարտարապետին, որին կոչում են (անշուշտ գաղտնի է պահվում) ՅԱՀԲՈՒԼՈՆ կամ ՅԱՌԻԲՈՒԼՈՆ: ԵԱՀը հունական եհովան է, ԲՈՒԼ՝ հին չաստված ԲԱԱԼն է, ՈՆը գործածվում էր բաբելոնյան խորհուրդների մեջ, նշանակում է գերագույն էակ: Մասոնական գաղտնի գրքերի մեջ գրվում է Ե. Բ. Ո.:

Մասոնը առանձինն չի կարող արտասանել այս անունը, վախենալով թերեւս որ հոգին հավիտենապես անիծվի: Երեք Մասոններ կարող են՝ յուրաքանչյուրը արտասանելով մի վանկ:

Ավելին՝ Անդոն Լա Վեյը, «Մատանայական Եկեղեցիի» հիմնադիրն ու ղեկավարը, իր **Մատանայական Ծեսեր** գրքին մեջ գրում է, որ նոր Մատանայիզմը օգտվել է Մասոնական ծեսերից եւ ուսմունքներից:

Բայց ի՞նչ է այս բոլորին միտք բանին, ինչի՞նչ այսքան բան գրեցինք Մասնության մասին:

Մասոնական Վարդապետությունը քաջալերում է միակրոնությունը, եւ եթե հաջողի ավելի հեշտ պիտի լինի գաղտնի ուժերի համար ստեղծել Աշխարհի Նոր Օրենքը եւ աշխարհի կառավարությունը, ջնջելով ազգերի ինքնիշխանությունը, ճզմել մարդու կամքը, վերացնել հոգին եւ ստրկացնել մարդկությունը:

Վերջապես՝ այդ գաղտնի ուժերի համար միջոց է նաեւ Մասոնությունը:

Գլուխ 7

Պատրաստվող Տագնապը

1980ականների կեսերին կարողացել էի բավական համոզիչ տվյալներ հավաքել, որոնք փաստում էին որ իսկապես հաստատելու են Աշխարհի Նոր Օրենքը: Բայց տակավին չէի կարողանում պատկերացնել, թե ինչպես պիտի հիմնվի աշխարհի կառավարությունը այս սերունդի օրերին:

Սկսել էի հավատալ որ աշխարհի կառավարությունը կարելի է, նույնիսկ հավանական հաջորդող մի քանի տասնամյակներին: Բայց, ինչպե՞ս:

1987ի Հունիսին պատրաստեցի հետևյալ բեմադրությունը, որ արդեն երկու անգամ փոխել եմ՝ արագորեն զարգացող դեպքերի հետ քայլ պահելու համար:

Պարտավոր էի իրականի մոտ օրինակ տալ, առիթ տալով ժողովուրդին որ ավելի լուրջ վերաբերվի հարցին:

Ուզում եմ ձեզի վստահեցնել, թե վերջավորությունը ինձ համար էլ հստակ չի: Այդ միայն Աստված գիտի: Ես միայն գիտեմ, որ Աստվածաշունչի մեջ գրվել է, թե աշխարհի կառավարությունը պիտի իրականանա: Ես պատրաստեցի այս բեմադրությունը, գաղափար տալու ձեզի թե թշնամին ինչպես է մտածում: Պատգամս է լինեք զգուշ ու չընկնեք ծուղակը:

Կան մի շարք անորոշություններ: Մի բան հստակ է. մենք տակավին չգիտենք Պարսից Ծոցի Պատերազմի հետևանքները: Հնարավոր է որ գաղտնի ուժերը ստեղծել են այս տագնապը որպես վերջին արար՝ հաստատելու Աշխարհի Նոր Օրենքը: Բայց ուսումնասիրողների մեծամասնությունը կարծում են, որ շատ ավելի մեծ վերջնական տագնապ հարկավոր է եւ շատ ավելի կազմակերպված աշխատանք՝ պատրաստելու մարդկությունը այսպիսի «հսկա քայլից» առաջ: Ես էլ այդ կողմն եմ թեքվել:

Իրաքի հետ վերջին պատերազմը փորձ է. ավելի մեծ մի բանի են պատրաստվում: Սատտամ Հուսեյնը տակավին պաշտոնի վրա է եւ ինչպես գրում ու ասում են, որ իր տրամադրության տակ ունի երեք կամ չորս հյուլեական ռումբեր, նշան՝ որ ավելի վատ օրեր են սպասվում: Եթե ծրագրել են շատ ավելի մեծ Միջին Արեւելյան բախում, սակայն այս անգամ դա կարող է վերածվել շրջանային կամ նույնիսկ համաշխարհային պատերազմի*:

Աշխարհի Նոր Օրենքը պիտի գործադրեն աստիճանաբար: Նախ Միացյալ Նահանգները պիտի առաջնորդեն ազգերը՝ թույլ համաշխարհային դաշնության (ինչ որ ներկայիս կատարվում է) Միացյալ Ազգերի հովանիին տակ, ապա հնարել համաշխարհային տագնապ ու որպես փոխընտրություն հաստատել աշխարհի կառավարությունը:

* Ճիշդ այս պատճառով քայքայեցին Սովետական Միությունը որպեսզի համաշխարհային պատերազմ չլինի

Հիմնական պատճառ պետք է հնարել. մարդկությունը պիտի համոզվի, որ վերջնական խաղաղություն չի կարող հաստատվել առանց կեղրոնական գորավոր կառավարության, որ կարող է պաշտպանել երկիրները իրարից ու զոհի ներկայի վիճակը: Դարի սկզբից կարելու քայլեր առնվել են այս ուղղությամբ եւ եթե պատմությունը կրկնվի, շուտով «առաջընթաց» պիտի լինի:

20րդ դարում համաշխարհային պատերազմներ տեղի ունեցան: Հրահրեցին նախահարձակ ուժը որ ստեղծի համաշխարհային տագնապ ու աշխարհը մխրձի պատերազմի մեջ եւ երկու պարագաներին նախահարձակը պարտվեց: Յուրաքանչյուր պատերազմից հետո ազգերի համախմբում հիմնեցին, որի կարծեցյալ պարտականությունն էր պահպանել աշխարհի խաղաղությունը, նախ ազգերի Դաշնությունը ապա Միացյալ Ազգերը: Յուրաքանչյուրը մեզի մի քայլ առաջ մղեց դեպի մեկ-աշխարհի կառավարություն:

Միացյալ Ազգերի Կազմակերպությունը նախնական մեկ-աշխարհ կառավարություն է: Ազգերի Դաժնությունը ունէր 63 անդամ երկիր, Միացյալ Նահանգները մաս չէին կազմում: Միացյալ Ազգերը կազմվել է 159* երկիրներից, գրեթէ աշխարհի բոլոր երկիրները: Նա ընդգրկում է Աշխարհի Դատարանը, Միացյալ Ազգերի Խաղաղարար Ուժերը եւ մասնագիտական կազմակերպություններ, ինչպէս Միջազգային Դրամական Հիմնադրամը, Աշխարհի Դրամատունն ու Աշխարհի Առողջության Կազմակերպությունը, նաեւ UNESCOն, UNICEFը, հակակշռելով կյանքի յուրաքանչյուր երեւոյթ: ՄԱԿը իսկական ուժ չունի, գործադրելու եւ պարտադրելու իր ծրագիրները:

Երրորդ աշխարհի մեջ տեղի ունեցող մի պատերազմ կարո՞ղ է մարդկությունը առաջնորդել դեպի Աշխարհի Նոր Օրէնքը: Եթէ այո, ինչպէ՞ս պետք է սկսի այդ պատերազմը: Որո՞նք պիտի լինեն դերակատարները եւ ի՞նչ են լինելու հետեւանքները: Այս կարեւոր հարցերին պատասխանելու համար պետք է քննարկենք այն շրջանները, որտեղ գոյություն ունեն թշնամություններ եւ ամենից կարեւորը, դավադիրների շահերը համընկնեն:

Հնարավոր Բեմադրություն

Համաշխարհային տագնապին ավելացրած անոթությունը, պարտքերն ու մթնոլորտային փոփոխությունները պիտի ստիպեն մարդկությունը որ ընդունի նոր համակարգը: Ուղղակի հայտարարում են. «Համաշխարհային Հարցեր Համաշխարհային Լուծումներ են Պահանջում»:

Պատմականորեն պատերազմները մեծ փոփոխություններ են առաջացրել:

Անցյալին Գերմանիան էր պատերազմների օճախը, այսօր այն տեղափոխվել է

* Այսօր շուրջ 190 երկիր

տարբեր տաք շրջան, Միջին Արեւելք: Եթէ ոչ Իրաքը երկրորդ անգամ, շատ հավանաբար Պարսկաստանը կամ Սուրիան:

Կարծում եմ որ Աշխարհի Նոր Օրէնքը հաստատելու ճանապարհին Սուրիան կարեւոր դեր ունի կատարելիք, եթէ ոչ որպէս պատերազմ հրահրող այլ խաղաղության գլխավոր միջնորդ: Սուրիան երկար ժամանակ շատ լավ էր խաղում իր դերը եւ հակառակ ընդունված կարծիքի Սուրիան է – Իրաքը չի – Միջին Արեւելքի իսլամ զինվորական գլխավոր ուժը, եւ հետեւաբար, արժանի՝ լուրջ ուշադրության:

Սուրիան պատրաստվում է հարվածել Իսրայելը: Ըստ Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարության հրատարակած տվյալների՝ Սուրիան գնել է 19 միլյար տոլար արժողությամբ ռուսական ռազմամթերք: Սա Երրորդ աշխարհի ամենամեծ ռազմական համաձայնությունն է. նաեւ այդ երկրում է գտնվում Սովետական Խորհրդատուների մեծագույն բանակը:

Սուրիական կառավարությունը կարողացել է խաբել ու վախցնել իր ժողովուրդը իսրայելյան հարձակումից, թէեւ Իսրայելը միշտ մերժել է այդպիսի ամբաստանություններ:

Այս պատճառների համար ընտրեցի Սուրիան որպէս օրինակ հնարավոր թատերական բեմադրության (թէեւ այս նույն բեմադրությունը գործադրելի է Պարսկաստանի, Իրաքի կամ Լիպիո հետ):

Սուրյո հարձակումը Իսրայելի վրա, նույն գաղտնի ուժերի թույլատվությամբ, ճակատագրական սխալ է որովհետեւ պատճառ պիտի լինի աշխարային տագնապի: Հրեական պետությունը անակնկալի գալով, պատասխանելու առիթ պիտի չունենա: Սուրիական Միկերը չորս րոպէից պիտի հասնեն Երուսաղէմ: Իսրայել շատ դժվար երկընտրանքի առաջ պիտի կանգնի, հանձնվել՞ թէ հակադարձել՞ հյուլեական ռումբերով հարվածելով Սուրիան, նույնիսկ Իրաքը: 1986ին, Լոնդոն հրատարակվող Սանդեյ Թայմզը հրատարակել էր մի հոդված, որտեղ

ասվում էր թե Իսրայել ունի 200 հյուլեական զենք: Ուրեմն, մի բան պարզ է. հյուլեական փոխհրաձգություն է տեղի ունենալու:

Հին Կտակարանում, Դամասկոսի վերաբերող մարգարեություն է գրվել որ դեռ պիտի կատարվի: Իսահակը ասել է. «Դամասկոսը պիտի վերածվի ավերակների կույտի»: Դամասկոսը աշխարհի ամենից հին մայրաքաղաքն է եւ տակավին չի կործանվել: Մարգարեությունը իրականանալու է Քրիստոսի վերադարձից առաջ:

Կորցնելով հազարավոր խորհրդականներ եւ օգտվելով Իսրայելի դեմ կազմված աշխարային կարծիքից՝ Սովետները պիտի հարձակվեն Իսրայելի վրա, իրանց առաջ գտնելով Միացյալ Նահանգները: Թե ի՞նչ կարող է պատահել դրանից հետո, աներեւակայելի է: Մարդկությունը պիտի հայտնվի բնաջնջման եզրին:

Չար մարդիկ, հին ժամանակներից երազել են այսպիսի տագնապ: 15 Օգոստոս 1871ին Ալբեր Փայքը գրում է Մացինիին.

«Մենք պետք է թիկունք կանգնենք նիհիլիստներին ու անաստվածներին եւ նրանց միջոցով հրահրենք ընկերային փոփոխություն, որի առթած ահավոր դժբախտությունը ազգերին փաստելու է վայրենության ծնունդ՝ անաստվածի իսկական դեմքը: Ապա ժողովուրդը պիտի փորձի ոչնչացնել քաղաքակրթությունը ավերողներն ու հուսահատի քրիստոնեությունից, որ պիտի կորցնի իր ուղղությունն ու ղեկավարությունը ... եւ ընդունի Լույսը, Լուսիֆերի վարդապետությունը, որ վերջապես պիտի հայտնվի մարդկության իր ամբողջ մաքրությամբ եւ ջնջի քրիստոնեությունն ու անաստվածությունը»:*

Այսպիսի տագնապի հետեւանքները ահավոր են: Սկստի առեք, որ երեսունից ավելի երկիրներ ունեն հյուլեական կարողականություն: Ոչ ոք անմասն պիտի մնա այս արհավիրքից: Հուսահատություն եւ անորոշություն պիտի տիրի: Բայց մուժ ուժերը որքան էլ դավադրեն ու ծրագրեն պիտի հաջողին այնքան՝ որքան Աստված թույլ տա: Ցարդ, Աստված արգիլել է այն մուժ ուժերին կատարել իրենց քայլը: Բայց մարդիկ այնքան պիտի չարանան, որ Աստված պիտի ասի «բավական է» եւ թույլ պիտի տա չար ուժերին որ ժամանակավորապես կատարեն իրանց ուզածը: Իրական տագնապը այնտեղ պիտի սկսվի:

Եթե Կառուցես՝ Պիտի Գամ

Գաղտնի կազմակերպությունը դարեր սպասել էր. վերջապես հասել էր նպատակին: Բաբելոնի աշտարակը կրկնվում էր: Հազարավոր Նոր Ժամանակավորներ պիտի պահանջեն մեկ-աշխարհ կառավարությունը: Պետք է փոխվի հին օրենքը, պիտի ասեն, որպեսզի չկրկնվի ողբերգությունը: Մամուլը պիտի գործակցի:

* Չուգաղիպություն՝ ւն է, որ Միջին Արեւելքի գորավորագույն անհատները ԱզատՄասոններ են: Այս մարդիկը պիտի իրականացնեն Փայքի նախատեսությունները: Կարելու արար քրիստոնեա ղեկավար ... ասաց ինձ, որ ըստ իր լիբանանյան կապերին, Սուրիո Ասադ թագավորն ու Հորդանանի Հուսեյն թագավորը ԱզատՄասոններ են: Եթե ճիշդ է, շատ ավելի մոտ ենք Աշխարհի Նոր Օրենքին: (Կստահ չե՞ր թե Մադդամ Հուսեյն էլ պատկանում էր նույն գաղտնի կազմակերպության):

Մի օր այս նույն արար-քրիստոնեա ղեկավարին որդին ինձ տվեց լիբանանյան Փյունիկ Օթյակի Մասոնական փաստաթուղթ – անդամակցության վկայագիր: Փաստաթուղթի վրա նշվել էր, որ Փյունիկ Օթյակը, Հորդանանի Մեծ Օթյակի իրավասության տակ է, որ իր կարգին

ենթակա է Արաբ Գլխավոր Խորհուրդին: Հորդանանը հին ժամանակներից եղել է Միջին Արևելքի գաղտնի ընկերությունների ամբողջ եւ շատ մեծ ազդեցություն ունի քուլիսների ետին կատարվող քաղաքականության վրա: Փաստաթուղթի վրա նկարվել էր մեհեանների եւ մեր տուլարի վրա գտնվող Մասունական խորհուրդը՝ ամենատես աչքը:

Աշխարհի Նոր Օրենքը պետք է հաստատվի, պիտի ասեն, որովհետեւ ազգերը անկարող են աշխարհի խրթին հարցերը լուծել եւ այս բոլորը՝ աշխարհի խաղաղության համար:

Աշխարհի Նոր Օրենքը պիտի կառուցվի վարեն դեպի վեր, ինչ որ ժողովուրդներ ընդհանրապես երագել են: Պիտի գա ժողովրդավարության անունին տակ, ոչ այս ձևի՝ ինչ որ մեր քաղաքագետները պարտադրում են մեզի: Մարդկությունը պիտի խորհի, թե ինքն է իր ճակատագրին տերը, անգիտակ՝ վարագույրի ետևից աշխատողների ծրագրերին:

Խորհրդավոր գաղտնի կազմակերպությունները պիտի իշխեն: Նոր ժամանակի հավատացողները ունեն մի ասացվածք. «Եթե կառուցես՝ պիտի գամ», այսինքն՝ եթե հիմնես Աշխարհի Նոր Օրենքը, ես (հակաքրիստոսը) պիտի գամ եւ գրավեմ իշխանական աթոռը:

Շարժումը արագորեն պիտի ընդհանրանա: Ամեն մարդ պիտի պահանջի աշխարհի ժողովրդավարական կառավարությունը:

Մի օր Գազանը կամ նրա ներկայացուցիչներից մին պիտի հայտնվի եւ ներկայացնի առերևույթ հոյակապ Միջին Արևելքի խաղաղության ծրագիրը: Համաձայնություն հրեաների եւ պաղեստինցիների միջեւ, որ պիտի ապահովի Իսրայելի ապահովությունը եւ առիթ պիտի տա հրեաներին կառուցել երկար սպասված տաճարը եւ թույլատրի պաղեստինցիներին ապրել իրենց ինքնավար հողերի վրա: Գազանը պիտի հաջողի՝ որտեղ ուրիշներ ձախողել են:

Գազանը պիտի հայտնվի որպես ժողովրդավար ղեկավար եւ խաղաղության ջատագով: Ան պարզ չի թե որպես ինչ պիտի երեւա, քաղաքագետ կամ կրոնական ղեկավար (Պապա թե Դալայ Լամա), նկատի առեք որ ան անձանթ է մարդկության: Երբ ինք եւ սուս մարգարեն գրավեն ամեն բան, այն ժամանակ քրիստոնեաները պիտի իմանան թե ով է նա:

Հակաքրիստոսիսը պիտի իշխի Միացյալ Ազգերի կամ նոր կազմված Ազգերի Դաշնության վրա եւ աշխարհը վերածի տասը շրջանների:

Աշխարհի Սահմանադրությունը պիտի առաջարկվի եւ «ժողովրդավար» Աշխարհի Խորհրդարանը ստեղծվի: Աշխարհի քաղաքացիները պիտի կարծեն, թե ասելիք ունեն, մինչդեռ աղանդավոր գաղտնի ընկերությունները պիտի հակակշռեն ամեն բան: Օրինակի համար, եթե Աշխարհի Նոր Օրենքը հիմնված լինի երկու կամ երեք կուսակցության համակարգի վրա, նույնն է Նոր ժամանակավորները պիտի հակակշռեն բոլորը, քանի իրենք են աշխարհի կառավարություն առաջարկողները: Իրենք պիտի լինեն առաջնորդները եւ աշխարհը պիտի հետևի:

Ժողովուրդը գոհ պիտի լինի որովհետեւ իրավունք պիտի ունենա ընտրելու, ինքզինք պիտի զգա ընտրվանի կողքին: Բայց կարեւոր չի թե ով է ընտրվում, արդյունքը նույնն է: Հակաքրիստոսի հետեւորդները պիտի հակակշռեն համակարգը: Աշխարհի մի համակարգ փախչելու տեղ չունեն:

Ինքնիշխան ազգերը կը դադրին գոյություն ունենալ: Հաստատելու են համաշխարհային տնտեսական համաքարգը եւ ինչ որ մնացել էր հին կարգերից ներկային չի պատկանի, ինչպես լեզուները, մշակույթները, երկիրների անունները, եւ այլն: Միակ մի միջազգային իշխանություն՝ հակակշռված սատանայի կողմից:

Վիճաբանող կրոնները պիտի միանան, եւ նա որպես հոգեկան վարպետ անհավանական չի որ ինքզինք հայտարարի Քրոստոս*: Նա կարող է հոչակել ինքզինք հրեաների երկար ժամանակ սպասված Մեսիան:

Բուդդայականների՝ հինգերորդ Բուդդան, իսլամների՝ Իմամ Մահդին, Հնդկների՝ Քրիշնան: Որոշ քրիստոնեաներ պիտի ընդունեն նրան որպես Քրիստոսի երկրորդ գալուստը:

Աստվածաշունչը ասում է մեզի, որ աշխարհի բնակչության մեծամասնությունը պիտի խաբվի եւ բոլոր նրանք որոնք լավ չեն պատրաստվել եւ լավ չեն հետեւել Աստուծո խոսքին, պիտի կարծեն թէ Քրիստոսի երկրորդ գալուստն է:

Նոր Ժամանակի սկզբունքները մտել են մեր եկեղեցիները, դրա համար չենք կարողանում զանազանել հակաքրիստոսն ու Քրիստոսը: Եթե նա գալու լիներ որպէս սատանայի ծառա, քիչեր պիտի հետեւէին նրան, բայց նա գալու է Քրիստոսի անունով՝ որպէս Լույսի հրեշտակ: Խորատես քրիստոնէաները պիտի զարմանան երբ իմանան, թե ում են հետեւում՝ հիմնելու Աշխարհի Նոր Օրենքը, հավանաբար նրան, որին երբեք չէին կասկածել:

Հիսուս Ազդարարել էր

*«Սուտ Քրիստոսն ու սուտ մարգարէները
պիտի երեւան, կատարեն մեծ նշաններ
ու հրաշքներ խաբելու նույնիսկ ընտրյալը:
Տեսէք, եւ ձեզի ասում եմ ժամանակից առաջ»:
(Մատթոյս 24: 24, 25)*

Հակաքրիստոսը չի կարող ներկայացնել քրիստոնէությունը որովհետեւ նրա ուսմունքը համաստվածությունն է, հիմնված Արեւելյան խորհրդապաշտության ու հին խորհրդավոր կրոնների վրա – Նոր Ժամանակի հավատը:

Աստուծո փոխարեն Եսը պիտի պաշտեն: Եսության սուտ ուսմունքը նույնիսկ եկեղեցի է ներթափանցել: Շատեր չեն հասկանում թե ինքնապաշտությունն ու խորհրդապաշտությունը նույն բաներն են: Քրիստոսի անունով պաշտում եք սուտը: Մա բացարձակ խաբելություն է:

Սկզբնական շրջանին հակաքրիստոսը պիտի հաջողի մոլորակի խաղաղությունը պահպանել, որովհետեւ այդ խնդիրները նրա հետեւորդներն էին հնարում: Երբ մթության իշխանը բազմի աթոռին, նրա հետեւորդները պիտի դադարեն պատերազմներ հրահրել եւ նրան պիտի շնորհվի խաղաղասեր մակդիրը:

Ըստ Աստվածաշունչի, չարը յոթը տարի պիտի իշխի: Առաջի կեսը իր իշխանությունը հաստատելու եւ հակակշռելու երկրագունտը: Երկրորդ երեքուկես տարիներին պիտի

* Հակաքրիստոս նշանակում է նաեւ Քրիստոսի տեղ

պահանջի, որ մարդկությունը պաշտի նրան եւ պիտի սկսի մեծ փորձությունը:

Դժբախտությունը ուր է, որ մարդկության մեծամասնությունը կամավոր պիտի ծառայի այս անորենին, նրա մեջ տեսնելով փրկիչը:

Նա սովորացնելու է մարդկանց թե ինչպէս կարող են գեր-ուժ լինել: Մարդը պիտի կատարի բոլոր արգիլյալ չարությունները: Չարը պիտի հաջողի լավի անունի տակ:

Սատանայի ժամանակաշրջանն է, նա պիտի ստանա այն ամենը որ արժանի է Աստուծո: Մարդը Աստուծո փոխարեն պիտի պաշտի սատանան:

Բացարձակ իշխանություն եւ հակակշիռ ունենալու համար յուրաքանչյուր անհատի աջ թեւի վրա պիտի դրոշմվի նշան ու համար: Առանց այդ համարի մարդ չի կարող գնել կամ ծախել:

Նշանն ու համարը ընդունողը պիտի պաշտի սատանան, իսկ մերժողի հետ պիտի վերաբերվի կենդանիների նման: Շատեր պիտի սպանվեն:

Բոլոր այն ընտանիքները որոնք ունեն հող կամ արժեքավոր մետաղներ, նախ լավ վերաբերում պիտի ստանան, բայց երբ չկարողանան վճարել իրենց տուրքերը պիտի հալածվեն ու կորսնցնեն ամեն բան: Մարդ զարմանում է թե ինչպէ՞ս կարելի է այդ ձեւի ապրել, բայց պետք չի հուսահատվել որովհետեւ նախ այդ շրջանը միայն երեքուկես տարի է, երկրորդ՝ այդ հալածվողներին, մեկը, մի տեղ, պիտի պատսպարի եւ հոգա: Բոլոր նրանք ովքեր ընդունել էին

նշանը, տեսնելով անգույթ կարգի վայրենությունները պիտի հասկանան որ սա Աստուծո առածը չի եւ պիտի փորձեն օգնել հալածվողներին եւ պատժվողներին:

Վերջապէս, բոլոր նրանք ովքեր հաստատուն են մնալու իրենց հավատին մեջ, նույնիսկ էթե զոհվեն պիտի արժանանան Աստուծո հավիտենականության:

Շատեր կարող են այս գլուխը շատ երեւակայական գտնել: Բայց ես ազդարարում եմ ձեզի, մանավանդ քրիստոնէաներին. շատ վատ ժամանակներ են գալու եւ դուք այսօրվանից պէտք է պատրաստվէք դրանց: Ես պարտավոր եմ զգուշացնել ձեզի, անկախ դրանից թե աշխարհ ինչ է ասում կամ մտածում:

Փրկությունը

Հիսուս ասել է. ոչ ոք գիտի Իր վերադարձի ճիշդ օրը «ոչ հրեշտակները, նույնիսկ Որդին, միայն Հայրը», բայց պէտք է պատրաստ լինէք:

Անցյալին Աստուծո հավատացյալների փրկության մասին եղել են երկու տեսակետեր: Առաջին, Աստված պիտի փրկի իր հավատացյալներին մեծ փորձությունից առաջ, որ ընդունվել էր շատերի կողմից 1800ականներին: Կոչվում է նախափորձության փրկության տեսություն:

Ըստ երկրորդ տեսության, քրիստոնէաները պիտի ապրեն փորձության շրջանը եւ պիտի փրկվեն Քրիստոսի գալով: Այս տեսությունը ծանոթ է որպէս հետ-փորձության փրկություն, որ ավելի ժողովրդական է:

Սա միշտ ալ հարց է եղել եկեղեցիի համար, որովհետեւ Սբ. Գրքից կարելի չէ գիտնալ թե երբ է լինելու փրկությունը:

Ասում են նաեւ, որ Աստված երբեք թույլ պիտի չտա որ եկեղեցին ենթարկվի փորձության, իսկ քրիստոնէաները՝ հալածանքների, չարչարանքների ու սպանությունների: Բայց մարդիկ մոռանում են, որ եկեղեցիի սկզբնական շրջանին շատեր մարտիրոսացան: Հիսուսի առաքյալները՝ բոլորն ալ սպանվեցին: Ի՞նչ կարծում էք թե Նա մոռացե՞լ էր նրանց:

Մեր սերունդի միլիոնավոր քրիստոնէաներ մահացան Համայնավարների ձեռքով: Նրանք կարելու չեն Աստուծո համար:

Շատեր շփոթում են սատանայի հալածանքների եւ Աստուծո դատաստանի միջեւ:

Աստուծո դատաստանը նրանց համար է, ովքեր անտեսում կամ ըմբոստանում են Իր դեմ, իսկ սատանան սպանում է բոլոր նրանց՝ որոնց չի կարողանում խաբել կամ գրավել: Սատանայի պատիժը միայն այս հողի վրա է. Աստուծո դատաստանը՝ հավիտենական:

Աստուծո եւ սատանայի միջեւ եղած կռիվը մեր հոգիների համար է:

Խաչը բոլորիս համար է: Եկեղեցիներում այլեւս զոհողությունների ու չարչարանքների մասին չեն խոսում:

Չարչարանքը միայն փորձության շրջանի համար չի այլ՝ ամենօրյա երեւոյթ աշխարհի տարածքին, մինչեւ փրկություն՝ երբ որ ալ դա պատահի:

Եզրակացություն

Եթե շուտով պիտի ենթարկվենք հալածանքի, խաբեության, ինչպե՞ս կարող ենք պատրաստվել դրան: Հարկավոր է, ոչ միայն ֆիզիքապես, այլ հոգեպես պատրաստ լինել:

Ենթադրելով որ դու հավատացյալ ես, ահավասիկ մի քանի խորհուրդ պատրաստվելու դժվար ժամանակներին:

Եղիր կրթված ու գիտակից քրիստոնեա:

Գիտցիր զանազանել լավն ու վատը, ճշմարիտը՝ խաբկանքից: Փորձիր հասկանալ, թե ի՞նչ է տեղի ունենում աշխարհում, մանավանդ ուշադիր եղիր սատանայի ռազմավարությունից ու ծրագրերից: Քարոզիչին մի վստահիր. առանձինն սովորի թե ինչ է ասում Աստվածաշունչը:

Ապրիր կյանքը այնպես ինչպես որ է:

Մարդը ստեղծվել է կատարյալ: Նրան տրվել է խելք եւ կողմնորոշվելու կարողություն. հետեւաբար, ոմանք մաքուր են ապրում, ուրիշներ նախընտրում են հետեւիլ Լուսիֆերին (սատանա):

Մի ժամանակ սատանան հրեշտակ էր, բայց ըմբոստացավ Աստուծո դեմ – ուզում էր Աստված լինել:

Աստված հեռացրեց նրան երկնքից: Նա օգտագործեց մարդ արարածը. ստիպեց որ կատարի նույն սխալը – Աստվածանալ: Պտուղը կերան՝ մեղանչեցին:

Մեղք գործելը ոչ միայն սովորում են, այլ ժառանգում: Մեղքը աշխարհ եկավ Ադամի հետ, մահը հաջորդեց որովհետեւ ժառանգները մեղավոր էին:

Ով որ կատարյալ մաքուր կյանք է ապրում, կը գնա դրախտ:

Իմ պայքարը մարդ արարածի դեմ չի, այլ սատանայական գաղափարների եւ այդ գաղափարները օգտագործող ուժերի դեմ, որոնք աշխատում են զերեւարել, ճորտի վերածել մարդկությունը:

Երկրորդ Մաս

Երկրորդ մասը ամբողջությամբ (էջ) նվիրվել է փաստագրային տվյալների:

Նկարագրվել է Աշխարհի Մահմանադրություն, Խորհրդարանական Ընկերակցություն, Ժամանակավոր Աշխարհի կառավարություն և Աշխարհի Դաշնություն կազմելու տարված աշխատանքները: Կազմակերպողների անունները (հայ չկա), փոխանակված նամակների պատճենները, կազմակերպված ժողովների տեղն ու թվականները, հրավերների պատճենները, առնված որոշումները, ընտրված անձերի անունները (հայ չկա), ժողովներին ելույթ ունեցողների անունները և ազգային պատկանելիությունը (հայ չկա), հավաքներին մասնակցող կազմակերպությունների անունները (հայ չկա – պարզ չի, որովհետև այսօր Երեւանում մոդա է հայաստանյան ընկերությունների անունները օտար անուններով կնքել), մասնակցող հռչակավոր անհատների անունները (հայ չկա):

Այս մասը մասնագիտական է և ով որ այս հարցերով ուսումնասիրություն է կատարում՝ կարող եմ տրամադրել:

Ծանոթագրություն

Այս բաժնում, գրքի սահմանների ներած չափով, տրվում է որոշ տեղեկություններ դյուր ըմբռնելի դարձնելու արծարծված հարցերը:

Օգտագործել եմ.

- Հայկական Սովետական Հանրագիտարան
- Բրիթանիքա Հանրագիտարան

Զրադաշտականություն

Պարսկաստանում տիրապետող նախամահմեդական կրոն: Հիմնադիրը՝ Զրադաշտը (մ. թ. ա. 630-553): Ըստ Զրադաշտականության, գոյություն ունի երկու սկզբունք՝ Բարի, ստեղծարար ոգին Ահուրամազդան, միակ գերագույն աստվածությունը, եւ չարը անձնավորող՝ Ահրիմանը:

Ահուրամազդան ստեղծել է յոթ աստվածային գորությունները, բնաշխարհի առանձին մասերի արարիչներն ու հովանավորողները եւ աստվածային էակները, ինչպես Միթրան, Անահիտը, եւ այլն:

Ահուրամազդայի արարչագործությունը հանգեցրել է չար սկզբունքի գործունեությանը: Ահրիմանը գործի դարել Զար Միտքը, Ցասումը, Կեղծիքը: Նրան են հարել դեւերը, որոնք ձգտում են ավերել Ահուրամազդայի արարչությունները: Այսպես են առաջացել մահը, հիվանդությունները, աղետները: Այս պայթարում՝ որ պիտի վերջանա Ահուրամազդայի հաղթանակով, մեծ տեղ հատկացվում է մարդուն: Մարդն ունակ է ընտրություն կատարել չարի եւ Բարու միջեւ: Ճիշդ ընտրության դեպքում, որը համապատասխանում է զրադաշտական բարոյական երրորդությանը՝ «Բարի խոսք», «բարի միտք», «բարի գործ», մարդն իր կյանքի նպատակն է համարում չեզոքացնել, ոչնչացնել չարիքը, օժանդակել՝ աշխարհում արդարությունը վերականգնելուն: Կրոնաբարոյական կանոնների խախտումով մարդն օժանդակում է չարիքին եւ մեղանչում իր հոգու դեմ: Մահացածի հոգին, համապատասխան մարդու արդար եւ անարդար խոսքերի, մտքերի եւ արարքների, ուղարկվում է դրախտ կամ դժոխք:

Զրադաշտականության կրոնափիլիսոփայական համակարգում կան Անեզրական եւ Եզրական ժամանակներ: Վերջինը, իր հերթին, բաժանվում է երկու հատվածների՝ Արարչագործության, երբ Ահուրամազդան ստեղծել է աշխարհը, եւ Միախառնության, որ սկսվել է Ահրիմանի հարձակումով Ահուրամազդայի արարչության վրա եւ ավարտելու է Զրադաշտից 3000 տարի հետո՝ Փրկիչի գալստյամբ, վերջին դատաստանով, Զարիքի ոչնչացումով եւ Անեզրական ժամանակի վերադարձով:

Զրադաշտականությունը պետական կրոնի է վերածվել Սասանյանների օրոք: Շապուհ Բ. եւ Հազկերտ Բ. քաղաքական նպատակներով դաժան, բայց անարդյունավետ փորձեր են կատարել զրադաշտականացնելու իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին՝ հատկապես Ասորիներին եւ Հայերին:

Զրադաշտականությունը ազդել է քրիստոնեության, մանիքեության, մահմեդականության, ինչպես նաեւ ստոյիկյան ու գնոստիկյան ուսմունքների ձեւավորման վրա:

Զրադաշտականությունը իր տեղը գիչեց մահմեդականության, սակայն Իրանում (Քերմանի նահանգ) եւ Հնդկաստանում (Բոմբեյը եւ շրջակայքը) պահպանվել են զրադաշտականների փոքր համայնքներ:

Բրահմայականություն

Հին հնդկական կրոն, որը ծագել է մ. թ. ա. Ա. հազարամյակում: Բրահմայականության հիմնական սկզբունքները շարադրված են Վեդաներում: Ըստ այս ուսմունքի, մարդու մահից հետո նրա հոգին, լքելով մարմինը, վերաբնակվում է մեկ այլ մարմնի մեջ, համապատասխան նախորդ կյանքում ունեցած առաքինի կամ արատավոր վարքագիծի: Դա կրկնվում է այնքան ժամանակ, մինչև հոգին մաքրվում ու միաձուլվում է ընդհանուր հոգու հետ՝ ազատվելով նորանոր վերակենդանացումներից:

Բրահմայականությունում մեծ տեղ է հատկացվել ճգնաժամային կյանքին: Բրահմայականության մեջ տեղ է գտել աստվածային երրորդության (Բրահման, Շիվա, Վիշնա) մասին ուսմունքը: Բրահման գլխավոր է արարչագործ (ստեղծել է երկրագունտը) աստվածն է, Վիշնան՝ պահպանողը, իսկ Շիվան՝ ավերողը: Բուդդայականության առաջացմամբ Բրահմայականությունը զիջում է իր իշխող դիրքը, բայց հետագային վերածնվեց հինդուականության տեսքով:

Հինդուիզմի մեջ Բրահմանը բացարձակ ճշմարտությունն է. կոչվում է Աշխարհի Հոգի կամ Բացարձակ Էակ:

Բրահմանները հնդկական սրբազան ծիսակատարությունների նկարագրությունն է, գրված 8-6 դդ. մ. թ. ա. : Բրահմանան արտացոլում է քրմերի անսահմանափակ իշխանությունը:

Մորմոններ Կամ Վերջին Սուրբերը

Քրիստոնեական հարանվանություն՝ հիմնված 1830ին ժողովի Սմիտի կողմից: Ավելի քան չորս միլիոն Մորմոններ կան, որոնց մեծամասնությունը հետևում է Յուբա հաստատված եկեղեցիին, որ կոչվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Սուրբերը:

Մորմոն հավատալիքները հիմնվել են Հուդայության եւ Քրիստոնեության սկզբունքների վրա եւ ամփոփվել են Մորմոնի գրքում (1830):

Մորմոնները հավատում են, որ այս գիրքը աստվածային հայտնություն է եւ ըստ այս գրքի (600 մ. թ. ա.) հրեաներ եկել են Նոր Աշխարհ եւ եղել ամերիկյան հնդիկների նախահայրերը: Մյուս երկու Մբ. գիրքերն են **Վարդապետություն եւ Ուխտ ու Արժեքավոր Սարգարիսը**, որոնք պատմում են ժողովի Սմիտի կյանքն ու վարդապետությունը՝ ըստ նրա հայտնությունների: Մորմոնները հավատում են նաեւ, որ կապ գոյություն ունի Աստուծո եւ մարդու միջեւ եւ այդ կապը կատարվում է Մորմոն եկեղեցիի մարգարե-նախագահների միջոցով: Հակառակ քրիստոնեաների կողմից ընդունված երրորդության, նրանք ընդունում են հարություն առած Աստված Հայրը եւ Աստված Որդին, մինչ Սուրբ հոգին անմարմին է (ոգեղեն): Մորմոնները հավատում են, որ Քրիստոսը մահացավ՝ փրկելու մարդկությունը եւ հարություն առած Քրիստոսը քարոզել է Նոր Աշխարհի հրեաներին, բայց նրա պատգամը մոռացվել է կամ սխալ թարգմանվել, հետեւաբար, ուղարկվել է ժողովի Սմիտը: Մորմոն եկեղեցին եւ նրա նախագահը Աստուծո վերականգնված հեղինակությունն է (իշխանությունը):

Մորմոնները հավատում են, որ մարդ չծնած հոգի է, հետեւաբար, Մորմոնների պարտականությունն է բազմակնությունը, որպեսզի շատ երախտ բերեն սպասող հոգիների համար: Մարդը ծնվում է մաքուր. նա Աստուծո զավակն է, անմեղ է: Ապագային մարդն է պատասխանատու իր արարքների համար: Հավատում են փրկության: Մարդու հոգին եւ հարություն առնող մարմինը պիտի միանան երբ Քրիստոս վերադառնա Երուսաղեմ եւ այնտեղից Ամերիկա (տակավին անհայտ մի տեղ), դրանից հետո լավ Մորմոնը պիտի Աստվածանա եւ Աստուծո հետ ապրի՝ դրախտի մեջ:

Մորմոնի պարտականություններն են եկամուտի 10 տոկոսը նվիրել եկեղեցիին, իր ժամանակից երկու տարի գոհել քարոզչական աշխատանքի, չծխել, չխմել ոգելից ըմպելիներ, թեյ ու սուրճ:

Եկեղեցին ղեկավարվում է 12 առաքյալներով: Նվիրապետության վերը՝ նախագահն է, երկու խորհրդականներով:

Մորմոն պատմությունը սկսվում է Նյու Յորք ծնած հողագործի որդի ժողեֆ Սմիտի հետ: Նա ասում է, որ 1820ին նրան այցելում են Աստված ու Քրիստոս եւ նրան ասում են, որ գոյություն ունեցող եկեղեցիներից ոչ մեկը Աստուծո պատգամն է փոխանցում: Հետո, նա խոսում է երկնային հրեշտակ Մորմոնի հետ, որ սերել է հին ամերիկացիներից եւ նրան տալիս է ոսկյա աղյուսակները, որոնք թարգմանելով գրում է Մորմոնի գիրքը:

1830ին հիմնում է Հիսուս Քրիստոսի Վերջին Սուրբերը եկեղեցին: Երկար տարիներ հալածվել է թափառել է տք հաստատվում է Իլլինոյզ նահանգը: Այնտեղ ժողեֆ ու իր եղբայրը բանտարկվում են: 27 Հունիս 1844ին խուժանը սպանում է նրանց:

Այսօր Մորմոն եկեղեցին շարունակում է ծավալել եւ աշխարհի ամենից հարուստ եկեղեցիներից է, եւ մտել է մեծ գործարքների մեջ (մեր կղերների նման որ միայն ուտել զիտեն):

Եկեղեցիի եկամուտի 50 առ հարյուրը գալիս է հավատացյալներից (հայերի նման):

Բավիլյան Շարժում

Ծագել է Հայաստանում, ապա տարածվել Բյուզանդական կայսրության փոքր ասիական շրջաններում:

Ըստ Բյուզանդական աղբյուրների «բավիլյան» անվանումը առաջացել է հայազգի Կալինիկեյի որդի Պողոս (Պավղոս) անունից: Բավիլյաններն առաջին անգամ հիշատակվում են 554ի Դվինի եկեղեցական ժողովի ընդունած «Ուխտ Միաբանության Հայոց Աշխարհիս» թղթում: Ենթադրվում է որ Բավիլյան Շարժումը առաջացել է 5րդ դարու վերջին: Հայկական եկեղեցին խիստ պատիժներ է սահմանել, կանոններ մշակել՝ Բավիլյան Շարժումի դեմ:

Հալածանքներից խուսափելու համար Բավիլյանները 7րդ դարու սկզբից կեդրոնացել են Հայաստանի արեւմտյան շրջաններում՝ Բյուզանդյայի եւ Արաբական խալիֆայության սահմանում, եւ օգտվելով երկու տերությունների հակամարտությունից, վաղ քրիստոնեական հավասարության սկզբունքով հիմնել համայնքներ:

7րդ դարում Բավիլյան Շարժումը հասնում է այնպիսի չափերի, որ Բյուզանդական կայսրությունը զինված արշավանք է կազմակերպում նրանց դեմ: 8րդ դարում վերածվել է ժողովրդական ապստամբության, ստեղծվել են կանոնավոր զինված ուժեր: 872ին պարտվում են, բայց մինչ այդ բազմաթիվ հաղթական կռիվներ են մղում կայսերական բանակների դեմ: Բավիլյան Շարժումին մասնակցում էին Հայաստանի եւ հարեւան երկիրների ժողովուրդների ներկայացուցիչները:

Բավիլյան Շարժումին գաղափարախոսության կրոնափիլիսոփայական հիմքը բարու (տեք երկնի) եւ չարի (արարիչ աշխարհի) աստվածների ընդունումն էր: Նյութական աշխարհի ստեղծողը չարի աստվածն է, որը աշխարհը լցրել է չարիքով ու անարդարությամբ: Բարու աստվածը իշխանություն ունի միայն հոգու վրա եւ չարի իշխանության վերացումից հետո իշխելու է աշխարհին:

Հակադրվելով եկեղեցուն իրենց անվանել են «իսկական քրիստոնեաներ»:
Վկայակոչելով վաղ քրիստոնեական սկզբունքները՝ ժխտել են Աստվածամոր, մարգարենների, սրբերի պաշտամունքը, հաղորդությունը, խաչը, մկրտությունը, ծեսերն ու խորհուրդները, եկեղեցական նվիրապետությունը եւ ընդհանրապես եկեղեցին ու վանականությունը: Աստվածաշնչից ընդունել են Նոր Կտակարանը (առանց Պետրոս առաքյալի թղթերի): Կնոջը համարել հասարակության հավասար անդամ, ամուսնությունը իրականացրել են աշխարհիկ ձևով:

Բավլիկյան Շարժման ճնշումից հետո, գաղափարները պահպանվել են Հայաստանում, ծնունդ տվել **Թոնդրակյան Շարժմանը**: Բյուզանդական կայսրությունը Բավլիկյան Շարժման շատ մասնակիցների բռնի գաղթեցրել է Թրակիա եւ Մակեդոնիա, որտեղ նրանց ազդեցությամբ բռնվել է Բոգոմիլների շարժումը: Բավլիկյաններին են կապվում նաեւ արեւմտյան Եվրոպայում սկիզբ առած մի շարք շարժումներ:

Անգլիացի պատմաբան է. Գիբոնի բնորոշմամբ «Բավլիկյան Շարժումը ցնցեց Արեւելքը եւ լուսավորեց Արեւմուտքը»:

Գնոստիկություն

Հին կրոնական շարժում, որի հետեւորդները պնդում են որ ունեն փրկության գաղտնի իմացությունը: Անունը գալիս է հունական գնոսիս բառից, որ նշանակում է գիտնալ:

Այս ուսմունքը փորձել է քրիստոնեական աստվածաբանությունը միացնել Արեւելքի դիցաբանության: Օգտվել է հունական փիլիսոփայությունից, հեթանոս կրոններից, հուդայությունից եւ քրիստոնեությունից:

Առաջացել է հռոմեական կայսրությունում եւ գոյատևել է մ. թ. 1-3 դդ:

Գնոստիկները հավատում են գերագույն Աստուծո, որ հոգի էր, եւ երկրորդ աստուծո՝ որ ստեղծել էր «չար» աշխարհը: Նրանք հավատում էին որ մարդկությունը նյութական է եւ դատապարտված ոչնչացման, բայց Աստված ուղարկել է ոգեկան Քրիստոսը՝ որ փրկի հոգիները:

Տարբերում են «հեթանոսական» եւ «քրիստոնեական» Գնոստիկությունը, որոնց համար ընդհանուրը կատարյալ աստվածությունն է:

Գնոստիկությունը թշնամաբար է վերաբերվել քրիստոնեության մեջ հրեականության տարրերին, մերժել է Հին Կտակարանը: Գնոստիկության հաղթահարել է քրիստոնեությունը, սակայն ավանդույթները շարունակվել են մինչեւ ուշ միջնադար: Գնոստիկական երկերը ուղղափառ քրիստոնեությունը հիմնականում ոչնչացրել է:

1945ին, Վերին Եգիպտոսում հայտնաբերվել են Գնոստիկների 44 ձեռագիր երկեր:

Քրիստոնեության համար Գնոստիկությունը աղանդ է:

Ենթադրվում է որ Գնոստիկությունը հետեւորդներ է ունեցել նաեւ Հայաստանում:

Թեյար Դը Շարդեն, Պյեռ

Ծնած է 1 Մայիս 1881 Ֆրանսա, մահացած՝ 10 Ապրիլ 1955 Նյու Յորք: Հնեաբան, փիլիսոփա, աստվածաբան: Մինանթրոպոսի (պեղածո հնագույն – մոտ, մ. թ. ա. 400,000 տարի – մարդկանց ներկայացուցիչ, որի կմախքի մնացորդները առաջին անգամ հայտնաբերվել է Չինաստանում) հայտնաբերողներից: Նրա ուսմունքի հիմքը քրիստոնեական եղափոխության գաղափարն է: Ըստ նրա, մարդը եղափոխության գագաթնակետն է: Փորձելով վերացնել հավատի եւ գիտելիքների հակադրությունը, նա գտնում էր որ կրոնը պետք է միանա գիտության եւ դառնա առաջընթացի որոշիչ գործոն, գործողության կրոն:

Քարալա

Հրեական, հին խորհրդավոր հավատք եւ կիռարկություններ:

Քարալան սերունդից-սերունդ փոխանցված բերանացի ավանդություն էր:

Քարալան փոխան իմացության զգացումով էր ընդունում Աստված:

Քաբալայի հիմքը պղատոնական սկզբունքներն էին. այսինքն հոգին անմահ է եւ նրա գոյությունը մարմնի մեջ թեւ ղժբախտություն՝ բայց ժամանակավոր է: Քաբալայականները հավատում էին հարության: Հավատում էին նաեւ, թե Աստված է տալիս երկրային հմտությունը: Նրանք պնդում էին, որ Աստվածաշունչը պարունակում է կարեվոր նշաններ, որ եթե ճիշդ մեկնաբանվի կարելի է հայտնաբերել տիեզերքի ստեղծման գաղտնիքը:

Քաբալյի հավատավորները կարծում են, որ ունեն գաղտնի գիտությունը «աստվածային հայտնության», որ Աստված փոխանցել էր մարդկության՝ Մովսեսի միջոցով: Թեւ Մովսեսականությունը Հուդայության հիմքն է, բայց Քաբալան հնարավորություն ու նոր ձեւեր տվեց ուղղակիորեն մոտենալու Աստուծո: Քաբալան հուդայության տվեց կրոնական տարածություն, բայց նրա խորհրդավորությունը շատերի համար նկատվել է վտանգավոր համաստվածություն եւ հերետիկոսություն:

Քաբալան սկսել է ծաղկել Ա. դար մ. թ., Պաղեստին: Քաբալայականները սպասում են հիանալի եւ խորհրդավոր աստվածային գահին՝ «կարքին», որ երազել էր Եզեկիել Մարգարեն: Եզեկիելը գրել է ամենից հին ուսումնասիրությունը կախարդության եւ տիեզերաբանության մասին:

Քաբալայական «Արարչագործության Գիրքը», որ կազմավորվել է 3րդ-6րդ դարերում, բացատրում է Աստված Արարչագործի արարչագործությունը, որ հիմնադրված է աստվածային 10ը թիվերի եւ հրեական 22 տարերի վրա, որոնք միասնաբար սահմանում են «գաղտնի իմաստության 32 ճանապարհները»:

Քաբալայի ուսմունքը ներկայացված է 12րդ դարի «Պայծառության Գիրք»ին մեջ, որ խորը եւ վերջնական ազդեցություն է ունեցել հրեական գաղտնի վարդապետության առաջացման եւ ընդհանրապես Հուդայության վրա: «Պայծառությունը» ոչ միայն բացատրվում է «արարչագործությունը – ստեղծել եւ պահպանել տիեզերքը – այլ հուդայության տալիս է հոգեփոխության այնպիսի ըմբռնում, որ զորացնում է Քաբալայի հիմքերն ու տալիս ավելորդ խորհրդավոր խորհրդապաշտություն»:

Քաբալայականները իրենց միայն հայտնի, գաղտնի ձեւերով փորձում էին բժշկել հիվանդներն ու արագացնել Մեսիայի գալուստը:

Քաբալան Եվրոպա է բերվում 9րդ դարուն:

Երբ հրեաները արտաքսվում են Սպանիայից, Քաբալան արագորեն տարածվում է Եվրոպայի տարբեր մասերում:

Եհովա

Հուդայության գերագույն աստվածը: Սկզբնապես համարվել է Հուդա ցեղի, իսկ հրեական ցեղերի միաձուլումից ու նստակյաց կյանքի անցնելուց հետո (11րդ դար մ. թ. ա.) բոլոր ցեղերի գլխավոր աստվածը: Պատկերվել է առյուծի, ցուլի ու ապա մարդու կերպարանքով: Հուդայական պետության եւ թագավորական իշխանության ծագումը պայմանավորվել է Եհովաի, որպես միակ աստծու եւ «երկնային թագավոր»ի գաղափարի վրա: Դրան համապատասխան Եհովան ահեղ է, վրիժառու, ամենակարող, տիեզերքի արարիչն ու տերը, մարդու, հատկապես հրեա ժողովրդի ճակատագրի կողմորոշողն ու տնորհնողը: Մ. թ. ա. 10րդ դարու կեսերին, Մոդոմոն Իմաստունը Երուսաղեմում կառուցել է Եհովաի տաճարը. միայն այնտեղ է թույլատրվել զոհ մատուցանել Եհովային: Մ. թ. ա. 7րդ դարից ավելի է շեշտվել Եհովաի բացարձակ իշխանությունը, արգելվել է մյուս ցեղերի աստվածների հանդիսավոր պաշտամունքը:

Հինդուականություն

Հինդուականությունը հնդիկ ժողովուրդի կրոնն է:

Հինդուականության սաղմերը առկա են հին արիացիների դիցաբանական պատկերացումներում, մասնավորապես վեդայական կրոնում: Մ. թ. առաջին հազարամյակի առաջին կեսին Բրահմայականությունը Հնդկաստանում վերածվել է Հինդուականության: Հինդուականությունը բազմաստվածային կրոն է, պաշտվում է աստվածային երրորդությունը՝ Բրահման, հատկապես Վիշնան եւ Շիվան: Հինդուականության դավանաբանության համար բնորոշ է հոգու վերամարմնավորումը, ըստ որի մարդու մահից հետո նրա հոգին մարմնավորվում է բույսի, կենդանու կամ մարդու ձևով: Հինդուականությանում սրբացված են լեռներ, գետեր (հատկապես Գանգեսը), բուսականություն (Լոտոսը), կենդանիներ (կապիկը, փիղը, օձը, եւ հատկապես կովը): Հինդուների պաշտամունքի կենտրոնները՝ տաճարներն ու սրբավայրերն են (օրինակ Գանգեսը), հետեւաբար, որպես հավատացյալների ղեկավարներ եւ դաստյարակներ հանդես են գալիս տաճարային քրմությունը, գյուղական բրահմաները (իմաստունները), թափառական վանականները: Հինդուականության սուրբ գիրքերն են Վեդաները:

19րդ դարու երկրորդ կեսին առաջացել են Նոր-հինդուական ընկերություններ (Բրահմա Մամաչ, Արիա Մամաչ, եւ այլն): Նորհինդուական կրոնա-փիլիսոփայական ուսմունքների համաձայն, բոլոր կրոնները իրենց ներքին էության միասնական են եւ տարբերվում լոկ արտաքին, պաշտամունքային կառուցվածքով: Հետեւաբար, հանելով արտաքինը, ոչ էականը, տարբերիչը, ընդհանրական հիմքով կարելի է ստեղծել «նոր», «միասնական», «ընդհանրական» կրոն, որը մաքրված եւ ազատված կլինի որոշակի կրոններին բնորոշ մոլեռանդությունից ու խավարամտությունից:

Շինտոյականություն

Շինտո չինարեն նշանակում է «աստվածների ուղի»:

Ճափոնի ամենատարածված երկու կրոններից մեկը (Բուդդայականության կողքին): Ենթադրվում է, որ սկզբնավարվել է մ. թ. ա. 4րդ դարում, թեեւ որոշ առասպելներ գոյություն ունեն վաղ անցյալում: Շինտոյականությունը առաջացել է բնության ոգեղինացման եւ մահացած՝ նախնիների աստվածացման հնագույն պաշտամունքից: Ըստ Շինտոյականության, մարդը առաջացել է անթիվ ոգիներից, ազդեցիկ աստվածներից մեկից: Մահացածի հոգին որոշ պայմաններում կարող է դառնալ աստված: Շինտոյական եկեղեցական արարողակարգը բաղկացած է չորս տարրերից՝ մաքրագործում, զոհաբերություն, աղոթք եւ հեղում:

Շինտոյականության բնորոշ է հավատը ճափոնական ոգու բացառիկության եւ ճափոնցիների աստվածային միասնության նկատմամբ. մյուս առանձնահատկությունը բնության եւ գեղեցիկի պաշտամունքն է: Նրան խորթ է երկրայինի եւ երկնայինի, մարդու եւ աստուծո խիստ հակադրությունը:

5-6 դարերում Շինտոյական եկեղեցու ղեկավար է դարձել կայսերական տունը, կայսրը հայտարարվել է գերագույն քուրմ: Բուդդայականության մուտքը վերացրել է Շինտոի մենաշնորհը:

Շինտոյականությունը Բուդդայականության հետ միասին վայելել է պետության հովանավորությունը, իսկ Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում ծառայել ազգայնամոլական եւ ռազմատենչ տրամադրություններ բորբոքելուն: Ճափոնիայի պարտությունից հետո Շինտոի ազդեցությունը թուլացել է, այն անջատվել է պետությունից: Սակայն 1950ից սկսյալ, վերելք է ապրում: Հռչակվել է գերկրոն, պարտադիր՝ բոլոր ճափոնցիների համար:

Բուդդայականություն

Աշխարհի երեք գլխավոր կրոններից մին, որը ծագել է Հնդկաստանում (Նեփալ):
Բուդդան ծնել է 563 մ. թ. ա., մահացել՝ 483 մ. թ. ա.:

Դավանանքը շարադրված է «Մբ. գրքում», որ բաժանված է երեք մասի: Այս կրոնի հիմնադիրը՝ Արքայազն Սուտիսադան Գաուտաման, վեց տարի ապրել է մենության մեջ եւ նրան հայտնի է դարձել «չորս ազնիվ ճշմարտությունների» մասին ուսմունքը՝ մարդկանց փրկելու եւ նիրվանային հասնելու ուղիները: Նա քարոզել է այդ ուսմունքը եւ համարվել Բուդդա «Լուսավորված», «պայծառության հասած», իսկ մահվանից հետո աստվածացել:

Բուդդայականությունը տարածված է Ծայրագույն Արեւելքի երկիրներում, ունի 500 միլիոն հետեւորդ:

Բուդդայականության յուրահատկությունը նրա գործնական սկզբունքներն են: Այն մերժում է կրոնի արտաքին ձեւերը, վերացական մտածողությունը եւ դասակարգային սահմանափակումները եւ որպէս կենտրոնական հարց առաջ է քշում անհատի կեցությունը եւ «փրկությունը»: Այս ուսմունքի համաձայն, կյանքը տառապանք է եւ դրա պատճառը մարդկանց ցանկություններն ու կրքերն են: Տառապանքներից կարելի է փրկվել՝ խեղդելով ցանկություններն ու կիրքը, հետեւելով նիրվանա տանող փրկության ուղիին: Մահը ողբերգություն չէ եւ ոչ ալ ազատություն, այլ փոխարկումն է նոր կյանքի, եւ հետեւաբար նոր տառապանքների: Նոր ծնունդը կապված է նախորդի հետ: Ուստի, յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում ոչ միայն իր, այլ՝ իր նախորդի արարքի համար:

Բուդդայականության բարոյականության հիմնական պահանջը ներքին «ինքնակատարելագործումն» ու «ինքնախորասուզումն» է, հոգեկան եւ մարմնական զանազան պահանջների արհամարհումն է ու «խեղդումը», որի շնորհիվ մի շարք վերածնունդների ընթացքում կարելի է հասնել հավիտենական ու բացարձակ անդորրի, երանելի վիճակի, նիրվանային եւ միանալ Բուդդային:

Ի տարբերություն Մահմեդականության ու Քրիստոնեության, Բուդդայականությունում չկա արարիչ աստուծո եւ փրկիչի գաղափարը: Աստված որպէս բարձրագույն էություն, հավասար է նիրվանային հասած մարդկանց՝ բուդդաներին:

1950ին, Բուդդայականների միջազգային հավաքին (Սրի Լանքա) ստեղծվել է Բուդդայականների համաշխարհային եղբայրություն:

Բոգոմիլներ

Առաջացել է քահանա Բոգոմիլի անունից:

Բոգոմիլ շարժումը 8րդ դարում տարածվել է բյուզանդիայում: Բոգոմիլները մասնակցել են Բյուզանդյայի դեմ բուլղար ժողովուրդի ապստամբություններին (1040, 1072):

Բոգոմիլները կոչ էին անում չինագանդիլ պետական իշխանության եւ պայքարիլ քրիստոնեական եկեղեցու ճնշման դեմ: Բոգոմիլների ուսմունքի հիմքը երկվությունն էր, բարու եւ չարի պայքարի գաղափարը:

Ելնելով մեդսալից աշխարհի պատկերացումից՝ Բոգոմիլները մերժել են սեփականությունը, եկեղեցական նվիրապետությունը, ծեսերը, խաչը, պատկերապաշտությունը եւ ամուսնությունը, թեեւ քիչերն են իրագործել այդ գաղափարները: Նրանք ընդունել են միայն Ավետարանը, մի մասը՝ Նոր Կտակարանը:

Ուժեղ հալածանքների պատճառով շարժումը բաժանվել է մանր աղանդների եւ կորցրել ինքնությունը: Գոյատեւել է մինչեւ 17րդ դար: Բոգոմիլները կրել են Հայաստանում եւ

Բյուզանդիայում հանդես եկած Բավլիկյանների ազդեցությունը եւ իրենց հերթին ազդել Արեւմտյան Եվրոպայում առաջ եկած մի շարք աղանդների վրա:

Ատլանտիս

Ըստ հին հունական ավանդության, մեծ կղզի Ատլանտյան Ովկյանտում, բնակեցված քաղաքակիրթ ցեղով՝ ատլանտներով: Ատլանտներն իբր զավթողական պատերազմներ էին մղում Եվրոպայում ու Աֆրիկեում, եւ միայն աթենացիներն էին որ կարողացան նրանց դեմն առնել: Ատլանտների մասին միակ տեղեկությունը մեզի է հասել Պղատոնից: Ըստ նրա, Ատլանտիսը գտնվել է Զիբրալթարից արեւմուտք եւ անհայտացել է 10-12 հազար տարի առաջ՝ երկրաշարժի հետեւանքով: Բազմաթիվ անգամ փորձեր են արվել երկրաբանական եւ պատմական փաստերի հիման վրա մեկնաբանել Ատլանտիսի վերաբերյալ եղած ավանդությունը, ներկայացվել են զանազան ենթադրություններ, սակայն դրանցից ոչ մեկը գիտականորեն չի հիմնավորվել:

Եհովայի Վկաներ

Աղանդ. հիմնադրել է Չարլզ Թազե Ռասըլը 1872ին՝ Միացյալ Նահանգներում: Այսօր տարածվել է աշխարհի գրեթե բոլոր երկիրներում:

Եհովայի Վկաներ անունը որդեգրել է Ռասըլի հաջորդը՝ Ժոզեֆ Ֆրանքլին Ռուտըրֆորդը (1869-1942), 1931ին:

Նրանք հավատում են որ **Եհովան** ճշմարիտ Աստվածն է, իսկ **Վկաները**՝ Աստուծո ընտրյալ հետեւորդները:

Ռուտըրֆորդը, Ռասըլի ժողովրդավարական սկզբունքները փոխարինում է աստվածապետական համակարգով:

Ռուտըրֆորդի քաղաքականությունը շարունակում է նրա հաջորդը՝ Նատան Հոմըր Նորը, որ հիմնում է Աստվածաշնչի Հսկող Աշտարակ Դպրոցը (Նյու Յորք), ուր պատրաստվում են քարոզիչներ եւ ղեկավարներ: Նորի տնտրիչությամբ մի խումբ Վկաներ նոր ձեւով են թարգմանում Մր. գիրքը:

Վկաները որեւէ կապ չունեն մյուս քրիստոնեական հարանվանությունների հետ եւ հակառակ են պետությունների: Նրանք աշխարհի ղեկավարությունն ու քաղաքական կուսակցությունները համարում են սատանայի դաշնակիցներ: Նրանք չեն ողջունում որեւէ երկրի դրոշակ, մերժում են զինվորական ծառայությունը եւ չեն մասնակցում ընտրություններին: Նրանց համար մյուս հարանվանությունները գործադրում են սատանայի կամքը. այդ պատճառով՝ քահանա, եկեղեցի, ուխտ, եւայլն, բառերը չեն օգտագործում:

Եհովայի Վկաների նպատակն է հաստատել Աստուծո թագավորությունը: Նրանք կարծում են որ Աստուծո պետությունը պիտի իրականանա Արմազեդդոնից հետո: Ընդունում են Դանիել մարգարեն եւ Հայտնության Գիրքը որպես աշխարհի գործերի Աստուծո ժամանակացույց եւ մարդու ճակատագրի որոշիչ:

Ըստ Հայտնության հաշվարկների, Ռասըլը հաստատել է թե 1874ը պիտի լինի Քրիստոսի «անտեսանելի վերադարձի» տարին, իսկ 1914ին՝ Քրիստոսի երկրորդ գալուստը ու վերջ «հեթանոսական ժամանակների»:

Նրանց համար Քրիստոսը Աստուծո ներկայացուցիչն է. Նա եկել է հաստատելու Աստուծո պետությունը եւ վերահաշտեցնի մարդը՝ աստուծո հետ: Մերժում են դժոխքի գաղափարը, իսկ հավիտենական կյանքը՝ անխուսափելի: Մահը՝ նրանց համար միայն շիջում է:

Վկաները Գերմանայում եւ առանցքի երկիրներում ենթարկվել են հալածանքի:
Ընդհանրապես արգիլված է նրանց գործունեությունը՝ շատ երկրներում:

Վկաների հավաքատեղին կոչում են **Թագավորության Սրահ**: Մկրտվում են՝ սուգավելով ջրի մեջ, չեն ընդունում ամուսնալուծումը ի բացառյալ խարդախության (շնության) դեպքում, դեմ են արյուն փոխնցելուն:

Վկաները պարտավոր են շաբաթական հինգ ժամ մասնակցել Թագավորական Սրահի հավաքներին եւ երկար ժամեր – որքան հնարավոր է – տրամադրում դռների առաջ քարոզելուն:

Յուրաքանչյուր Թագավորական Սրահ ունի իր շրջանը, իսկ յուրաքանչյուր Վկա՝ իր շրջանակը – քարոզելու եւ գիրք ու գրականություն բաժանելու:

Հրատարակում են կիսամյա **Հսկող Աշտարակ** հանդեսը եւ նրա հավելված **Արթնացիքը**, որ 1980ին տպագրվում էր 10,000,000 օրինակ՝ 80 լեզուներով:

Արմակեդոն

Նշվել է Նոր Կտակարանի Հայտնության մեջ:

Պաղեստինի մեջ գտնվող ռազմական նշանակություն ունեցող տեղ, ուր երկրային թագավորները սատանայի ղեկավարությամբ պիտի պատերազմեն Աստուծո գորքերի դեմ՝ աշխարհի պատմության վերջավորության:

Անդոն Լա Վեյ

Հիմնադրել է Սատանայի Եկեղեցին 30 Ապրիլ 1966ին՝ Միացյալ Նահանգներում:

Լա Վեյը եղել է առյուծ ընտելացնող եւ կրկեսի նվագաձու: Մովորել է կախարդություն եւ վերածել կրոնի:

Լա Վեյի հեռատեսիլային ելույթները հետաքրքրել են որոշ անհատների, որոնք միացել էին Եկեղեցիին բայց նրանց թիվը երբեք մի քանի հազարը չի անցել:

Լա Վեյի Սան Ֆրանսիսքոյի տան մեջ կատարած գունավոր ծեսերը – նա իր տունը ներկել էր սեւ – լցնում էին լրատու միջոցների առաջին էջերը:

Լա Վեյը իր ուսմունքն ու ծեսերը ներկայացրել է Սատանայական Մբ. գրքին մեջ (1969):

Սատանայի Եկեղեցին սատանան չի պաշտում եւ չի ընդունում քրիստոնեական «չար» բացատրությունը, ոչ էլ սատանայի գոյությունը: Լա Վեյի համար Դժոխքի Իշխանը խորհուրդ է: Սատանան՝ ինքնատիրապետության, ըմբոստության, պետությունը օգտագործողների դեմ, գոյության շարունակության եւ իմաստության խորհուրդ է:

Լա Վեյի իմաստությունը անսխալական պետք է լինի:

Ծեսերը հոգեբանական թատերախաղեր են, որոնց նպատակն է զարգացնել Եսը եւ անտեսել իսեղճ-տկար կյանքը:

Ծեսերում կատարվում է **Մեւ Պատարագ**, որին մասնակցում է մերկ էգ՝ որպես բազին:

Այսօր Սատանայի Եկեղեցին քաջքշում է իր գոյությունը:

Լա Վեյի մահից հետո (1997) Եկեղեցին ղեկավարում է Բլանշ Բարտոնը:

